

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԺԵՆՅԱ ԱՐԱՅԻԿԻ**

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ  
ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԺԲ.00.05 մասնագիտությամբ – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,  
քրեակատարողական իրավունք»**

իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Ա. Հ. ԳԱԲՈՒԶՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ 2017**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                         |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....                                                                                                                       | 3   |
| ԳԼՈՒԽ 1 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԸ ՈՐՊԵՍ                                                                                             |     |
| ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ.....                                                                               | 13  |
| §1. Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտի ծագումն ու զարգացումը.....                                                                 | 13  |
| §2. Հանցագործությունների ռեցիդիվի տեղը և դերը հանցագործությունների բազմակիության համակարգում .....                                      | 22  |
| §3. Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը և հատկանիշները .....                                                                   | 36  |
| §4. Հանցագործությունների ռեցիդիվի տեսակները.....                                                                                        | 59  |
| ԳԼՈՒԽ 2 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԻԺ                                                                                     |     |
| ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....                                                                                                    | 70  |
| §1. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման առանձնահատկությունները հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս..... | 70  |
| §2. Հանցագործությունների ռեցիդիվը՝ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք.....                                          | 86  |
| ԳԼՈՒԽ 3 ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ                                                                                 |     |
| ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ .....                                                                                             | 103 |
| §1. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի ընդհանուր բնութագիրը և կիրառման առանձնահատկությունները .....   | 103 |
| §2. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի հարաբերակցությունը պատիժ նշանակելու այլ կանոնների հետ.....     | 128 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                                                                                 | 154 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....                                                              | 165 |



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Հանցագործությունների ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության առավել վտանգավոր տեսակն է, որը վկայում է ոչ միայն յուրաքանչյուր հաջորդ հանցագործության, այլև հանցավորի անձի բարձր վտանգավորության մասին: Մասնավորապես կրկնվող հանցագործությունները նպաստում են անձի հանցավոր մասնագիտացմանը, անհրաժեշտ տեխնիկայի յուրացմանը և հետագայում հանցավոր գործունեությունն ավելի դյուրին ու արդյունավետ շարունակելուն: Միևնույն ժամանակ ռեցիդիվը անձի կայուն հակասոցիալական դիրքորոշման, նրա մեջ հանցավոր կողմնորոշումների և գաղափարների արմատավորման ցուցանիշ է: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվը բավականին տարածված երևույթ է, որին հաճախ առնչվում է իրավակիրառ պրակտիկան: Ռեցիդիվային հանցագործությունների ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը «առաջատար դիրքեր» է զբաղեցնում Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների շարքում: Միջին հաշվով ռեցիդիվային հանցավորության մակարդակը կազմում է ընդհանուր հանցագործությունների քառորդ մասը՝ զիջելով միայն Բելառուսի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը:

Նշված հանգամանքներն ավելի են կարևորում հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ հստակ և որոշակիության չափանիշին բավարարող օրենսդրական կարգավորումների նախատեսումը:

Վերջին ժամանակահատվածում կատարված բազմաթիվ փոփոխությունները, հատկապես հանցագործությունների կրկնակիության վերացումը, պայմանավորեցին ռեցիդիվի ինստիտուտի նորովի ընկալումը, ինչն օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձնում ռեցիդիվի բնույթի և էության, պատիժը խստացնելու հիմքերի հստակ սահմանումը: Մասնավորապես ռեցիդիվի բնույթի վերաբերյալ առկա ոչ միանշանակ պատկերացումները օրենսդրական միանգամայն տարբերվող կարգավորումներ նախատեսելու հիմք են եղել: Այսպես՝ եթե ՀԽՍՀ քրեական օրենսգիրքը ռեցիդիվը կապում էր հանցավորի անձի հետ և դրանով պայմանավորում

պատասխանատվության ու պատժի խստացումը, ապա ՀՀ՝ 2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքով առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտը վերացվեց, և ռեցիդիվը դասվեց հանցագործությունների բազմակիության տեսակների թվին: Վերոնշյալով փորձ կատարվեց ռեցիդիվի վտանգավորությունը բացատրելու հանցավոր արարքների կրկնությամբ՝ անտեսելով և երկրորդ պլան մղելով հանցավորի անձը: Նման լուծումը, իհարկե, արհեստական է և չի բխում ռեցիդիվի բուն էությունից:

Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների ռեցիդիվի և դրա տեսակների որոշումը բավականին խնդրահարույց է, քանի որ բացակայում են դրանց տարանջատման հիմքում ընկած հստակ չափանիշները: Մասնավորապես դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ առավել հաճախ դատական սխալները թույլ են տրվում ռեցիդիվի տեսակները որոշելիս: Ուստի հանցագործությունների ռեցիդիվի քրեաիրավական հասկացության, դրա հիմնական հատկանիշների, ինչպես նաև ռեցիդիվը բացառող հանգամանքների հստակ կանոնակարգման, ռեցիդիվի տեսակների ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտությունն արդիական է դարձնում համակարգված հետազոտության իրականացումը:

Պատիժ նշանակելու հարաբերությունների օրենսդրական մանրամասն կանոնակարգումը, ռեցիդիվի դեպքում համաչափ պատժի նշանակման ապահովումը, պատիժ նշանակելու այլ կանոնների հետ հարաբերակցության կարգի որոշակիացումը հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտի կարևորագույն հիմնահարցերից են: Անհրաժեշտ է նաև փաստել, որ կրկնակիության ինստիտուտի վերացման պայմաններում քրեական օրենսդրությամբ կրկնահանցագործների դեմ պայքարի միակ գործիքը ներկայումս հանցագործությունների ռեցիդիվն է, հետևաբար այս ոլորտում ճիշտ պատժողական քաղաքականության իրականացումը առանցքային կարևորություն է ձեռք բերում: Այսպես՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու գործող կարգը նախատեսում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի նվազագույն չափի պարտադիր խստացման պահանջ, որի գործադրումը, սակայն,

շատ հաճախ պատժի խստացում չի ապահովում: Հետևաբար անհրաժեշտ է նախատեսել պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որը կապահովի հանրության համար բարձր վտանգավորություն ներկայացնող անձանց նկատմամբ համաչափ պատժի նշանակում:

Կարևոր է նաև հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի և պատիժ նշանակելու այլ կանոնների հարաբերակցության հարցի հստակեցումը, քանի որ կանոնակարգումների բացակայությունը իրավակիրառ պրակտիկայում մի շարք խնդիրներ է առաջացնում: Մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումների շրջանակներում անդրադարձել է ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցության հարցին և արտահայտել իրավական դիրքորոշում, որն էականորեն փոխեց ձևավորված պրակտիկան՝ որոշ դեպքերում հանգեցնելով ռեցիդիվի վերաբերյալ նորմը չկիրառելուն: Հետագայում նշված դիրքորոշումը թեև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից զարգացվեց և որոշակի փոփոխությունների ենթարկվեց, այնուամենայնիվ շատ հարցեր մնացին չլուծված:

Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը և դրա դեպքում պատիժ նշանակելու կանոնը էական բովանդակային փոփոխությունների են ենթարկվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծում առկա օրենսդրական նոր կարգավորումները գիտական քննարկման առարկա դարձնելու, գործող օրենսդրական կարգավորման հետ համեմատաբարական վերլուծության ենթարկելու, ինչպես նաև Նախագիծը սահմանված կարգավորումները կատարելագործելու անհրաժեշտությունը ևս անչափ կարևոր են: Վերոգրյալը վկայում է սույն հետազոտության թեմայի արդիականության մասին:

#### **Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:**

Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը մշտապես գտնվել է քրեագետների ուշադրության կենտրոնում, հետազոտվել ինչպես նախահեղափոխական, այնպես էլ խորհրդային և ժամանակակից տեսաբանների գիտական աշխատություններում, իսկ հետազոտության թեմային վերաբերող առանձին հարցեր դարձել են գիտական ատենախոսությունների ուսումնասիրության առարկա: Այդ ուսումնասիրությունների

շարքում պետք է հատկապես առանձնացնել Ա. Պ. Ղուկասյանի, Ն. Ս. Տազանցևի, Վ. Պ. Մալկովի, Բ. Վ. Վոլժենկինի, Ն. Ն. Կորոտկիխի, Ի. Բ. Աղակի և այլոց աշխատանքները:

Չնայած վերոնշյալին՝ հարկ է նկատել, որ հայրենական քրեական իրավունքում հանցագործությունների ռեցիդիվի քրեաիրավական հասկացության և պատիժ նշանակելու հիմնախնդիրները լիարժեք հետազոտված չեն:

**Հետազոտության օբյեկտը:** Հետազոտության օբյեկտը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու առնչությամբ ծագող հարաբերություններն են:

**Հետազոտության առարկան:** Հետազոտության առարկան հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտի կարգավորմանն ուղղված իրավական նորմերն են, Նախագծի կարգավորումները և դատական պրակտիկան:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը հանցագործությունների ռեցիդիվի հասկացության և պատիժ նշանակելու հարցերի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա միջոցով ռեցիդիվի ինստիտուտի օրենսդրական կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Այդ նպատակին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- հստակեցնել հանցագործությունների ռեցիդիվի՝ որպես հանցագործությունների բազմակիության տեսակի, իրավական բնույթն ու էությունը, ինչպես նաև այն գնահատելու համար հիմք հանդիսացող հիմնական հատկանիշները,

- հստակ սահմանել հանցագործությունների ռեցիդիվը բացառող իրավիճակները, վեր հանել հանցագործությունների ռեցիդիվի տեսակների հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները համապատասխան դատական պրակտիկայի ուսումնասիրության միջոցով,

- վեր հանել հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելը կարգավորող նորմի գործնական կիրառության, ինչպես նաև պատիժ նշանակելու այլ հատուկ կանոնների հարաբերակցության ընթացքում առաջացող խնդիրները ինչպես տեսական գրականության, այնպես էլ ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրության միջոցով,

- համեմատաիրավական վերլուծության ենթարկել հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ գործող օրենսդրության և Նախագծի նորմերը, ներկայացնել առաջարկություններ Նախագիծն առավել կատարելագործելու ակնկալիքով,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել համապատասխան օրենսդրական առաջարկություններ:

**Հետազոտության տեսական հիմքը:** Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է հանցագործությունների ռեցիդիվին նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Ա. Պ. Ղուկասյանի, Ն. Ս. Տազանցևի, Վ. Պ. Մալկովի, Բ. Վ. Վոլժենկինի, Ն. Ն. Կորոտկիխի, Ի. Բ. Աղակի, Պ. Ֆ. Գրիշանինի, Ի. Ն. Սամիլինայի, Լ. Ս. Տոսակովայի, Ի. Գ. Վոզժաննիկովայի, Լ. Վ. Ինոգամովա-Հեգայի, Ա. Վ. Բրիլլիանտովի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:** Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտին առնչվող՝ ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում կիրառվել են համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ անալիզի և սինթեզի, մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները, ինչպես նաև իրականացվել է դատական ակտերի վերլուծություն:

**Հետազոտության գիտական նորույթը:** Թեև հանցագործությունների ռեցիդիվը հետազոտվել է մի շարք քրեագետների աշխատություններում, այնուամենայնիվ հայրենական իրավագիտության մեջ բացակայում են ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված համակարգված աշխատանքները: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է կատարվել իրականացնելու ռեցիդիվի քրեաիրավական հասկացության և հատկանիշների, պատիժ նշանակելու հարցերի տեսական ու գործնական հիմնախնդիրների բազմակողմանի և

համընդգրկուն վերլուծություն: Մասնավորապես վերլուծությունն իրականացվել է՝ հիմնվելով ՀՀ քրեական օրենսգրքի և նոր քրեական օրենսգրքի նախագծի, մի շարք արտասահմանյան պետությունների (Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա, Բուլղարիա, Ռումինիա, Լեհաստան և այլն) քրեական օրենսգրքերի համապատասխան դրույթների համեմատադրական վերլուծության, տեսական աղբյուրների, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև ստորադաս դատարանների դատական ակտերի համակարգային ուսումնասիրության վրա: Հետազոտվել են հայրենական իրավունքում ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի խստացման հիմքերը, պատիժ նշանակելու կանոնի կիրառման արդյունքում առաջացող հիմնական խնդիրները, պատիժ նշանակելու այլ կանոնների հետ հարաբերակցության հարցերը և այլն: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներում:

### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

1. Հանցագործությունների ռեցիդիվի տեսակների դասակարգումը խրթին է և դրա հիմքում որևէ հստակ չափանիշ ընկած չէ, ինչը քննարկվող նորմի կիրառման առումով բազմաթիվ խնդիրներ է առաջացնում, հանգեցնում դատական սխալների՝ խոչընդոտելով միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը: Ուստի իրավական որոշակիության չափանիշին համահունչ կարգավորում նախատեսելու, քրեական օրենսդրությունն ավելորդ ծանրաբեռնումից զերծ պահելու, դատական պրակտիկայում հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ նորմի սխալ կիրառումը նվազագույնի հասցնելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է հրաժարվել հանցագործությունների ռեցիդիվը տեսակների դասակարգելուց:

2. Հաշվի առնելով, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի գործադրումն էականորեն խստացնում է անձի նկատմամբ նշանակավոր պատիժը՝ անհրաժեշտ է այն կիրառել ոչ թե ռեցիդիվի

առկայության ցանկացած դեպքում, այլ միայն այն պարագայում, երբ անձը նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ է կրել կամ կրում և նոր արարքի համար դարձյալ դատապարտվում է ազատազրկման ձևով պատժի: Վերոնշյալը բխում է քննարկվող ինստիտուտի բուն էությունից, քանի որ վկայում է անձի առավել բարձր վտանգավորության և նրա վարքագծի կայուն հակասոցիալական ուղղվածության մասին: Հետևաբար եթե կիրառման ենթակա հոդվածի սանկցիայով ազատազրկում պատժատեսակը նախատեսված չէ, ապա հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի գործադրման անհրաժեշտությունը բացակայում է: Տվյալ դեպքում ռեցիդիվը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ի կարգով պետք է դիտել որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

3. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսված կանոնի պահանջը կատարելը ոչ միշտ է ապահովում պատժի խստացում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ կարող է հանգեցնել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն չափից մեղմ պատժի ստացման: Ուստի ռեցիդիվի դեպքում անհրաժեշտ է սահմանել պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որը բոլոր դեպքերում կապահովի անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցի խստացումը: Մասնավորապես ներկայումս գործող՝ առավելագույն պատժաչափից որոշակի հարաբերակցությամբ պատիժը խստացնելու կարգավորման փոխարեն անհրաժեշտ է անմիջականորեն բարձրացնել հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժի նվազագույն ժամկետը: Ընդ որում, նվազագույն պատժաչափի մեկ երրորդով խստացումն ամենաօպտիմալ լուծումն է, որը մի կողմից՝ չի լինի անարդարացի ու չափազանց խիստ, մյուս կողմից՝ կապահովի պատժի համաչափ ավելացում: Միևնույն ժամանակ, եթե ազատազրկման նվազագույն ժամկետի մեկ երրորդով ավելացումը հանգեցնի առավելագույն ժամկետի գերազանցման, ապա պետք է նշանակվի քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով սահմանված ազատազրկում պատժի առավելագույն ժամկետը:

4. Կրկնակիության ինստիտուտի վերացման պայմաններում պրոֆեսիոնալ հանցագործների նկատմամբ պատժողական քաղաքականությունն էականորեն թուլացել է, իսկ հանցագործությունների ռեցիդիվը գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված միակ նորմն է, որն ուղղված է նրանց դեմ արդյունավետ պայքար մղելուն: Նման պայմաններում ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի խստացման հարցը դարձել է անհրաժեշտություն, ինչը չի կարող ապահովվել միայն պատժի նվազագույն սահմանի ավելացմամբ. անհրաժեշտ է նախատեսել նաև քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժատեսակի առավելագույն ժամկետը գերազանցելու հնարավորություն՝ հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նախկին հանցագործության, ինչպես նաև նոր կատարվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը: Մասնավորապես անհրաժեշտ է սահմանել, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք կատարելու դեպքում տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժ պետք է դիտվի այն ժամկետը, որը գերազանցում է հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավել, քան քսանհինգ տարին:

5. Հանցագործությունների ռեցիդիվի և պատիժ նշանակելու այլ հատուկ կանոնների միաժամանակյա առկայության դեպքում դրանց միջև մրցակցությունը բացակայում է, քանի որ պատիժ նշանակելու յուրաքանչյուր նորմ տարբեր տեսանկյունից է կարգավորում պատիժ նշանակելու հարաբերությունները, բովանդակային առումով մյուսների հետ չի համընկնում, իսկ դրանց գործադրման հիմքում ընկած հանգամանքները տարբեր են, ուստիև դրանցից յուրաքանչյուրը ենթակա է ինքնուրույն կիրառման, քանի դեռ օրենքով այլ կարգավորում չի նախատեսվել: Վերոգրյալի հաշվառմամբ՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի և պատիժ նշանակելու այլ հատուկ կանոնների հարաբերակցության հարցում նախընտրելի է սահմանել այդ կանոնների հաջորդական կիրառման մեխանիզմը՝ առաջնությունը տալով հանցագործությունների ռեցիդիվի



դեպքում պատիժ նշանակելու նորմին, այն է՝ դրա կիրառմամբ որոշել տվյալ հանցագործության համար օրենքով սահմանված պատիժը, այնուհետև միայն կիրառել պատիժ նշանակելու մյուս կանոնը:

6. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառումը արգելք չէ անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 64-ի կարգով օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար, քանի որ նշված նորմերը միմյանց հետ չեն մրցակցում ու մեկը մյուսին չեն բացառում, ուստի կարող են միաժամանակ կիրառվել: Հետևաբար հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում դատարանը նախ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի կանոններով պետք է որոշի օրենքով նախատեսված պատիժը, այնուհետև, եթե գտնի, որ առկա են բացառիկ հանգամանքներ, նշանակի օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ: Այսինքն՝ տվյալ դեպքում օրենքով նախատեսված պատիժ պետք է համարել ռեցիդիվի կանոնի կիրառման արդյունքում ստացվող պատիժը:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական քրեական իրավունքում առաջին անգամ կատարվել է հանցագործությունների ռեցիդիվի հասկացության և պատիժ նշանակելու գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և թեմային նվիրված ուսումնական դասընթացներում: Բացի այդ, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտակար լինել ինչպես իրավաստեղծ գործունեության մեջ, այնպես էլ դատական պրակտիկայի կատարելագործման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական

հաղորդումների շրջանակներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ բաղկացած ութ պարագրաֆից, եզրակացություններից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

## ԳԼՈՒԽ 1

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ

### §1. Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտի ծագումն ու զարգացումը

Բազմակիության ինստիտուտը տեսաբանների և իրավակիրառողների ուշադրության կենտրոնում է գտնվում բավականին երկար ժամանակ: Բազմակիության վերաբերյալ ժամանակակից նորմերն ունեն մոտ երկդարյա պատմություն, թեպետ միևնույն անձի կողմից բազմակի հանցավոր վարքագիծ դրսևորելու դեպքում խիստ պատիժ նախատեսվում էր դեռևս 14-րդ դարից սկսած:

Կարծում ենք՝ ցանկացած ինստիտուտի էությունը, զարգացումները և կարգավորման տրամաբանությունը ճիշտ ընկալելու, առավելություններն ու թերությունները վերհանելու, դրա կատարելագործման ուղղությամբ արդյունավետ առաջարկություններ ներկայացնելու լավագույն ուղին այդ ինստիտուտի պատմական ձևավորման և զարգացման ընթացքն ուսումնասիրելն է: Թերևս ճիշտ է նշել Ա. Ֆ. Կիստյակովսկին, որ միայն պատմությունը կարող է տալ քրեական իրավունքի ինչպես ներկայիս, այնպես էլ դրան նախորդող ժամանակահատվածի վիճակի և պատճառների վերաբերյալ ճշմարտացի բացատրություն<sup>1</sup>:

Բազմակիության ինստիտուտի ու ռեցիդիվի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսդրության մեջ առկա ժամանակակից նորմերը հիմնականում կրում են ռուսական իրավունքի ազդեցությունը, հետևաբար նպատակահարմար է ուսումնասիրել ռուսական իրավական դոկտրինայում քննարկվող ինստիտուտի ձևավորման և զարգացման պատմական ընթացքը, ինչպես նաև դրա ազդեցությունն ու դրսևորման առանձնահատկությունները հայկական իրավական համակարգում:

Հաշվի առնելով բազմակիության ինստիտուտի օրենսդրական զարգացման առանձնահատկությունները՝ քրեական իրավունքի գիտության մեջ տարբերակվում են դրա ձևավորման հետևյալ փուլերը՝

<sup>1</sup> Տե՛ս **Кистьяковский А. Ф.** Элементарный учебник общего уголовного права с подробным изложением начал русского уголовного законодательства. Часть общая, Киев, 1882, էջ 10:

- քրեական օրենսդրություն, որը չէր պարունակում հանցագործությունների բազմակիության վերաբերյալ որևէ հիշատակում (911-1397 թթ.),

- օրենսդրություն, որում բազմակիության դրսևորումներն ի հայտ եկան միայն առանձին հանցակազմերի շրջանակներում և բնութագրվում էին միասնական տերմինաբանության բացակայությամբ (1397 թ. մինչև 18-րդ դար),

- օրենսդրություն, որում արդեն իսկ նկատվում էին ընդհանուր մասի նորմերի ընդհանրացման և պատիժ նշանակելու գործընթացում հանցագործությունների բազմակիության կանոնների առանձնացման միտումներ՝ հստակ տերմինաբանության սահմանմամբ (19-20-րդ դդ.)<sup>2</sup>:

Այսպիսով, մինչև 1397 թ. առկա իրավական գրավոր աղբյուրները բազմակիության, բնականաբար նաև ռեցիդիվի վերաբերյալ որևէ հիշատակում չէին պարունակում: 1397 թ. ընդունված «Դվինյան կանոնադրության» հոդված 5-ում խիստ պատասխանատվություն էր սահմանվում հանցագործությունների կրկնության համար, իսկ «Պսկովյան դատական կանոնադրության» (մոտավորապես 1462-1463 թթ.) հոդված 8-ում խոսվում էր գողությունների կրկնության մասին:

Հաջորդ օրենսդրական ակտը 1497 թ. ընդունված «Դատաստանագիրքն» էր, որում խոսվում էր նախքան դատապարտվելը մի քանի նույնական հանցավոր արարքների կատարման մասին (հոդված 13): Վ. Պ. Կոնյախինի կարծիքով նշված դրույթը կրկնակիության վերաբերյալ առաջին հիշատակումն էր<sup>3</sup>, մինչդեռ Ն. Ս. Տազանցևն այն դիտում էր որպես հանցագործությունների համակցության բնութագրիչ<sup>4</sup>: Դատաստանագիրքում արտացոլված էր նաև դատապարտման հետ կապված նույնաբնույթ հանցանքների կրկնակիության գաղափարը (հոդված 11)<sup>5</sup>:

1550 և 1589 թթ. դատաստանագրքերում, 1606-1607 թթ. դատական ժողովածուներում բազմակիության կարգավորման մասով էական փոփոխություններ

<sup>2</sup> Տե՛ս **Шкредова Э. Г.** Формирование норм о множественности преступлений в рамках некодифицированного уголовного законодательства России (X-XVIII вв.), Журнал Вестник, ОГУ N3/МАРТ, Оренбург, 2006, էջ 185:

<sup>3</sup> Տե՛ս **Коняхин В. П.** Теоретические основы построения Общей части российского уголовного права, СПб., изд.-во «Юридический центр Пресс», 2002, էջ 23:

<sup>4</sup> Տե՛ս **Шкредова Э. Г.**, նշված աշխատությունը, էջ 186:

<sup>5</sup> Տե՛ս **Титов Ю. П.** Хрестоматия по истории государства и права России. Учеб. пособие, М., «ПРОСПЕКТ» 1997, էջ 37:

չկատարվեցին: 1649 թ. ընդունված «Օրենքների ժողովածուն» նույնպես խիստ պատասխանատվություն էր նախատեսում դատապարտման հետ կապված նույնաբնույթ հանցագործությունների կրկնության համար: Այսպես՝ Ն. Ս. Տագանցը նշում էր, որ Ժողովածուն նախատեսում էր որոշակի հանցագործություններ (գողություն, ավազակություն, ծառայության մեջ զանցանքներ և այլն), որոնց դեպքում կրկնակիությունը դիտվում էր որպես հանցավորի առավել վտանգավորության կամ նրա առավել պարսավելիության ցուցանիշ:

Քրեական օրենսդրության զարգացման քննարկվող շրջափուլի վերջին իրավական ակտը 1715 թ. ընդունված «Ռազմական արտիկուլն» էր, որով թեպետ կատարելագործվեցին պատիժը ծանրացնող հանգամանքների, այդ թվում նաև՝ հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ նորմերը, այնուամենայնիվ էական փոփոխություններ չկատարվեցին<sup>6</sup>:

Այսպիսով, քննարկվող ժամանակահատվածում դրվեցին բազմակիության և դրա առանձին տեսակների օրենսդրական կարգավորման հիմքերը, որոնք, սակայն, չափազանց անկատար էին: Ընդ որում, օրենսդրության շրջանակներում հիմնականում խոսվում էր գնում նույնաբնույթ հանցանքների կրկնակիության մասին:

19-րդ դարի սկզբներին՝ 1832 և 1846 թթ. ընդունված իրավական ակտերով ի հայտ եկան բազմակիության ինստիտուտի և, մասնավորապես, ռեցիդիվի վերաբերյալ համեմատաբար առավել ամբողջական կարգավորումներ: Այսպես՝ 1832 թ. ընդունված «Օրենքների ժողովածուում» առկա էր դրույթ, ըստ որի՝ միևնույն հանցագործության կրկնությունը կրկնապատում էր հանցագործի մեղքը (հոդված 124): Վերոնշյալ ժողովածուի՝ 1842 թ. խմբագրությամբ տարբերակում հանցագործության կրկնություն էր դիտվում հանցավորի՝ հանցագործության համար պատժված լինելու պայմաններում նույն արարքը 2-րդ կամ 3-րդ անգամ կատարելը: «Քրեական և ուղղիչ պատիժների մասին» 1846 թ. կանոններով որպես հանցագործությունների կրկնակիության տեսակ առանձնացվում էր ռեցիդիվը և համակցությունը: Մասնավորապես, հոդված 137-ի համաձայն՝ ռեցիդիվն առկա էր դատապարտվելուց և պատիժը կրելուց հետո նոր հանցանք կատարելու դեպքում (անկախ հանցագործությունների բնույթից և

<sup>6</sup> Տե՛ս *Шкредова Э. Г.*, նշված աշխատությունը, էջ 186-187:

ծանրությունից)<sup>7</sup>:

Այսպիսով, կարելի է պնդել, որ վերոնշյալ իրավական ակտերով ի հայտ եկավ ռեցիդիվի՝ ժամանակակից ընկալմամբ բնորոշումը:

20-րդ դարի սկզբին քրեական օրենսդրության և քրեական իրավունքի դոկտրինայի զարգացման հարցում բեկումնային նշանակություն ունեցավ 1903 թ. ընդունված քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Քրեական օրենսգիրք): Ինչպես նշում էր Ա. Ա. Պիոնտկովսկին, այն մեկ քայլ առաջ էր օրինաստեղծ գործունեության մեջ, որին հաջողվեց էականորեն բարելավել և կատարելագործել քրեաիրավական մի շարք ինստիտուտներ (այդ թվում նաև՝ հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը)<sup>8</sup>:

Այսպես՝ Քրեական օրենսգրքում առանձնացվում էր հանցագործությունների բազմակիության չորս տեսակ՝ 1) հանցագործությունների համակցություն (հոդվածներ 60, 64), 2) կրկնություն (ռեցիդիվ) (հոդված 67), 3) հանցագործությունների կրկնակիություն (հոդված 336-ի 2-րդ մաս), 4) դատավճիռների համակցություն (հոդված 66)<sup>9</sup>:

Հանցագործությունների համակցությունը երկու կամ ավելի արարքների կատարումն էր՝ նախքան դատավճռի, եզրակացության կամ մեղավորության մասին որոշման հրապարակումը: Ն. Ս. Տազանցևն առանձնացնում էր համակցության երկու տեսակ՝ հասարակ և որակյալ: Որպես որակյալ դիտվում էր միաբնույթ կամ նույնական հանցագործությունները սովորություն դարձնելը կամ որպես արհեստ կատարելը: Վերջինիս կարծիքով հանցավոր արհեստն օրենսդրության մեջ երկու դեր էր կատարում. բնութագրում էր կա՛մ հանցավորի անձը և ազդում միայն դատարանի կողմից որոշվող պատժի չափի կամ տեսակի ընտրության վրա, կա՛մ նկարագրվում որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ<sup>10</sup>:

Բազմակիության հաջորդ տեսակը կրկնությունն էր (ռեցիդիվ): Օրենքը պատժի խստացումը կապում էր միայն հատուկ ռեցիդիվի հետ, այն է՝ պատիժը կրելուց հետո

<sup>7</sup> Տե՛ս **Гукасян А. П.** Проблемы рецидивной и профессиональной преступности, учебно-методический комплекс, Ереван, 2014, էջ 45-46:

<sup>8</sup> Տե՛ս **Пионтковский А. А.** Уголовное право (Пособие к лекциям), Часть Общая, Казань, 1913, էջ 50:

<sup>9</sup> Տե՛ս Уголовное уложение, Санкт-Петербург, 1903:

<sup>10</sup> Տե՛ս **Таганцев Н. С.** Русское уголовное право, Санкт-Петербург, 1902, Изд-во «Автограф», Тула, Т.2, 2001, էջ 394-422:

անձի կողմից նույն կամ միաբնույթ հանցանք կատարելը, եթե պատիժը կրելուց հետո չէին անցել որոշակի ժամկետներ (հոդված 67): Ժամկետները տևողությունը պայմանավորվում էր հանցագործության տեսակով: Վերոնշյալը կարելի է համարել դատվածության ինստիտուտի նախատիպը:

«Կրկնակիություն» հասկացությունը հանդիպում էր միայն Քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներում: Օրինակ՝ հոդված 336-ի 2-րդ մասն ավելի խիստ պատիժ էր նախատեսում պաշտոնատար անձանց կողմից «սահմանված ժամկետում օրենքով սահմանված պաշտոնական փաստաթղթերը կրկին անգամ չներկայացնելու համար»: «Կրկնակիություն» ասելով հասկացվում էր հանցավոր արարքների նույնականությունը, սակայն դատվածության առկայության կամ բացակայության մասին որևէ պահանջ սահմանված չէր:

Քրեական օրենսգրքում առաջին անգամ նախատեսվեց դատավճիռների համակցությունը՝ որպես բազմակիության տեսակ: Մասնավորապես, դատավճիռների համակցություն էր համարվում անձի կողմից դատավճռի, եզրակացության կամ մեղավորության մասին որոշման հրապարակումից հետո կամ պատիժը կրելու ընթացքում նոր հանցանք կատարելը (հոդված 66):

Այսպիսով, 1903 թ. քրեական օրենսգիրքն իսկապես մեկ քայլ առաջ էր նշված ժամանակահատվածի օրինաստեղծ գործունեության շրջանակներում: Մասնավորապես դրանով, ի թիվս այլոց, նախատեսվեց բազմակիության ինստիտուտի առավել ամբողջական և համակողմանի կարգավորում, որն առավել մոտ է ժամանակակից պատկերացումներին: Հատկանշական է, որ առաջին անգամ օրենսդրության մեջ ներմուծվեց դատավճիռների համակցության հասկացությունը, ընդ որում՝ որպես բազմակիության տեսակ: Համեմատաբար հստակ էին նաև բազմակիության տեսակների տարբերակման չափանիշները: Մասնավորապես ռեցիդիվի առկայությունը պայմանավորվում էր միայն պատիժը կրելուց հետո նոր հանցանք կատարելով, իսկ դատավճիռների համակցությունը՝ դատավճիռը հրապարակվելուց հետո կամ պատիժը կրելու ընթացքում նոր հանցավոր արարքի կատարմամբ:

Նախահեղափոխական գրականության մեջ ռեցիդիվը դիտվում էր որպես

հանցավորի չար կամքի արտահայտություն, վկայում էր նրա՝ նոր հանցանքներ կատարելու առավել հակվածության մասին: Մասնավորապես, հանցավորի չար կամքի մասին էին վկայում՝

- նույնական կամ միաբնույթ արարքներ կատարելը,

- պատիժը լրիվ կամ մասնակի կրելը,

- պատիժը կրելուց հետո անցած ժամանակահատվածը (ռեցիդիվի վաղեմությունը):

Հիմնական գաղափարն այն էր, որ եթե պատիժն անձի վրա որևէ ազդեցություն չէր գործել, չէր ճնշել նրա չար կամքը և պատժի նպատակները չէին իրագործվել, ապա անհրաժեշտ էր նշանակել այնպիսի խիստ ներգործության միջոց, որը համաչափ կլիներ վերջինիս մեղքի չափին: Դասական դպրոցի ներկայացուցիչները հաշվի էին առնում ոչ թե հանցավորի և ռեցիդիվիստի անձը բնութագրող անձնական հատկանիշները, այլ որպես վերջինիս չար կամքի ցուցանիշ դիտում էին առավել օբյեկտիվ բնույթ ունեցող հանգամանքները (մասնավորապես հանցագործությունների բնույթը, պատիժը կրելուց հետո անցած ժամանակահատվածը և այլն): Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, սակայն, կուտակված փորձը փոխեց հանցավորի անձնային հատկանիշների վերաբերյալ առկա մոտեցումները, ինչը հանգեցրեց նաև ռեցիդիվի էության վերաբերյալ տեսաբանների մոտեցումների փոփոխության: Իրավաբանական գրականության մեջ սկսեց գերիշխող դառնալ սոցիոլոգիական դպրոցի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն ակտիվորեն զարգացնում էին «անձի վտանգավոր վիճակի» գաղափարը: Այն կառուցված էր ոչ թե մեղքի սկզբունքի, այլ այն անձի սոցիալական վտանգավորության գաղափարի վրա, ով կատարել էր երկու կամ ավելի հանցանքներ («վտանգավոր վիճակի տեսություն»): Այս տեսության ազդեցության ներքո խորհրդային տարիներին սկսվեցին լայնորեն օգտագործվել «պրոֆեսիոնալ հանցագործ» և «ռեցիդիվիստ» հասկացությունները, որոնք անձի նկատմամբ սոցիալական պաշտպանության առավել խիստ միջոցներ կիրառելու հիմք էին<sup>11</sup>:

Քրեագետների միջազգային միության 1910 թվականի ապրիլի 21-23-ը Մոսկվայում տեղի ունեցած ընդհանուր կոնգրեսի ժամանակ ռուսական խումբը

---

<sup>11</sup> Տե՛ս *Гуксян А. П.*, նշված աշխատությունը, էջ 47-50:



ընդգծել էր, որ ռեցիդիվը գնահատելիս պետք է հաշվի առնվեին ոչ միայն կատարված արարքների քանակական ցուցանիշը, այլև հանցավորի այն ներքին հատկանիշները, որոնք վկայում էին հանցանքների կատարման նրա հակվածության մասին: Վտանգավոր ռեցիդիվիստների դեպքում շատ դժվար էր խոսել վերջիններիս անձնական ազատության իրավունքի մասին<sup>12</sup>: Քննարկման ընթացքում որպես ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի մեթոդներ և միջոցներ ընդգծվել էր պատիժների խստացման, դրանց կատարելագործման, ինչպես նաև ռուսական օրենսդրություն անորոշ դատավճիռների ներմուծման անհրաժեշտության մասին<sup>13</sup>: Թեպետ անորոշ դատավճիռների գաղափարը ռուսական խմբի կողմից մերժվեց, այնուամենայնիվ «անձի վտանգավոր վիճակի» մասին ուսմունքի ազդեցությամբ առաջին պլան մղվեց ոչ թե ռեցիդիվիստների ուղղման, այլ նրանց ոտնձգությունից հասարակության պաշտպանության նպատակը:

Անդրադառնալով Խորհրդային Միության ժամանակահատվածում օրենսդրական մակարդակով բազմակիության և դրա տեսակների կարգավորմանը՝ հարկ է նկատել, որ 1922 թ. ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքում դրանց վերաբերյալ համակարգված կարգավորումները բացակայում էին: Այսպես՝ քրեական օրենսգրքի հոդվածներ 29-ը և 30-ը նախատեսում էին մեկից ավելի հանցավոր արարքներ կատարելու, այսինքն՝ հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ: Մասնավորապես հոդված 29-ի համաձայն՝ եթե հանցավորի կատարած արարքը պարունակում էր քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա դատարանը պատիժը որոշում էր ավելի խիստ հոդվածով: Հոդված 30-ը սահմանում էր, որ նախքան դատավճիռ կայացնելը երկու կամ ավելի հանցավոր արարքներ կատարելու դեպքում դատարանը, դրանցից յուրաքանչյուրի դեպքում առանձին պատիժ նշանակելով, մեղավորին դատապարտում էր ամենախիստ հոդվածով: Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ խոսքը իրական և իդեալական համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգի

<sup>12</sup> Ст'я Русская группа международного союза криминалистов. Общее собрание группы в Москве 21-23 апреля 1910. СПб., 1911, էջ 137:

<sup>13</sup> Ст'я Русская группа международного союза криминалистов. Общее собрание группы в Москве 21-23 апреля 1910 г. СПб., 1911, էջ 136, **Луст Ф.** Задачи уголовной политики. Преступление как социально-патологическое явление. М., 2004, էջ 56-64:

մասին էր, սակայն դրանց հասկացությունները տրված չէին: Ինչ վերաբերում էր հանցագործությունների ռեցիդիվին, ապա հոդված 25-ում նշվում էր, որ պատիժ նշանակելիս դատարանը պետք է հաշվի առներ՝ արդյոք հանցանքը կատարվել էր պրոֆեսիոնալ հանցագործի կամ ռեցիդիվիստի կողմից: Հատուկ մասի մի շարք հոդվածներում որպես ծանրացնող հանգամանքներ նախատեսված էին հանցագործությունների կրկնակիությունը, ռեցիդիվը, ռեցիդիվիստի կողմից կատարելը (հոդվածներ 183, 184, 226 և այլն), սակայն դրանց հասկացությունները դարձյալ չէին բացահայտվում<sup>14</sup>:

1930-ական թթ. խորհրդային քրեական իրավունքի գիտության մեջ «ռեցիդիվ», «ռեցիդիվիստ», «պրոֆեսիոնալ հանցագործ» հասկացությունները դադարեցին օգտագործվել, քանի որ, ըստ պաշտպանվող դոկտրինայի, կոմունիստական հասարակությունում չէր կարող գոյություն ունենալ ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորություն:

1960 թ. ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքում նույնպես հանցագործության բազմակիության և դրա տեսակների հասկացությունները սահմանված չէին: Պատիժ նշանակելու կարգը սահմանող գլխում նախատեսվում էին մի քանի հանցավոր արարքներ կատարելու (հոդված 40), ինչպես նաև մի քանի դատավճիռների առկայության դեպքում (հոդված 41) պատիժ նշանակելու հատուկ կանոններ: Խոսքը, ըստ էության, հանցագործությունների և դատավճիռների համակցության մասին էր: Քրեական օրենսգրքում բացակայում էր հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը, փոխարենը գործում էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտը, ինչը հատուկ մասի մի շարք հոդվածներում նախատեսված էր որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք: Որոշ հոդվածներում որպես ծանրացնող հանգամանք էր նախատեսված նաև հանցագործությունների կրկնակիությունը, որը կարող էր լինել ինչպես դատվածության հետ կապված, այնպես էլ չկապված (հոդվածներ 89, 91, 102, 117, 131, 132, 144-147, 173, 174 և այլն)<sup>15</sup>:

Այսպիսով, 1960 թ. քրեական օրենսգրքում բացակայում էին ինչպես

<sup>14</sup> Տե՛ս ՌԽՖՍՀ 1922 թվականի քրեական օրենսգիրքը (ուժը կորցրել է 01.01.1927 թվականից), <http://www.library.ru/help/docs/n10349/yk1922.txt>:

<sup>15</sup> Տե՛ս ՌԽՖՍՀ 1960 թվականի քրեական օրենսգիրքը, <http://base.garant.ru/10107062/>:

բազմակիության, այնպես էլ դրա տեսակների օրենսդրական բնորոշումները, թեպետ պատիժ նշանակելու գլխում, ինչպես նաև հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում, խոսքը հենց բազմակիության տարբեր դրսևորումների՝ հանցագործությունների և դատավճիռների համակցության, կրկնակիության, ռեցիդիվի մասին էր: Առկա թերի կարգավորումները, դրանց հստակ տարանջատման չափանիշների բացակայությունն անկասկած բացասական ազդեցություն էին թողնում պատժողական քաղաքականության վրա՝ հաճախ հանգեցնելով դրանց կրկնակի կիրառման և անարդարացի խիստ պատիժների նշանակման:

Խորհրդային Միության ժամանակաշրջանում հայկական քրեական օրենսգիրքը գրեթե ամբողջությամբ կրում էր ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքի ազդեցությունը, այդ թվում՝ բազմակիության ինստիտուտի կարգավորման առումով: Այսպես՝ 1961 թ. ՀԽՍՀ քրեական օրենսգրքում նույնպես բացակայում էին բազմակիության և դրա տեսակների հասկացությունները: Պատժի մասին գլխում՝ հոդված 23.1-ում, տրված էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը: Հատուկ մասի որոշ հոդվածներում այն նախատեսված էր որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք (հոդվածներ 86, 87, 88, 89, 99 և այլն), մնացած դեպքերում հաշվի էր առնվում որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (հոդված 36-ի 10-րդ կետ): Հարկ է նկատել, որ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսված էր նաև հանցագործությունը նախկինում ցանկացած հանցանք կատարած անձի կողմից կատարելը (հոդված 36-ի 1-ին մաս):

Հոդվածներ 37-ը և 38-ը պատիժ նշանակելու կանոններ էին նախատեսում մի քանի հանցավոր արարքներ կատարելու և մի քանի դատավճիռների առկայության դեպքում: Առաջինը, ըստ էության, վերաբերում էր հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելուն, որի համաձայն՝ նշված կանոնները գործում էին միայն այն դեպքում, երբ հանցանքները նախատեսված էին տարբեր հոդվածներով, և անձը դրանցից ոչ մեկի համար դատվածություն չուներ: Ինչ վերաբերում էր հանցագործությունների կրկնակիությանը, ապա այն նախատեսված էր հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում, որը կարող էր լինել ինչպես դատվածության հետ կապված,

այնպես էլ չկապված<sup>16</sup>:

Այսպիսով, հանցագործությունների բազմակիության և դրա տեսակների հիմնախնդիրը քրեական իրավունքի առավել վիճելի հարցերից է և մշտապես գտնվել է թե՛ տեսաբանների, թե՛ իրավակիրառողի ուշադրության կենտրոնում: Թեպետ հանցագործությունների բազմակիության ինստիտուտը զգալի չափով ուսումնասիրվել է քրեական իրավունքի գիտության շրջանակներում, այնուամենայնիվ շարունակվում է արդիական մնալ: Վերոնշյալի մասին են վկայում վերջին ժամանակաշրջանում օրենսդրական մակարդակում կատարված մի շարք լուրջ փոփոխությունները, որոնք շարունակվում են նաև այսօր:

## **§2. Հանցագործությունների ռեցիդիվի տեղը և դերը հանցագործությունների բազմակիության համակարգում**

Հանցագործությունները միշտ էլ լուրջ սպառնալիք են հասարակական հարաբերությունների բնականոն զարգացման և իրավակարգի պահպանության համար: Դրանք ունենում են ոչ միայն հանցավոր արարքներից անմիջականորեն տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի դեմ, այլև չարիք են ողջ հասարակության ու պետության համար: Առավել բարձր վտանգավորությամբ են օժտված միևնույն անձի կողմից հանցավոր վարքագծի բազմակի դրսևորման դեպքերը:

Թեպետ բազմակիության տեսակների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը բացակայում է, այնուամենայնիվ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը շատ տարածված երևույթներ են: Պաշտոնական վիճակագրություն առկա է միայն նախկինում դատվածություն ունեցող անձանց կողմից նոր հանցանքներ կատարելու վերաբերյալ՝ 2004-2015 թթ. կտրվածքով, որոնք թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմելու Հայաստանի Հանրապետությունում ռեցիդիվային

---

<sup>16</sup> Տե՛ս ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգիրքը <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4>:

հանցավորության մակարդակի և շարժընթացի մասին<sup>17</sup>: Այսպես՝ նշված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ռեցիդիվային հանցավորության շարժընթացում նկատելի են աճի միտումներ. եթե 2004-2008 թթ. ընդհանուր դատապարտվածների թվում նախկինում դատվածների տոկոսային հարաբերակցությունը տատանվում էր մոտավորապես 6-8%-ի շրջանակներում, ապա 2009-2013 թթ. նկատվել է կտրուկ աճ՝ տատանվելով մոտ 10-14%-ի սահմաններում: Տարօրինակ նվազում է նկատվել 2014-2015 թթ.՝ համապատասխանաբար իջնելով մինչև 2,3% և 2%, իսկ 2016 և 2017 թթ. վիճակագրական տվյալները դեռևս առկա չեն<sup>18</sup>:

Հանցագործությունների բազմակիության հիմքում ընկած պատճառները բազմաթիվ են: Միևնույն անձի կողմից մեկից ավելի հանցանքների կատարումը կարող է պայմանավորված լինել ինչպես հանցավորի հակահասարակական դիրքորոշումներով և վերջինիս հանցավոր մասնագիտացմամբ, այնպես էլ օբյեկտիվ հանգամանքներով: Հետևաբար հանցագործությունների կրկնության պատճառները ճիշտ չէ վերագրել միայն հանցավորի անձին: Շատ հաճախ դրանց հիմքում ընկած են համապատասխան իրավասու մարմինների գործողություններում առկա թերություններն ու բացթողումները, դատապարտյալների հետ տարվող աշխատանքում պրոֆեսիոնալիզմի բացակայությունը, սխալ քրեական քաղաքականության իրականացումը և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ոչ հետևողական կենսագործումը, որոնք ստեղծում են անվստահության և անպատժելիության մթնոլորտ՝ խոչընդոտելով հանցագործությունների դեմ պայքարին և նպաստելով հանցավոր վարքագծի կրկնակի դրսևորմանը:

Հանցագործությունների բազմակիության դեպքերը իրավական առումով ևս առաջ են բերում գործնական ու տեսական մի շարք խնդիրներ: Դրանց ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է իրավական որոշակիության չափանիշին համահունչ մանրամասն կարգավորումների

<sup>17</sup> Անհրաժեշտ է հաշվի առնել, սակայն, որ նշված տվյալները չեն արտացոլում ռեցիդիվային հանցավորության մակարդակի վերաբերյալ իրական պատկերը, քանի որ նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից նոր հանցանքի կատարումը ոչ միշտ է ենթադրում հանցագործությունների ռեցիդիվի առկայություն: Մասնավորապես, դրանք կարող են ընդգրկել նաև անզգույշ և մինչև 18 տարին լրանալը կատարված հանցանքների համար դատվածությունները, որոնք, սակայն, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

<sup>18</sup> Տե՛ս [www.armstat.am](http://www.armstat.am):

առկայություն, արարքների որակման ընթացքում առաջացող անհստակությունների, բազմակիության տարբեր տեսակները միմյանց հետ շփոթելու, դրանց կրկնակի կիրառման և նշանակվող պատժի անհամաչափ խստացման դեպքերի հնարավորինս բացառում:

Վերոնշյալը հնարավոր է նախ և առաջ քրեական պատասխանատվության և պատժի բնագավառում առկա բացթողումների ու թերությունների հաղթահարման, բազմակիության ինստիտուտի օրենսդրական մանրամասն կանոնակարգման միջոցով: Այս տեսանկյունից կարևորում ենք քրեական օրենսդրության մեջ ինքնուրույն գլխի՝ «Հանցագործությունների բազմակիությունը», առանձնացումը, որտեղ կտրվի բազմակիության ընդհանուր բնորոշումը, կսահմանվեն տեսակները և դրանք միմյանցից տարբերակելու հստակ չափանիշները, բազմակիությունը բացառող դեպքերը, ինչպես նաև դրա տարանջատումը մեկ եզակի հանցավոր արարքներից:

Հանցագործությունների բազմակիությունը, փաստացի լինելով քրեաիրավական ինքնուրույն ինստիտուտ, երբեք չի առանձնացվել որպես այդպիսին, չի եղել նորմատիվային հասկացություն ո՛չ խորհրդային, ո՛չ գործող օրենսդրության շրջանակներում: Բազմակիության վերաբերյալ նորմերն ընդգրկված են քրեական օրենսգրքի «Հանցագործություն» բաժնի «Հանցագործության հասկացությունը և տեսակները» գլխում, որի հոդվածներ 20-ը և 22-ը սահմանում են միայն հանցագործությունների համակցության և ռեցիդիվի հասկացությունները: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքում առկա է միայն բազմակիության տեսակների բնորոշումը, իսկ բուն երևույթի սահմանումը բացակայում է: Կարծում ենք՝ նախքան որևէ երևույթի տեսակները առանձնացնելը անհրաժեշտ է նախ և առաջ տալ այդ երևույթի հասկացությունը, հիմնական հատկանիշները, ինչպես նաև գործողության համար անհրաժեշտ պայմանները:

Չնայած օրենսդրական ամրագրման բացակայությանը՝ բազմակիության ինստիտուտը մշտապես գտնվել է տեսաբանների ուշադրության կենտրոնում և բազմիցս հետազոտվել է քրեական իրավունքի գիտության մեջ: Սակայն շատ հարցեր՝ կապված բազմակիության հասկացության և տեսակների, դրանց հիմնական հատկանիշների ու տարբերակման չափանիշների հետ, շարունակում են վիճելի մնալ:

Թերևս դա է պատճառը, որ մինչ օրս օրենսդրական մակարդակում բազմակիությունն առանձնացված չէ որպես ինքնուրույն ինստիտուտ, և դրա տեսակները շարունակվում են քննարկվել «Հանցագործության հասկացությունը և տեսակները» գլխում:

Մեր համոզմամբ հանցագործությունների բազմակիությունը, լինելով հանցագործության ինստիտուտի բաղկացուցիչ մաս, այնուամենայնիվ օժտված է բազմաթիվ առանձնահատկություններով, որոնք պետք է հնարավորինս մանրամասն կարգավորվեն օրենսդրական մակարդակով: Մասնավորապես բազմակիության հասկացության ամրագրումը քրեական օրենսգրքում թույլ կտա հստակ սահմանել բազմակիության տեսակները, վերջիններիս հիմնական առանձնահատկությունները և բացառել դրանց կրկնակի կիրառման դեպքերը: Բացի այդ, օրենսդրական ամրագրման շնորհիվ քննարկվող երևույթը ձեռք կբերի որոշակիություն և կայունություն, ինչը օրինականության սկզբունքի ապահովման կարևոր նախապայման է: Այն կնպաստի նաև հանցագործությունների ճիշտ քրեաիրավական որակմանը և երկու կամ ավելի հանցավոր արարքների դեպքում համաչափ ու արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքին համահունչ պատիժների նշանակմանը:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ՝ «Հանցագործություն» բաժնում անհրաժեշտ է առանձնացնել ինքնուրույն՝ 7.1-րդ գլուխը՝ «Հանցագործությունների բազմակիություն» անվանմամբ, որն ընդգրկված կլինի 7-րդ՝ «Հանցակցությունը» գլխից անմիջապես հետո: Նշված գլխում անհրաժեշտ է սահմանել հանցագործությունների բազմակիության և դրա տեսակների բնորոշումը, ինչպես նաև բազմակիությունը բացառող բոլոր հնարավոր դեպքերը: Հարկ է նկատել, որ վերոնշյալ մոտեցումը դրսևորվել է նաև Նախագծում: Մասնավորապես Նախագծի 9-րդ գլուխը նվիրված է բազմակիության ինստիտուտին, որն ընդգրկվել է «Հանցակցություն կամ անզգուշությամբ համակատարում» գլխից անմիջապես հետո: Հետաքրքրական է, որ նշված գլխում, բացի բազմակիությունից և դրա տեսակներից, մանրամասն կարգավորվել են նաև քրեաիրավական նորմերի մրցակցության և դրա տեսակների հիմնահարցերը<sup>19</sup>: Գործող քրեական օրենսգրքում նման կարգավորման

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, Երևան, 2017 թվական:

բացակայությունը պրակտիկայում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքերը բազմակիությունից, հատկապես հանցագործությունների համակցությունից տարանջատելու հարցում<sup>20</sup>:

Բազմակիության հասկացությունը սահմանելիս անհրաժեշտ է ամրագրել միայն նշված երևույթի էությունն արտահայտող այն հիմնական հատկանիշները, որոնք առավել ընդհանրական են և հավասարապես տարածվում են բազմակիության բոլոր տեսակների նկատմամբ: Կարծում ենք՝ պետք է ձեռնպահ մնալ բազմակիության բուն բնորոշման մեջ դրա յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները բնութագրող հատկանիշները թվարկելուց: Վերոնշյալը թույլ կտա բազմակիության հասկացությունը զերծ պահել թերի և ոչ ամբողջական կարգավորումներից: Ինչ վերաբերում է բազմակիության կոնկրետ տեսակների առանձնահատկություններին և միմյանցից սահմանազատելու չափանիշներին, ապա դրանք պետք է սահմանվեն յուրաքանչյուրի օրենսդրական բնորոշման շրջանակներում:

Հանցագործությունների բազմակիության հիմնական հատկանիշները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ քանակական և որակական: *Քանակական* հատկանիշի կապակցությամբ սույն ինստիտուտի հիմնախնդիրներով զբաղվող գրեթե բոլոր քրեագետ-գիտնականները միակարծիք են, այն է՝ միևնույն անձի կողմից (կատարող կամ հանցակից) երկու կամ ավելի հանցանքներ (ավարտված կամ չավարտված) կատարելը: Ինչ վերաբերում է բազմակիության *որակական* հատկանիշներին, ապա կարելի է առանձնացնել հետևյալները՝

- կատարված արարքներից յուրաքանչյուրն ինքնուրույն հանցակազմ է պարունակում,
- դրանցից առնվազն երկուսի նկատմամբ պահպանված են քրեաիրավական հետևանքները,
- բացակայում են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական արգելքները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ բազմակիության բնորոշումը սահմանելիս պետք է արտացոլել քանակական և որակական այն հատկանիշները,

---

<sup>20</sup> Տե՛ս, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գարսևան Ոսկանյանի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կայացված թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:



որոնք ընդհանուր են դրա բոլոր տեսակների համար, այն է՝ միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքների կատարումը՝ նախատեսված միևնույն կամ տարբեր հոդվածներով, ինչպես նաև առնվազն երկու հանցանքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունը՝ քրեաիրավական հետևանքների պահպանումը և դատավարական արգելքների բացակայությունը: Մասնավորապես բազմակիությունը բացակայում է, եթե առնվազն երկու հանցագործություններից մեկի դատվածությունը հանվել կամ մարվել է, վաղեմության ժամկետներն անցել են, անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից, ինչպես նաև պատժից այն դեպքերում, երբ ազատվելը վերջնական է և առանց պայմանի, կիրառվել է համաներման ակտ, կամ եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված գործի վարույթը բացառող այլ հանգամանքներ:

Այսպիսով, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել 7.1-րդ գլխով՝ «Հանցագործությունների բազմակիություն» անվանմամբ, որի հոդված 41.1-ով՝ «Հանցագործությունների բազմակիությունը և դրա տեսակները», տալ հանցագործությունների բազմակիության հետևյալ բնորոշումը.

*«1. Հանցագործությունների բազմակիությունը միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքների կատարումն է, որոնցից առնվազն երկուսի նկատմամբ պահպանված են քրեաիրավական հետևանքները և բացակայում են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական արգելքները:*

*2. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է տևող, շարունակվող և բարդ (բաղկակցական) հանցագործությունների, ինչպես նաև հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում:*

*3. Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը»:*

Առավել վիճելի է հանցագործությունների բազմակիության տեսակների հիմնախնդիրը: Տեսաբանների շրջանում նշված հարցի կապակցությամբ միասնական մոտեցումները բացակայում են: Հեղինակների մեծ մասի կարծիքով հանցագործությունների բազմակիությունը հիմնականում դրսևորվում է

կրկնակիության, համակցության և ռեցիդիվի ձևերով՝ նկատի ունենալով նաև երկար ժամանակ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները: Այսպես՝ Ի. Մ. Գալպերինը կարծում է, որ հանցագործությունների բազմակիության տեսակներն են համակցությունը, կրկնակիությունը և հանցագործությունների ռեցիդիվը<sup>21</sup>: Վ. Ն. Կուդյավցևը որպես բազմակիության տեսակ առանձնացնում էր հանցագործությունների համակցությունը (իրական և իդեալական), կրկնակիությունը (неоднократность), կրկնությունը (повторность) և ռեցիդիվը<sup>22</sup>: Ռ. Գալիակբարովը, Մ. Եֆիմովը և Ե. Ֆրոլովը նախատեսում էին հանցագործությունների բազմակիության երկու տեսակ՝ կրկնակիություն և համակցություն<sup>23</sup>: Տ. Մ. Կաֆարովը բազմակիության տեսակ էր դիտում ռեցիդիվը, կրկնակիությունը, իրական և իդեալական համակցությունը<sup>24</sup>, Յ. Ն. Յուշկովը՝ կրկնակիությունը, համակցությունը և հանցագործությունների փաստացի բազմակիությունը<sup>25</sup> և այլն:

Գերակշռող այն կարծիքին, որ բազմակիությունը դրսևորվում է հանցագործությունների համակցություն, կրկնակիություն և ռեցիդիվ տեսակներով, դեմ է արտահայտվել Վ. Պ. Մալկովը՝ նշելով, որ բազմակիության վերոնշյալ դասակարգումը հիմնվում է ոչ թե մեկ միասնական, այլ տարբեր հարթություններում գտնվող դասակարգման չափանիշների վրա: Մինչդեռ, ըստ նրա, դասակարգումը պետք է կատարվի մեկ միասնական հիմքի վրա. հակառակ պարագայում այն կորցնում է իր տրամաբանական կառուցվածքն ու գիտական արժեքը: Նրա կարծիքով կրկնակիությունն ավելի ընդհանուր ու լայն հասկացություն է և իր մեջ ներառում է համակցությունն ու ռեցիդիվը: Այսպես՝ կրկնակիությունը կարող է լինել դատվածության հետ կապված և չկապված, ուստի համակցությունն ու ռեցիդիվը դրա մասնավոր դրսևորումներն են<sup>26</sup>:

Հանցագործությունների բազմակիության տեսակների դասակարգման

<sup>21</sup> Տե՛ս *Գալպերին Ի. Մ.* Советское уголовное право, Общая часть, М., Изд-во МГУ, 1974, էջ 253:

<sup>22</sup> Տե՛ս *Կудրյաцев В. Н.* Общая теория квалификации преступлений, М., 1972, էջ 284:

<sup>23</sup> Տե՛ս *Գալիակբարով Ր., Եֆիմով Մ., Ֆրոլով Ե.* Множественность преступных деяний как институт советского уголовного права // Советская юстиция, 1967, №2, էջ 5:

<sup>24</sup> Տե՛ս *Կաֆարով Տ.Մ.* Проблема рецидива в советском уголовном праве, Баку, 1972, էջ 8-9:

<sup>25</sup> Տե՛ս *Եւշկով Ե. Ն.* Множественность преступных деяний (вопросы квалификации и назначения наказания), Автореф. дисс. ... канд. наук, Свердловск, 1974, էջ 11:

<sup>26</sup> Տե՛ս *Մալկով В. П.* Множественность преступлений и ее формы по советскому уголовному праву, Казань, 1982, էջ 40-41:

միասնական չափանիշի սահմանումն այս ինստիտուտի առանցքային խնդիրներից է: Հեղինակների մեծ մասի կարծիքով բազմակիության տեսակների դասակարգման հիմքում ընկած են հետևյալ չափանիշները՝ սոցիալական և իրավաբանական:

Սոցիալական չափանիշն արտահայտում է հանցավոր վարքագծի բնույթը, այսինքն՝ ցույց է տալիս, թե ինչպես է դրսևորվել հանցագործությունների բազմակիությունը՝ հանրորեն վտանգավոր արարքի փաստացի կրկնությամբ, թե՞ առանց դրա: Ըստ իրավաբանական չափանիշի դասակարգելիս՝ հիմք են ընդունվում մի շարք հանգամանքներ. արդյոք փաստացի կատարվածը որակվում է քրեական օրենսգրքի մեկ, թե մեկից ավելի հոդվածներով, հանցավորն ունի դատվածություն, թե ոչ և այլն: Որոշ հեղինակներ առաջնային են համարում դասակարգման սոցիալական (օրինակ՝ Վ. Պ. Մալկովը<sup>27</sup>), ոմանք՝ իրավաբանական չափանիշը (օրինակ՝ Ե. Գ. Վասիլևան<sup>28</sup>, Ն. Ն. Կորոտկիխը<sup>29</sup>, Տ. Գ. Չերնենկոն<sup>30</sup> և այլք):

Քրեական իրավունքի գիտությանը հայտնի են նաև դասակարգման այլ չափանիշներ: Մասնավորապես, բազմակիության տեսակներն առանձնացվում են ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների: Դասակարգման օբյեկտիվ չափանիշն արտահայտվում է մեկից ավելի հանցավոր արարքների կատարմամբ: Վերոնշյալն ըստ էության նույնանում է հանցագործությունների բազմակիության քանակական հատկանիշի հետ, այն է՝ միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքներ կատարելը: Հետևաբար օբյեկտիվ չափանիշը չի կարող բազմակիության տեսակների տարբերակման հիմքում դրվել, քանի որ մեկից ավելի հանցանքներ կատարելը օբյեկտիվորեն վերաբերելի է բազմակիության բոլոր տեսակներին:

Ինչ վերաբերում է դասակարգման սուբյեկտիվ չափանիշին, ապա այն հիմնվում է հանցավորի սուբյեկտիվ առանձնահատկություններին, հակահասարակական, հանցավոր կողմնորոշումներին գնահատական տալու անհրաժեշտության վրա: Անձի սուբյեկտիվ հատկանիշների մասին վկայող միակ տեսանելի ցուցանիշը

<sup>27</sup> Տե՛ս **Малков В. П.**, նշված աշխատությունը, էջ 45-47:

<sup>28</sup> Տե՛ս **Васильева Е. Г.** Формы множественности по действующему уголовному законодательству: Дис. ...канд. юрид. наук, Ставрополь, 2005, էջ 58-59:

<sup>29</sup> Տե՛ս **Коротких Н. Н.** Критерии деления множественности преступлений на виды // Академический юридический журнал, N 2 (56), Иркутск, 2014, էջ 29-34:

<sup>30</sup> Տե՛ս **Черненко Т. Г.** Множественность преступлений по российскому уголовному праву, Кемерово, 2007, 203 էջ:

դատվածությունն է: Հետևաբար դատվածության առակայությունը կամ բացակայությունը այն հիմնական չափանիշն է, որն ընկած է օբյեկտիվորեն միմյանցից չտարբերվող բազմակիության տեսակների սահմանազատման հիմքում:

Համակարծիք ենք Վ. Պ. Մալկովի այն դիրքորոշմանը, որ բազմակիության տեսակները պետք է դասակարգվեն մեկ միասնական չափանիշով, ինչը թույլ կտա հստակ տարանջատելու դրանք միմյանցից, նվազագույնի հասցնելու սխալ կիրառման դեպքերը և նպաստելու կատարվող արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուն: Այս առումով, կարծում ենք, առավել ընդունելի է բազմակիության տեսակները ըստ սուբյեկտիվ չափանիշի դասակարգելը, քանի որ օբյեկտիվ առումով դրանք ըստ էության չեն տարբերվում:

Նախքան 2011 թ. մայիսի 23-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը քրեական օրենսգրքում նախատեսված էր հանցագործությունների բազմակիության երեք տեսակ՝ կրկնակիություն, համակցություն և ռեցիդիվ: Բազմակիության վերոնշյալ տեսակների վերլուծությունը ցույց էր տալիս, որ դրանց՝ օրենսդրորեն ամրագրված դասակարգման հիմքում ընկած էին հետևյալ չափանիշները՝

- քրեական օրենսգրքի հատուկ մասի միևնույն հոդվածով (հոդվածի մասով) կամ տարբեր հոդվածներով (հոդվածների մասերով) նախատեսված լինելու հանգամանքը՝ *օբյեկտիվ չափանիշ* (վերոնշյալն ընկած էր հանցագործությունների համակցության և կրկնակիության սահմանազատման հիմքում),

- դատվածության առկայության կամ բացակայության հանգամանքը՝ *սուբյեկտիվ չափանիշ* (վերոնշյալն ընկած էր հանցագործությունների ռեցիդիվի և համակցության սահմանազատման հիմքում):

Այսպիսով, ակնհայտ է, որ հանցագործությունների համակցության, կրկնակիության և ռեցիդիվի տարբերակման հիմքում ընկած էր ոչ թե մեկ միասնական, այլ տարբեր չափանիշներ: Մասնավորապես դասակարգումն իրականացվում էր օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վրա. հանցագործությունների համակցության և կրկնակիության տարբերակման հիմքում ընկած էր այնպիսի *օբյեկտիվ չափանիշ*, ինչպիսին էր կատարված հանցանքների բնույթը: Եթե

կրկնակիություն էին կազմում միևնույն կամ միաբնույթ հանցագործությունները, ապա համակցություն՝ տարբեր հոդվածներով նախատեսված արարքները: Միաբնույթ հանցագործությունների կրկնակիությունը (օրինակ՝ ավազակություն, գողություն, կողոպուտ և այլն) միևնույն ժամանակ զուգորդվում էր հանցագործությունների համակցության հետ:

Ինչ վերաբերում էր հանցագործությունների ռեցիդիվին, ապա այն համակցությունից տարբերվում էր *սուբյեկտիվ չափանիշով*՝ դատվածության առկայության հանգամանքով, սակայն դատվածության հետ կապված կրկնակիությունից տարանջատման հստակ չափանիշ առկա չէր: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 21-ի 4-րդ մասի համաձայն՝ կրկնակիությունը բացակայում էր, եթե անձը նախկինում կատարած հանցանքի համար օրենքով սահմանված հիմքերով ազատվել էր քրեական պատասխանատվությունից կամ այդ հանցանքի համար դատվածությունը հանվել կամ մարվել էր: Վերոնշյալ նորմը վկայում էր, որ կրկնակիությունը կարող էր լինել ինչպես դատվածության հետ կապված, այնպես էլ չկապված:

Ստացվում էր, որ դատվածության հետ կապված կրկնակիությունը նախատեսված էր քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք հոդվածներում՝ որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք, մինչդեռ հանցագործությունների ռեցիդիվը՝ ընդհանուր մասում՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Վերոգրյալի պայմաններում հարց էր առաջանում դրանց կիրառման կարգի վերաբերյալ. այն դեպքում, երբ դատվածության հետ կապված կրկնակիությունը նախատեսված էր որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, կարո՞ղ էր արդյոք առկա դատվածությունը միաժամանակ գնահատվել որպես հանցագործությունների ռեցիդիվ և հաշվի առնվել պատիժ նշանակելիս: Հարկ է նշել, որ այս հարցին անդրադարձել էր ՀՀ սահմանադրական դատարանը և դիրքորոշում արտահայտել այն մասին, որ հանցագործությունների ռեցիդիվը տվյալ դեպքում չէր կարող դիտվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք՝ ընդգծելով՝ *«(...) [Ե]թե որևէ ծանրացնող հանգամանք օրենսգրքի Հայրուկ մասի համապատասխան հոդվածում նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ,*

*ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (...)*<sup>31</sup>:

Դատվածության հետ կապված կրկնակիության պարագայում խնդրահարույց էր նաև այն՝ արդյոք մինչև 18 տարին լրանալը կատարված հանցանքների համար առկա դատվածությունը կարող էր ձևավորել հանցակազմը ծանրացնող հանգամանք՝ այն պայմաններում, երբ ռեցիդիվը գնահատելիս նման դատվածությունը չէր կարող հաշվի առնվել (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 4-րդ մաս): Վերոնշյալ խնդրին անդրադարձել էր ՀՀ վճռաբեկ դատարանը *Արմեն Պապիկյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում և իրավական դիրքորոշում արտահայտել առ այն, որ օրենսդիրը հանցագործությունների կրկնակիության և հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտներից յուրաքանչյուրին հաղորդել է ինքնուրույն քրեաիրավական իմաստ. հանցանքը կատարելու ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված հանցակազմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ինքնին չի հանդիսանում որևէ հանցակազմ որակյալ դարձնող հանգամանք: Մինչդեռ հանցագործությունների կրկնակիությունը հանդիսանում է բազմաթիվ հանցակազմեր որակյալ դարձնող հանգամանք: Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել էր, որ հանցագործությունների ռեցիդիվի կանոններն անհրաժեշտ էր կիրառել պատիժն անհատականացնելիս, իսկ հանցագործությունների կրկնակիության կանոնները՝ արարքը որակելիս: Այլ կերպ՝ կիրառման ենթակա էր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 4-րդ մասը, որն արգելք է նախատեսում մինչև 18 տարին լրանալը կատարված հանցանքների համար առկա դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս հաշվի առնելու կապակցությամբ, այլ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 21-ի (հանցագործությունների կրկնակիությունը) պահանջները, որոնց թվում բացակայում էր կրկնակիությունը գնահատելիս անչափահաս տարիքում կատարված հանցանքները հաշվի չառնելու կարգադրագիրը<sup>32</sup>:

Այսինքն՝ ստացվում էր, որ պատիժն անհատականացնելիս անչափահաս

<sup>31</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 11-ի թիվ 882 որոշումը:

<sup>32</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արմեն Պապիկյանի գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-149/07 որոշումը:

տարիքում կատարված հանցանքի համար առկա դատվածությունը չէր կարող հաշվի առնվել, մինչդեռ նույն դատվածությունը, որը քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածում նախատեսված էր որպես որակյալ հանգամանք և ուղղակիորեն ազդում էր արարքի որակման և անձի պատասխանատվության վրա, հաշվի էր առնվում: Վերոնշյալ իրավիճակն անթույլատրելի էր, չէր բխում արդարության և մարդասիրության կարևորագույն սկզբունքների պահանջներից:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ հատուկ մասի մի շարք հոդվածներում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված երկու կամ ավելի դատվածությունն իրենից կրկնակիություն էր ներկայացնում, այնքան էլ միանշանակ չէր, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 2-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հաշվի էր առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս, իսկ կրկնակիության մասին խոսք չկար: Մինևույն ժամանակ, սակայն, օրենսդիրը հրաժարվել էր հանցակազմը որակյալ դարձնող այնպիսի հանգամանքից, ինչպիսին էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից կատարելը, ինչը վկայում էր ռեցիդիվը որպես որակման կանոն դիտարկելուց հրաժարվելու վերջինիս կամքի մասին: Ակնհայտ է, որ այս առումով ևս ՀՀ քրեական օրենսգրքում առկա էր իրավական անորոշություն:

Դատվածության հետ կապված կրկնակիությունը լուրջ խնդիրներ էր առաջացնում նաև նույն հանցագործության համար կրկին դատապարտման անթույլատրելիության սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ հատուկ մասի կոնկրետ հոդվածում դատվածությունը նախատեսված էր որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք, և անձի արարքը ենթակա էր որակման այդ մասով, հանցավորը, ըստ էության, պատասխանատվության էր ենթարկվում ոչ միայն փաստացի կատարված հանցանքի, այլև ևս մեկ անգամ նախկինում կատարված արարքի համար, որի համար արդեն իսկ դատապարտվել էր:

Բացի այդ, միաբնույթ հանցագործությունների կրկնակիության դեպքում անարդարացի վիճակ էր ստեղծվում: Մասնավորապես, եթե անձը կատարում էր մեկ կողոպուտ և հետո գողություն, ապա արարքը որակվում էր և՛ կրկնակիության, և՛ համակցության կանոններով՝ կողոպուտ և կրկին անգամ գողություն: Իսկ եթե անձը

կատարեր, օրինակ, մեկ տասնյակից ավելի կողոպուտ, ապա արարքը պետք է որակվեր միայն կրկնակիության կանոններով՝ որպես կրկին անգամ կողոպուտ: Ակնհայտ է, որ շատ ավելի բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող անձը շահեկան վիճակում էր հայտնվում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ օրենսդրության մեջ առկա չէին կրկնակիությունը հանցագործությունների համակցությունից և հատկապես ռեցիդիվից տարանջատելու հստակ չափանիշներ, շատ դեպքերում կրկնակիությունը զուգորդվում էր վերջիններիս հետ՝ պրակտիկայում առաջացնելով դժվարություններ միմյանցից սահմանազատելու հարցում, հանգեցնում էր դրանց կրկնակի կիրառման և անարդարացի խիստ պատիժների նշանակման: Արդարության սկզբունքի հետևողական կենսագործումը պահանջում էր կրկնակիության ինստիտուտից և դատվածության՝ որպես որակյալ հատկանիշից, ամբողջական հրաժարում և բոլոր դեպքերում միատեսակ մոտեցման որդեգրում, այն է՝ հանցավորը պատասխանատվության է ենթարկվում կատարվածի համար, իսկ նրա անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում նաև դատվածության առկայությունը, հաշվի են առնվում միայն օրենքով նախատեսված համապատասխան սանկցիայի շրջանակներում պատիժ նշանակելիս<sup>33</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ նախքան 2011 թ. մայիսի 23-ի օրենսդրական փոփոխություններով կրկնակիության ինստիտուտի վերացումը, ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել էր ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 177-ի 3-րդ մասի 3-րդ կետի (գողությունը, որը կատարվել է 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից) և 268-ի 2-րդ մասի 1-ին կետի (թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի, որը կատարվել է կրկին անգամ) սահմանադրականության հարցին և 2010 թ. մայիսի 11-ի որոշմամբ գտել, որ դրանք համապատասխանում էին ՀՀ Սահմանադրությանը: Մասնավորապես, սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ դատվածության ինստիտուտը՝ և՛ որպես որակյալ հանցակազմի տարր, և՛ որպես

<sup>33</sup> Տե՛ս **Волженкин Б. В.** Принцип справедливости и проблемы множественности преступлений по УК РФ // Законность, 1998, №12, էջ 2-7:



պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ էր հետապնդում: Այսպես՝ եթե նախկին դատվածության ազդեցությունը նոր հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանի վրա օրենսդրի կողմից գնահատվում էր որպես սովորականի շրջանակներից դուրս եկող, ապա այդ դեպքում դատվածությունը դիտվում էր որպես որակյալ հանցակազմի սուբյեկտին բնորոշ հատկանիշ: ՀՀ սահմանադրական դատարանն արդյունքում արձանագրել էր, որ դատվածության, ինչպես նաև դրա հետ կապված ռեցիդիվի և կրկնակիության ինստիտուտները չէին կարող դիտվել որպես «կրկին անգամ դատվելու», ինչպես նաև օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում<sup>34</sup>:

Միևնույն ժամանակ, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել էր, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից օրենսդրական զարգացումները պետք է ընթանային այն ուղղությամբ, որ շեշտը դրվեր ոչ թե որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործելով հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը<sup>35</sup>:

Այսպիսով, 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխություններով բազմակիության ինստիտուտն էականորեն վերափոխվեց: Օրենսդիրը հրաժարվեց կրկնակիությունից, և ներկայումս բազմակիությանը վերաբերող նորմերը տեղ են գտել բացառապես քրեական օրենսգրքի ընդհանուր մասում: Գործող քրեական օրենսգրքում որպես բազմակիության տեսակներ նախատեսվում են հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը, իսկ դրանց տարբերակումն իրականացվում է մեկ միասնական, այն է՝ սուբյեկտիվ չափանիշով, քանի որ հանցագործությունների համակցության և ռեցիդիվի տարբերակման հիմքում ընկած է դատվածության առկայության կամ բացակայության հանգամանքը: Կարծում ենք՝ կատարված փոփոխություններն արդարացված էին և հիմնականում լուծեցին պրակտիկայում առաջացող խնդիրները, թեպետ տեսության մեջ բազմակիության

<sup>34</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումը:

<sup>35</sup> Ավելի վաղ՝ 2003 թվականի մարտի 19-ին համանման դիրքորոշում էր արտահայտել նաև ՌԴ սահմանադրական դատարանը՝ ընդգծելով, որ դատվածության, ռեցիդիվի և կրկնակիության ինստիտուտները համապատասխանում էին ՌԴ Սահմանադրությանը, թեպետ առկա էին երկու դատավորների՝ ՌԴ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը չհամընկնող հատուկ կարծիքները: Իսկ արդեն 2003 թվականի դեկտեմբերի 8-ի օրենսդրական փոփոխություններով կրկնակիության ինստիտուտը վերացվեց:

տեսակների և ձևերի հետազոտման հիմնախնդիրը շարունակում է դեռևս արդիական մնալ:

### **§3. Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը և հատկանիշները**

Հանցագործության ռեցիդիվի հասկացության և տեսակների հարցը բավականին երկար ժամանակ մշակվել է քրեական իրավունքի տեսությունում: Չնայած դրան՝ ռեցիդիվի հետ կապված շատ հարցեր շարունակում են բաց մնալ, իսկ հետազոտողների շրջանում ռեցիդիվի իրավական էության, դրա հասկացության և պարտադիր հատկանիշների վերաբերյալ միասնական մոտեցումը բացակայում է:

Ռեցիդիվի հասկացության օրենսդրական կատարելագործումները մշտապես ընթացել են քրեական իրավունքի գիտության ազդեցության ներքո: Այսպես՝ քրեական իրավունքի դասական դպրոցը ռեցիդիվը դիտում էր որպես ծանրացնող հանգամանք, որը հանգեցնում էր անձի նկատմամբ նշանակվող պատժի խստացման: Այս դպրոցի ներկայացուցիչները շեշտը հանցավորի անձից տեղափոխում էին դեպի հանցավոր արարք և հետևանքներ, իսկ հանցավորության դեմ պայքարի միակ միջոցը համարում էին օրենսդրության կատարելագործումը: Պոզիտիվիստական (սոցիոլոգիական) դպրոցի ներկայացուցիչներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին հանցագործ-ռեցիդիվիստի անձնական բնութագրի վրա և կարծում էին, որ միայն հանցագործի անձի ամբողջական վերլուծությունն է թույլ տալիս որոշելու հասարակության համար նրա վտանգավորության բնույթն ու աստիճանը և նշանակելու համարժեք պատիժ:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում տրված ռեցիդիվի բնորոշումը ավելի շատ հիմնված է դասական դպրոցի ավանդույթների վրա՝ ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որը տալիս էր ոչ թե երևույթի՝ ռեցիդիվի, այլ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի առաջին մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը դիտավորությամբ հանցանք կատարելն է այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար:

Վերոնշյալ բնորոշումից երևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը բնութագրվում է քանակական և որակական հատկանիշներով: Քանակական հատկանիշն արտահայտվում է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքների կատարմամբ: Հարկ է նշել, որ այն հանցագործությունների բազմակիության ընդհանուր հատկանիշն է և վերաբերում է դրա բոլոր դրսևորումներին (տեսակներին):

Հանցագործությունների ռեցիդիվի որակական բնութագրիչն արտացոլում է այն առանձնահատուկ հատկանիշները, որոնք թույլ են տալիս ռեցիդիվը դիտարկել որպես հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տեսակ և այն սահմանազատել բազմակիության այլ դրսևորումներից: Մասնավորապես հանցագործությունների ռեցիդիվի որակական հատկանիշներն են՝

ա) նախկինում և նոր կատարված հանցանքների դիտավորյալ բնույթը,

բ) չհանված կամ չմարված դատվածությունը, որն առաջացել է անձի՝ 18 տարին լրանալուց հետո կատարված հանցանքի համար դատապարտմամբ:

Հետևաբար անձի արարքում ռեցիդիվը գնահատելիս նախևառաջ պետք է հավաստել վերը նշված պարտադիր հատկանիշների առկայությունը: Միևնույն ժամանակ գործող օրենսդրությամբ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը գնահատելիս որևէ նշանակություն չունի կատարվող հանցանքների բնույթը, այն է՝ նույնական են, համասեռ, թե տարաբնույթ, ինչպես նաև դրանց կատարման հաջորդականությունը:

Հանցագործությունների ռեցիդիվի պարտադիր հատկանիշների վերաբերյալ համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես Սամվել Բալյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը բնութագրվում է.

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) միայն դիտավորությամբ հանցանքներ (տարաբնույթ, նույնական կամ համանման) կատարելը,

բ) այդ հանցագործությունները հաջորդաբար և ժամանակային ընդմիջմամբ

կատարելը,

զ) նախկինում կատարված հանցանքի (հանցանքների) համար չհանված կամ չմարված դատվածության առկայությունը, պայմանով, որ այդ հանցանքը (հանցանքները) կատարվել է (են) անձի տասնութ տարին լրանալուց հետո: Ընդ որում՝ մինչև տասնութ տարին լրանալը անձի կողմից կատարած հանցանքները ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»<sup>36</sup>:

Արամայիս Հարությունյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը որպես հանցագործությունների ռեցիդիվի պարտադիր հատկանիշ ընդգծել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անձի դատապարտվելու և նախքան հանցագործության համար անձի դատվածությունը մարվելը կամ հանվելը նոր դիտավորյալ հանցանք կատարելու հանգամանքը<sup>37</sup>:

Այսպիսով, ռեցիդիվի առկայության առաջին օրենսդրական պահանջը նախկին և նոր կատարվող հանցանքների *դիտավորյալ բնույթն է*, ինչը, սակայն, քրեական իրավունքի տեսության մեջ միանշանակ չի ընդունվում: Որոշ հեղինակներ առաջարկում են հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունն ավելի լայն դիտարկել և որպես այդպիսին գնահատել ոչ միայն դիտավորյալ, այլև անզգույշ հանցանքներ կատարելը: Նրանց կարծիքով ռեցիդիվի առկայությունը մեղքի ձևից կախվածության մեջ դնելը ճիշտ չէ, քանի որ օրենսդիրը հանցավոր է համարում ոչ միայն դիտավորյալ, այլև անզգույշ արարքները: Հասարակությունն անզգույշ հանցագործություններից ոչ պակաս պաշտպանության կարիք ունի, քան դիտավորյալ արարքներից, իսկ ռեցիդիվի առկայությունը միայն դիտավորյալ հանցագործություններով պայմանավորելը բխում է անզգույշությամբ կատարվող արարքների վտանգավորության թերագնահատումից: Այսպես՝ անզգույշ հանցանքների մեծ մասը կատարվում է արտահայտված հակահասարակական կողմնորոշում ունեցող իրավախախտների կողմից, ովքեր իրավակարգի, սոցիալական արժեքների, այլոց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ ունեն բացահայտ

<sup>36</sup> Տե՛ս **Սամվել Բալյանի** վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԿԴ1/0059/15/13 որոշումը:

<sup>37</sup> Տե՛ս **Արամայիս Հարությունյանի** վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՍԴ/0204/01/13 որոշումը:

արհամարհական, թերևամիտ-անպատասխանատու վերաբերմունք<sup>38</sup>:

Ոմանք նույնիսկ առաջարկում են անզգույշ հանցագործությունների կրկնությունն անվանել անզգույշ ռեցիդիվ, ինչը վկայելու է հասարակական անվտանգության կանոնների պահպանության նկատմամբ անձի մեջ առկա կայուն բացասական կողմնորոշումների մասին<sup>39</sup>:

Տեսության մեջ որպես փաստարկ մատնանշվել է նաև այն, որ եթե անուղղակի դիտավորության պարագայում ռեցիդիվի կանոնները կիրառելի են, ապա պետք է կիրառելի լինեն նաև անզգույշ հանցագործությունների դեպքում, քանի որ անուղղակի դիտավորությամբ կատարվող արարքները առավելագույնս մոտ են անզգույշ հանցագործություններին. երկու դեպքում էլ հանցավորի մոտ բացակայում է համապատասխան հետևանքների առաջացումը ցանկանալու հանգամանքը<sup>40</sup>:

Կարծում ենք՝ վերոնշյալ դիրքորոշումներին չի կարելի համաձայնել, և օրենսդիր որդեգրած մոտեցումը՝ ռեցիդիվը գնահատելիս միայն դիտավորյալ հանցանքները հաշվի առնելու վերաբերյալ, ճիշտ է: Այսպես՝ բազմակիության տեսակները սահմանելիս օրենսդիրը հաշվի է առնում միաժամանակ թե՛ կատարվող արարքների, թե՛ հանցավորի անձի վտանգավորությունը՝ դրանց համապատասխան ապահովելով կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների համաչափ խստացում: Նշված առումով հանցագործությունների ռեցիդիվը բազմակիության առավել վտանգավոր տեսակն է, և դրա առկայությունն անձի նկատմամբ նշանակվող պատժի խստացման պարտադիր պայման է: Ուստի կարելի է պնդել, որ անձի իրավունքների և օրինական շահերի էական սահմանափակումներն արդարացված են միայն հանցավորի անձի և հանցավոր վարքագծի առավել վտանգավոր դրսևորումների դեպքում: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով, որ անզգույշ հանցագործությունների դեպքում անձի

---

<sup>38</sup> Տե՛ս **Ազաев И. Б.** Рецидив в системе множественности преступлений, М., 2002, էջ 24- 25, **Кафаров Т. М.** Проблема рецидива в советском уголовном праве, Баку, 1972, էջ 27, **Зелинский А. Ф.** Рецидив преступлений. Структура, связи, прогнозирование, Харьков, 1980, էջ 9-10, **Красиков Ю. А.** Множественность преступлений: Учебное пособие, М., 1988, էջ 31-32, **Куринов Б. А.** Научные основы квалификации преступлений, М., 1984, էջ 163:

<sup>39</sup> Տե՛ս **Голик Ю. В., Мирончик И. Я.** Неосторожный рецидив: Уголовно-правовой и криминологический аспекты // Уголовно-правовые меры борьбы с преступностью в условиях перестройки. Межвузовский сборник научных трудов, Свердловск, 1990, էջ 60-65:

<sup>40</sup> Տե՛ս **Козлов А. П., Севастьянов А. П.** Единичные и множественные преступления, СПб, Санкт-Петербург, 2011, էջ 208-209:

թեթևամիտ-անպատասխանատու կամ անփույթ վարքագծի պատճառով հասարակությանը և նրա անդամներին կարող է երբեմն հավաքական իմաստով ավելի մեծ վնաս պատճառվել, քան դիտավորյալ հանցանքի պարագայում, այնուամենայնիվ առանձին վերցրած դիտավորյալ արարքները և դրանք կատարող անձինք շատ ավելի մեծ վտանգավորություն են ներկայացնում:

Դժվար է համաձայնել նաև այն փաստարկին, որ անզգույշ հանցագործություններն առավելագույնս մոտ են անուղղակի դիտավորությամբ կատարվող արարքներին, և եթե անուղղակի դիտավորությամբ կատարված հանցանքի համար առկա դատվածությունը հիմք է անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու համար, ապա նույնը պետք է դիտել նաև անզգույշ հանցանքների պարագայում: Մասնավորապես, թեպետ երկուսն էլ բնութագրվում են հանցավոր հետևանքների առաջացումը չցանկանալով, այնուամենայնիվ անուղղակի դիտավորությունն անզգուշությունից էականորեն տարբերվում է անձի գիտակցական և կամային ոլորտներում ընթացող «գործընթացների» առանձնահատկություններով, որոնք վկայում են անձի և արարքի առավել բարձր վտանգավորության մասին, քան անզգույշ մեղքի ձևով դրսևորվող արարքների պարագայում<sup>41</sup>:

Այսպիսով, կարծում ենք, որ հանցագործությունների ռեցիդիվի էությունը հանցավորի գիտակցության մեջ կայուն և խոր հանցավոր հայացքների, սովորույթների, ձգտումների, հստակ արտահայտված հակահասարակական կողմնորոշումների արմատավորումն է: Հանցավոր վարքագծի պարբերականությունը բացասաբար է անդրադառնում այլ անձանց, հատկապես երիտասարդության հոգեբանության վրա՝ նրանց մեջ առաջ բերելով անպատժելիության թյուր պատկերացում, նպաստելով բնակչության քրեականացմանը, որով էլ պայմանավորվում է պատիժ նշանակելու հատուկ կանոնների նախատեսումը: Հանցագործությունների ռեցիդիվի վերոնշյալ իրավական բնութագիրը վկայում է միայն

---

<sup>41</sup> Մեղքի դիտավորյալ և անզգույշ ձևերի տարբերակման չափանիշների մասին մանրամասն տե՛ս ՀՀ քրեական իրավունքի դասագիրքը, Ընդհանուր մաս, Երևան, 2012, էջ 192-208, **Քարոզ Ա. Ի.** Субъективная сторона и квалификация преступлений, М., 2001, էջ 26-55, **Дазель П. С.** Неосторожность. Уголовно-правовые и криминологические проблемы, М., 1977, էջ 6-20, **Векленко С. В.** Понятие, сущность, содержание и формы вины в уголовном праве, Омск, 2002, էջ 144-163 և այլ աղբյուրներ:

դիտավորյալ մեղքի ձևի մասին, իսկ անզգույշ հանցագործությունները հիմնականում իրավիճակային բնույթ ունեն, չեն վկայում հանցավորի մեջ խոր և կայուն հանցավոր կողմնորոշումների առկայության մասին: Տեղին է մեջբերել Պ. Ֆ. Գրիշանինի այն կարծիքը, որ «[Հ]անցագործությունների ռեցիդիվը հոգեբանական առումով անձի կողմից նախկին դատապարտումը գիտակցաբար արհամարհելն է: Իսկ նախորդ դատապարտումը գիտակցաբար արհամարհելու, անձի հակահասարակական հայացքների և սովորույթների կայունության մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ դատապարտվելուց առաջ և հետո կատարվել են դիտավորյալ հանցանքներ»<sup>42</sup>:

Սակայն հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս միայն դիտավորյալ հանցանքները հաշվի առնելու վերաբերյալ օրենսդրական պահանջը դատարանների կողմից երբեմն անտեսվում է: Այսպես՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թ. մայիսի 4-ի դատավճռով ամբաստանյալ Կ.Մնացականյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 242-ի 1-ին մասով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը) և 244 հոդվածով (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը): Դատարանն արձանագրել է, որ վերջինիս արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ և պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասի կանոններով՝ անտեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 242-ը ենթադրում է միայն մեղքի անզգույշ ձև, հետևաբար նախկինում ունեցած դատվածությունը չէր կարող գնահատվել որպես հանցագործությունների ռեցիդիվ: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 244-ով պատիժ նշանակելիս որպես ծանրացնող հանգամանք ռեցիդիվը գնահատելուն, ապա կարծում ենք, որ այդ առումով ևս դատարանը սխալ եզրահանգման է եկել, քանի որ նախկինում կատարած հանցանքի համար ամբաստանյալը համաներման ակտի կիրառմամբ ազատվել էր պատիժը կրելուց, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 3-րդ մասի ուժով համարվում էր դատվածություն չունեցող: Ուստի ամբաստանյալ Կ.Մնացականյանի արարքում

<sup>42</sup> Տե՛ս **Гришанин П. Ф.** Ответственность преступников-рецидивистов по советскому уголовному праву, М., 1974, էջ 20:

հանցագործությունների ռեցիդիվը բացակայում էր<sup>43</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդունել, որ անզգույշ հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից կրկին անզգույշ հանցանքի կատարումն անկասկած բացասական առումով է բնութագրում հանցավորի անձը, վկայում այլոց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ վերջինիս արհամարհական վերաբերմունքի մասին, ինչը, կարծում ենք, պետք է արտացոլվի պատիժ նշանակելու ընթացքում: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 2-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հաշվի է առնվում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս: Նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ առկա դատվածությունը պատիժ նշանակելիս հաշվի առնելու պահանջը մեղքի ձևից որևէ կախվածության մեջ չի դրվում: Հետևաբար, դատարանը կաշկանդված չէ նախկինում անզգույշ հանցագործության համար դատվածություն ունեցող և կրկին հանցանք կատարած (հավասարապես նաև՝ դիտավորյալ հանցանքի համար դատվածություն ունեցող և կրկին անզգույշ հանցանք կատարած կամ անզգույշ հանցագործության համար դատվածություն ունեցող և կրկին անզգույշ հանցանք կատարած) անձի նկատմամբ պատիժ նշանակելիս վերջինիս ունեցած դատվածությունը դիտել որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանք<sup>44</sup> և հաշվի առնել նրա նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև պատժի կրման նպատակահարմարության հարցը որոշելիս:

Այս առումով ճիշտ մոտեցում է դրսևորվել Նախագծի հոդված 73-ում, որտեղ պատիժը ծանրացնող հանգամանք է դիտվում հանցանքը *դատվածություն* ունեցող անձի կողմից կատարելը՝ ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի հոդված 63-ի, որը որպես ծանրացնող հանգամանք է նախատեսում հանցանքը կատարելու *ռեցիդիվը*: Այլ խոսքով՝ ներկա կարգավորումը թույլ չի տալիս որպես ծանրացնող հանգամանք գնահատել առկա դատվածությունն այն պարագայում, երբ վերջինս չի ձևավորում հանցագործությունների ռեցիդիվ:

<sup>43</sup> Տե՛ս Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԱԴԴ/0073/01/14 գործով 2015 թվականի մայիսի 4-ի դատավճիռը:

<sup>44</sup> Պետք է նկատել, որ առկա դատվածությունը չի կարող դիտվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, քանի որ ծանրացնող հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ում թվարկված են սպառիչ կերպով, իսկ անձի դատվածություն ունենալու հանգամանքն այնտեղ բացակայում է:



Հետաքրքրություն է ներկայացնում օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցանքի համար առաջացած դատվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքում նոր հանցանք կատարելու դեպքում հաշվի առնելու և անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու հարցը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 17-ը (Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս անձի դատապարտվելու իրավական հետևանքները) սահմանում է՝

*«1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Հայաստանի Հանրապետության տարածքում:*

*2. Սույն հոդվածի առաջին մասին համապատասխան հանցագործությունների ռեցիդիվը, չկրած պատիժը կամ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի այլ իրավական հետևանքները հաշվի են առնվում նոր հանցանքը որակելիս, պատիժ նշանակելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս»:*

Վերոնշյալ նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում, այսինքն, *եթե դատարանը հաշվի է առնում* օտարերկրյա պետության դատավճիռը, ապա այլ պետության տարածքում դատապարտման հետևանքով առաջացած դատվածությունը *պետք է հաշվի առնվի հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս:* ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 17-ի 1-ին մասով նախատեսված՝ *«կարող է հաշվի առնվել»* արտահայտությունը, մեր կարծիքով, պետք է մեկնաբանվի որպես օտարերկրյա պետության դատավճռի ճանաչում: Այլ կերպ ասած՝ օտարերկրյա պետության տարածքում դատապարտման արդյունքում առաջացած դատվածությունը հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի է առնվում, եթե տվյալ պետության դատավճիռը ճանաչվում է Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.8-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա*

են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով (...):»:

Մեջբերված քրեադատավարական նորմը ցույց է տալիս, որ օտարերկրյա պետությունների դատավճիռները ՀՀ-ում ճանաչվում են միայն պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, որոնցով էլ սահմանվում են ճանաչման ենթակա դատավճիռների տեսակները և ճանաչման հիմքերը:

Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների միջև երկկողմ իրավահարաբերությունները կարգավորվում են 1993 թվականի հունվարի 22-ին Մինսկում կնքված <<Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին>> կոնվենցիայով (այսուհետ՝ Մինսկի կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի դեկտեմբերի 21-ից<sup>45</sup>: Մինսկի կոնվենցիայի հոդված 76.1-ի համաձայն՝ «Անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու, հանցագործության կրկնակի կատարման և պայմանական դատապարտման, դատավճռի կատարման հետաձգման կամ պայմանական վաղալեզու ազատման հետ կապված պարտականությունների խախտման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելիս՝ Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները կարող են ճանաչել և հաշվի առնել այն դատավճիռները, որոնք կայացրել են (...) Պայմանավորվող կողմերի դատարանները»:

Այսպիսով, Մինսկի կոնվենցիան նախատեսում է, ի թիվս այլ հանգամանքների, նաև առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու և հանցագործության կրկնակի կատարման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելու նպատակով դատավճիռների ճանաչման հնարավորություն: Ճիշտ է, ՀՀ՝ 2003 թ. ընդունված

<sup>45</sup> Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ին Մինսկ քաղաքում կնքված կոնվենցիան:

քրեական օրենսգիրքը հրաժարվել է առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի գաղափարից, սակայն օտարերկրյա պետության դատավճիռը կարող է Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել հանցագործության կրկնակի կատարման փաստերը պարզելու համար, որի մեջ մտնում է նաև հանցագործությունների ռեցիդիվը:

Մինսկի կոնվենցիայի հոդված 79-ի 2-րդ մասը նախատեսում է նաև պայմանավորվող կողմերին դատվածության մասին տեղեկություններ տրամադրելու ընթացակարգ: Մասնավորապես՝ *«Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմերին, խնդրանքի դեպքում, անվճար տրամադրում է տեղեկություններ իր դատարանների կողմից նախկինում դատապարտված անձանց դատվածության վերաբերյալ, եթե այդ անձինք քրեական պատասխանատվության են կանչվում հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում»*: Սակայն կարծում ենք, որ առանց օտարերկրյա պետության դատավճիռը ՀՀ-ում ճանաչելու և ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերին համապատասխանեցնելու, առկա դատվածությունը չի կարող ռեցիդիվը գնահատելիս հաշվի առնվել, քանի որ դա չի բխում ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 17-ի, այնպես էլ քննարկվող միջազգային պայմանագրի բովանդակությունից:

Օտարերկրյա պետությունում դատապարտման իրավական հետևանքները ԱՊՀ անդամ պետություններում կարգավորվում են նաև 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնև քաղաքում կնքված *«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին»* կոնվենցիայով (այսուհետ՝ Քիշնևի կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 19-ին<sup>46</sup>: Քիշնևի կոնվենցիայի հոդված 99-ի 2-րդ մասի համաձայն՝ *«Անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու կամ նրա գործողություններում տարբեր տեսակների ռեցիդիվի առկայության վերաբերյալ, կրկնակի հանցագործություն կատարելու փաստերը պարզելու և պայմանական դատապարտման հետ կապված պարտականությունները խախտելու, դատավճիռի կատարումը հետաձգելու կամ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ հարցերը լուծելիս Պայմանավորվող կողմերի արդարադատության հիմնարկները*

<sup>46</sup> Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնև քաղաքում կնքված կոնվենցիան:

կարող են ճանաչել և հաշվի առնել նախկին ԽՍՀՄ և նրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետությունների դատարանների (տրիբունալների), ինչպես նաև յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի դատարանների կողմից կայացված դատավճիռները»:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ օտարերկրյա պետության տարածքում որևէ հանցագործության համար դատապարտվելու հետևանքով առաջացած դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս կարող է հաշվի առնվել միայն նշված դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու և ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու պարագայում, ինչը հնարավոր է ՀՀ-ի և կոնկրետ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրի առկայության դեպքում. զուտ դատվածության փաստի առկայությունը բավական չէ անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու համար: Հակառակ մեկնաբանության պարագայում, այն է՝ դատվածության փաստը մեխանիկորեն հաշվի առնելը՝ առանց համապատասխան օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման և ՀՀ քրեական օրենսգրքի նորմերին համապատասխանեցնելու, կարող է շատ դեպքերում հանգեցնել ռեցիդիվի կամ դրա տեսակների սխալ գնահատման՝ վատթարացնելով անձի վիճակը և նրա համար առաջ բերելով բացասական իրավական հետևանքներ:

Սակայն իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն այլ ուղղությամբ է ընթանում: Մասնավորապես թիվ ԵԿԴ/0080/01/16 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ բացակայում է որևէ օրենսդրական կամ կոնվենցիոն պահանջ, որը կպարտավորեցներ դատարանին նախ՝ ճանաչելու օտարերկրյա պետության դատավճիռը, ապա միայն՝ ռեցիդիվը գնահատելու որպես ծանրացնող հանգամանք: Արդյունքում դատարանը, հաշվի առնելով, որ քննվող գործով հանրորեն վտանգավոր արարքը կատարելիս ամբաստանյալը համարվել է դատվածություն ունեցող և նախկինում ՌԴ-ում կատարել է միջին ծանրության հանցանք, որի համար դատվածությունը մարված չէ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 22-ի և 63-ի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ որպես վերջինիս

պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել հանցանքը կատարելու ռեցիդիվը<sup>47</sup>:

Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի կողմից *Վահրամ Ավետիսյանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը վկայակոչելուն, ապա պետք է նկատենք, որ այնտեղ խոսք է եղել ոչ թե հանցագործությունների ռեցիդիվի, այլ հանցագործությունների համակցության կանոնների կիրառման նպատակով օտարերկրյա պետության դատավճիռը ճանաչելու մասին՝ ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գործող միջազգային պայմանագրով *չի նախատեսվում հանցանքների համակցությամբ պարիթ նշանակելու նպատակով միմյանց դատավճիռները ճանաչելու իրավական հնարավորություն*: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Մեջբերված կոնվենցիոն դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ Մինսկի կոնվենցիան նախատեսում է բացառապես դատական ակտերի քաղաքացիական հայցի մասը ճանաչելու և կատարելու, ինչպես նաև **առանձնապես վրանգավոր ռեցիդիվի**, հանցագործության կրկնակի կատարման և պայմանական դատապարտման, դատավճռի կատարման հետաձգման կամ պայմանական վաղալեզու ազատման հետ կապված պարտականությունների խախտման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելու նպատակով **դատավճիռների ճանաչման հնարավորություն**»<sup>48</sup>:

Առաջին ատյանի դատարանի քննարկվող դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ մերժվել է: Ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալի պաշտպանը՝ իրավացիորեն փաստարկելով, որ «քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից դատարան չի ներկայացվել և գործում բացակայում են Ռուսաստանի Դաշնության դատարանի համապատասխան դատական ակտերը, բացակայում է որևէ տվյալ՝ այդ դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչված լինելու վերաբերյալ: Հետևաբար ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրված ՀՀ ոստիկանության

<sup>47</sup> Տե՛ս Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0080/01/16 գործով 2016 թվականի հուլիսի 8-ի դատավճիռը:

<sup>48</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱԲԴ/0161/01/13 գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը:

հնդերպոլի ԱԿԲ հաշվառումների տվյալները չեն կարող բավարար լինել ամբաստանյալ Կարեն Մարությանի նախկինում դատված լինելը հաստատված համարելու և ռեցիդիվը գնահատելու համար»։ Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում<sup>49</sup>։

Հանցագործությունների ռեցիդիվի հաջորդ պարտադիր հատկանիշը *դատվածության* առկայությունն է։ Դատվածության և ռեցիդիվի ինստիտուտները սերտորեն կապված են միմյանց հետ. դատվածությունն անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվի գնահատման և բազմակիության մյուս տեսակներից տարբերակման հիմնական նախապայմանն է, թեպետ տեսության մեջ նաև հակառակ տեսակետն է արտահայտվել։ Մասնավորապես ռուս հայտնի իրավագետ Բ. Ս. Ուտևսկին դեռևս 20-րդ դարի սկզբներին կարծիք է հայտնել այն մասին, որ ռեցիդիվն առկա է հանցավոր արարքների կրկնության բոլոր դեպքերում՝ անկախ նրանից՝ անձը նախկինում դատապարտվել կամ պատիժ կրել է, թե ոչ։ Ակնհայտ է, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե լեզալ կամ քրեաիրավական, այլ կրիմինալոգիական կամ փաստացի ռեցիդիվի մասին էր<sup>50</sup>։

Դատվածությունը քրեական պատասխանատվության իրագործման տարրերից մեկն է՝ անձի յուրահատուկ իրավական վիճակ, որն առաջանում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով՝ անձին պատժի դատապարտելու փաստով։ Այլ կերպ ասած՝ դատվածության առկայությունը ենթադրում է, որ անձը նախկինում կատարված արարքի համար ***դատապարտվել է պատժի***, ուստի կարելի է պնդել, որ դատվածությունն անձի նկատմամբ պատիժ նշանակելու հետևանք է, ինչը բխում է նաև գործող քրեական օրենսգրքի տրամաբանությունից։

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 3-րդ մասի համաձայն՝ դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով *դատապարտվել են առանց պատիժ նշանակելու* կամ դատարանի դատավճռով *ազատվել են պատիժը կրելուց* (կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի

<sup>49</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0080/01/16 գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2017 թվականի մայիսի 26-ի որոշումը։

<sup>50</sup> Տե՛ս **Утевский Б. С.** Преступность и рецидив // Современная преступность (преступление, пол, репрессия, рецидив), М., 1927, էջ 32։

հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով): Նման դեպքերում դատվածություն չառաջանալը, կարծում ենք, պայմանավորված է պետության կողմից անձի նկատմամբ փաստացի հարկադրական ներգործություն չիրականացնելու հանգամանքով, մինչդեռ դատվածությունը վկայում է, որ հանցագործը, արդեն իսկ ենթարկված լինելով պետական հարկադրանքի միջոցի նախկինում կատարված հանցանքի համար, անհրաժեշտ դասեր չի քաղել և չի կանգնել ուղղման ճանապարհին, ինչն էլ հետագայում նոր հանցավոր արարք կատարելու պարագայում անձի համար առաջացնում է որոշակի բացասական հետևանքներ:

Դատվածություն չառաջացնող վերոնշյալ իրավիճակների պարզաբանումը կարևոր է հատկապես հանցագործությունների ռեցիդիվի գնահատման տեսանկյունից: Այսպես՝ առանց պատիժ նշանակելու դատապարտվելու դեպքերը քրեական օրենսգրքում հստակեցված չեն: Կարելի է եզրակացնել, որ եթե դատավճիռ կայացնելիս առկա է պատիժ նշանակելու անհնարինություն, ապա դատարանը կարող է անձին դատապարտել առանց պատիժ նշանակելու: Քրեական օրենսգրքում նշված իրավիճակների հստակ կանոնակարգման բացակայությունը պրակտիկայում կարող է հանգեցնել կամայականությունների և տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տալ, ուստի առանց պատիժ նշանակելու դատապարտվելու դեպքերը պետք է օրենքում մանրամասն կարգավորում ստանան:

Ինչ վերաբերում է դատարանի դատավճռով անձին պատիժը կրելուց ազատելուն, ապա առաջին հայացքից թվում է, թե պատժից ազատելու բոլոր դեպքերում դատվածություն չի առաջանում, սակայն հոդված 84-ի 4-րդ և 5-րդ մասերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժից ոչ լրիվ և պայմանական ազատվելու պարագայում, մասնավորապես՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում անձը համարվում է դատվածություն ունեցող: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 4-րդ մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում դատվածությունը մարվում է փորձաշրջանն անցնելուց հետո, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն

ավելի մեղմ պատժով փոխարինելու դեպքում դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է հիմնական և լրացուցիչ պատիժը կրելուց ազատվելու պահից:

Հետևաբար կարող ենք արձանագրել, որ դատվածություն չեն առաջացնում պատժից ոչ պայմանական և լրիվ ազատվելու դեպքերը, ինչպիսիք են, օրինակ, արտակարգ հանգամանքների կամ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելը: Միևնույն ժամանակ դատվածության առկայության կամ բացակայության հարցը բաց է մնում անձին ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 78-ով և 79-ով նախատեսված կարգով պատժից ազատելու դեպքերում, այն է՝ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը և ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 78-ի (հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը) 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու համապատասխան ժամանակահատվածի ընթացքում (այն ժամկետը, որի ընթացքում կինն ազատվում է աշխատանքից հղիության, ծննդաբերության, ինչպես նաև երեխայի մինչև երեք տարեկան դառնալու կապակցությամբ) դատարանը կարող է՝

1. դատապարտյալին ուղարկել դատավճռով նշանակված պատիժը կրելու, եթե դատապարտված անձը հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, որի համար գրավոր նախազգուշացվում է իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից,

2. դատապարտյալի նկատմամբ պատիժ նշանակել սույն օրենսգրքի հոդված 67-ով նախատեսված կանոններով, եթե վերջինս պատիժը կրելուց ազատվելու ժամանակահատվածում կատարում է նոր հանցանք,

3. երեխան երեք տարեկան դառնալուց հետո կամ նրա մահվան դեպքում՝

- դատապարտյալին ազատել պատիժը կրելուց կամ
- պատիժը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ



- դատապարտյալին ուղարկել պատժի չկրած մասը կրելու:

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ դատապարտյալը համապատասխան ժամկետի ընթացքում հետ է ուղարկվում պատիժը կրելու կամ կատարում է նոր հանցանք, կամ պատիժը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա վերջինս համարվում է դատվածություն ունեցող, ինչը մարվում կամ հանվում է օրենքով սահմանված կարգով: Հետևաբար նախքան դատվածությունը մարվելը կամ հանվելը նոր հանցանք կատարելու դեպքում առկա կլինի նաև հանցագործությունների ռեցիդիվ: Մինչդեռ եթե համապատասխան ժամկետը լրանալուց հետո դատարանը որոշում է անձին ազատել պատիժը կրելուց, ապա այդ պահից սկսած անձը պետք է համարվի դատվածություն չունեցող:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 79-ով նախատեսված ծանր հիվանդության հետևանքով անձին պատժից ազատելուն, ապա նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջանալու դեպքում անձը կարող է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել, եթե վաղեմության ժամկետները չեն անցել: «Կարող է» արտահայտությունը վկայում է, որ առողջանալու դեպքում հանցավորին քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, հետևաբար եթե դատարանը անձին ազատի պատիժը կրելուց, ապա վերջինս կհամարվի դատվածություն չունեցող: Ուստի դրանից հետո նոր հանցանք կատարելու դեպքում անձի արարքում չի կարող հանցագործությունների ռեցիդիվ գնահատվել:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև համաներման ակտի կիրառման դեպքում դատվածության առկայության խնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 82-ի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»: Մեջբերված նորմի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ երբ անձը համաներման ակտի ընդունմամբ ազատվում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից

ամբողջությամբ, ապա համարվում է դատվածություն չունեցող, իսկ եթե պատժից ազատվում է մասնակիորեն կամ պատժի չկրած մասը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա պետք է համարվի դատվածություն ունեցող, քանի դեռ այն չի մարվել կամ հանվել օրենքով սահմանված կարգով: Հետևապես այդ ընթացքում նոր հանցանք կատարելու պարագայում առկա կլինի հանցագործությունների ռեցիդիվ:

Այս առումով, սակայն, դատական պրակտիկայում հաճախ սխալներ են թույլ տրվում: Մասնավորապես մի շարք դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համաներման ակտի կիրառմամբ անձին ամբողջությամբ պատիժը կրելուց ազատելու պարագայում դատարանները վերջինիս համարում են դատվածություն ունեցող, և նրա կողմից նոր հանցանք կատարվելու դեպքում այն գնահատում որպես հանցագործությունների ռեցիդիվ՝ անտեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 3-րդ մասի համաձայն՝ պատիժը կրելուց ազատվելու դեպքում անձը համարվում է դատվածություն չունեցող<sup>51</sup>: Դատարանների հիմնական փաստարկն այն է, որ մեջբերված նորմը պարտավորեցնում է, որ անձը պատիժը կրելուց ազատվի դատարանի դատավճռով, իսկ եթե ազատվում է որոշմամբ, ապա պետք է համարվի դատվածություն ունեցող: Վերոնշյալի կապակցությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավացիորեն արձանագրել է. այն հանգամանքը, որ հանցավորը պատժի կրումից ազատվում է ոչ թե դատարանի դատավճռով, այլ որոշմամբ, չի կարող որևէ կերպ սահմանափակել նրա իրավունքները և ազատությունները<sup>52</sup>:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ցանկացած դիտավորյալ հանցագործության դատվածություն չէ, որ առաջացնում է հանցագործությունների ռեցիդիվ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 4-րդ մասի համաձայն՝ այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

<sup>51</sup> Տե՛ս Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ի թիվ ԱՎԴ2/0010/01/15 գործով, Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ2/0025/01/15 գործով, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԿԴ1/0130/01/14 գործով դատավճիռները:

<sup>52</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԱՎԴ2/0010/01/15 գործով որոշումը:

Վերջինը քրեական օրենսգրքում անչափահասների նկատմամբ մարդասիրության կարևոր դրսևորում է: Հաշվի առնելով անչափահասների տարիքային և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները՝ անընդունելի է նրանց նկատմամբ չափազանց խիստ պատիժների նշանակումը, ինչը բխում է նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված միջազգային մի շարք կոնվենցիաների պահանջներից: Դրանց համաձայն՝ հասարակությունից մեկուսացնելու հետ կապված պատժատեսակները անչափահասների նկատմամբ պետք է կիրառվեն որպես ծայրահեղ միջոց՝ հնարավոր նվազագույն ժամկետներով և սահմանափակ ու բացառիկ դեպքերում, քանի որ ի տարբերություն չափահասների՝ ազատազրկման բացասական հետևանքները նրանց վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում<sup>53</sup>: Ուստի, կարծում ենք, որ մինչև 18 տարին լրանալը կատարված հանցանքի համար դատվածությունը հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չառնելու պահանջը միանգամայն արդարացված է:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվը գնահատելու հարցում որևէ սահմանափակում չի նախատեսվում՝ պայմանավորված հանցագործության տեսակով: Այսինքն՝ հանցագործությունների ռեցիդիվը հավասարապես առկա է նախկինում կատարված ոչ մեծ, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատվածություն ունենալու դեպքում: Մեր կարծիքով ճիշտ կլիներ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դատվածությունը հաշվի չառնել ռեցիդիվը գնահատելիս: Այսպես՝ հանցագործությունների դասակարգման հիմքում ընկած է կատարված արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործություններն իրենցից համեմատաբար նվազ վտանգավորություն են ներկայացնում: Վերոնշյալով պայմանավորված՝ օրենսդիրը դրանց համար որպես պատիժ նախատեսում է ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակներ:

Մինչդեռ հանցագործությունների ռեցիդիվն արտահայտվում է անձի

<sup>53</sup> Ի թիվս այլոց, տե՛ս նաև «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Ազատազրկված անչափահաս անձանց պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները («Հավանայի կանոններ»):

իրավունքների էական սահմանափակմամբ՝ հանգեցնելով օրենքով նախատեսված հիմքերի շրջանակներում հանցավորի նկատմամբ նշանակվող պատժի խստացման և բացասական այլ հետևանքների: Մասնավորապես ռեցիդիվի առկայության դեպքում հանցանք կատարած անձի նկատմամբ ընտրվում է սանկցիայով նախատեսված ամենախիստ պատիժը՝ որպես կանոն, ազատազրկման ձևով, որի ժամկետներն էականորեն խստացվում են: Վերոշարադրյալի համատեքստում գնահատելով ոչ մեծ ծանրության հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ կարծում ենք՝ դրանց համար դատվածությունը չպետք է հետագայում նոր հանցանք կատարելու դեպքում անձի արարքում ռեցիդիվ գնահատելու հիմք լինի: Վերոնշյալը բխում է նաև վերջին ժամանակներում բավականին տարածված վերականգնողական արդարադատության գաղափարից, որը բազմաթիվ պետություններում դարձել է քրեական քաղաքականության հիմնական ուղղությունը (<<restorative justice>>)<sup>54</sup>: Մասնավորապես այն կոչված է փնտրելու ավանդական պատժողական քաղաքականությանն այլընտրանքային լուծումներ, որոնք հնարավորինս նվազագույնի կհասցնեն ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների կիրառումը, կնպաստեն հանցավորի վերասոցիալականացմանը և վերջինիս հասարակություն հեշտությամբ ինտեգրելուն<sup>55</sup>: Այսպես՝ ազատազրկում պատժատեսակը վաղուց ապացուցել է իր անարդյունավետությունը, երբեմն նույնիսկ՝ բացասական ազդեցությունը հանցավոր ենթամշակույթի տարածման, հասարակության քրեականացման, հետևաբար նաև՝ ռեցիդիվային հանցավորության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

Ուստի այս տեսանկյունից ևս նպատակահարմար չէ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործության դատվածությունը հետագայում հաշվի առնել անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելիս: Նշենք, սակայն, որ խոսքը վտանգավոր կրկնահանցագործների մասին չէ, որոնց նկատմամբ կիրառված պետական հարկադրանքի միջոցները եղել են անարդյունավետ, ուստի վերջիններիցս հասարակությունը պաշտպանելու և նրանց կողմից նոր հանցավոր արարքները

<sup>54</sup> Տե՛ս **Ховард Зер** Восстановительное правосудие: новый взгляд на преступление и наказание: Пер с англ. / Под общ. ред. Л. М. Карнозовой, М.: МОО Центр «Судебно-правовая реформа», 2002, էջ 84-85:

<sup>55</sup> Տե՛ս **Карнозова Л. М.** Медиация по уголовным делам в российской правовой системе, М.: МОО Центр «Судебно-правовая реформа», 2013, էջ 5-7:

կանխարգելելու միակ ճանապարհը նրանց մեկուսացնելն է:

Միևնույն ժամանակ ոչ մեծ ծանրության հանցանքի դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս հաշվի չառնելու դեպքում անհրաժեշտ է օրենքում հատուկ ընդգծել, որ խոսքը վերաբերում է առաջին անգամ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործության դատվածությանը: Մինչդեռ եթե անձը կատարել է այլ տեսակի հանցանք և ունի դատվածություն ու նորից հանցավոր արարք է կատարում, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության, կամ եթե ոչ մեծ ծանրության հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտվելուց հետո կրկին կատարում է ոչ մեծ ծանրության հանցանք, ապա հանցագործությունների ռեցիդիվը պետք է առկա համարել, քանի որ կրկնվող հանցավոր վարքագիծը վկայում է նրա նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները խստացնելու անհրաժեշտության մասին:

Նախագծի սկզբնական տարբերակում առաջարկվում էր հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չառնել պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում առաջացած դատվածությունը, եթե պատիժը պայմանականորեն չկիրառելը չէր վերացվել, և անձը չէր ուղարկվել պատիժը կրելու (Նախագծի հոդված 56-ի 2-րդ մասի 4-րդ կետ), սակայն հետագայում հեղինակներն իրավացիորեն հրաժարվեցին նշված գաղափարից, քանզի այն պրակտիկ կիրառման ընթացքում կարող էր մի շարք խնդիրներ առաջացնել:

Մասնավորապես, *«եթե պատիժը պայմանականորեն չկիրառելը չի վերացվել և անձը չի ուղարկվել պատիժը կրելու»* ձևակերպումը մեկնաբանության կարիք ուներ. պարզ չէր՝ եթե անձը փորձաշրջանի ընթացքում հանցանք էր կատարում և պայմանական դատապարտումը վերացվում էր, արդյոք տվյալ դեպքում պատիժ նշանակելիս ռեցիդիվի կանոնները պետք է կիրառվեին, թե ոչ, արդյոք կարող էր առաջին դատվածությունը ռեցիդիվ առաջացնել: Հարկ է նկատել, որ նման կարգավորում ներկայումս առկա է ՌԴ քրեական օրենսգրքում, ինչը պրակտիկայում տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տվել: Այսպես՝ ՌԴ Գերագույն դատարանի դատական կոլեգիան փոխել է Սանկտ-Պետերբուրգի քաղաքային դատարանի դատավճիռը, որով Մ.-ն դատապարտվել էր ազատազրկման՝ հանցագործությունների ռեցիդիվի գնահատմամբ: Դատական կոլեգիան նշել է, որ Մ.-

ի պայմանական դատապարտումը վերացվել էր ոչ թե ավելի վաղ, այլ միայն քննարկվող դատավճռով, հետևաբար առաջին դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս չէր կարող հաշվի առնվել<sup>56</sup>:

Բավականին երկար ժամանակ քրեական իրավունքի գիտության մեջ շարունակվում է վիճելի մնալ հանցագործի կողմից պատիժն ամբողջությամբ կամ մասամբ կրելու հանգամանքը ռեցիդիվի գնահատման պարտադիր հատկանիշ դիտելու հարցը:

Այս կապակցությամբ կարելի է առանձնացնել երկու հիմնական դիրքորոշում՝

- ռեցիդիվը նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարումն է՝ անկախ այն հանգամանքից՝ անձը պատիժը փաստացի կրել է, թե ոչ<sup>57</sup>: Այս դիրքորոշման կողմնակիցներն ընդգծում են, որ դատապարտվելուց հետո նոր հանցանքի կատարումն արդեն իսկ վկայում է, որ հանցավորը դատապարտման փաստից համապատասխան հետևություններ չի արել, իսկ մեղադրական դատավճիռ կայացնելը նույնպես անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոց է<sup>58</sup>,

- ռեցիդիվի առկայության համար անհրաժեշտ է պատժի լրիվ կամ մասնակի կրում<sup>59</sup>: Վերոնշյալ մոտեցման կողմնակիցների հիմնական փաստարկն այն է, որ միայն պատիժն ամբողջությամբ կամ մասնակիորեն կրելուց հետո նոր հանցանքի կատարումն է վկայում անձի ուղղման ենթակա չլինելու մասին, ինչն էլ, բնականաբար, պահանջում է լրացուցիչ ուղղիչ ներգործություն: Այս կապակցությամբ Ն. Ս. Տագանցևը նշել է, որ պատիժը կամ առնվազն դրա 2/3-ը կրած և կրկին հանցանք կատարած անձն ավելի վտանգավոր է, քան դեռևս պատիժ չկրած անձը<sup>60</sup>: Պատժի կրումը կոչված

---

<sup>56</sup> Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի 2009 թվականի առաջին կիսամյակի պրակտիկայի ամփոփումը [http://www.supcourt.ru/vscourt\\_detale.php?id=6016](http://www.supcourt.ru/vscourt_detale.php?id=6016):

<sup>57</sup> Տե՛ս **Кудрявцев В. Н.** Теоретические основы квалификации преступлений, М., 1963, էջ 314, **Яковлев А. М.** Борьба с рецидивной преступностью, М., 1964, էջ 34:

<sup>58</sup> Տե՛ս **Красиков Ю. А.** Множественность преступлений, М., 1988, էջ 35:

<sup>59</sup> Տե՛ս **Пионтковский А. А., Меньшагин В. Д.** Курс советского уголовного права, Т.2, М., 1959, էջ 650, **Шаргородский М. Д.** Наказание по советскому уголовному праву, М., 1958., **Ткачевский Ю. М.** Досрочное освобождение от наказания, М., 1962, էջ 47, **Панько К. А.** Вопросы общей теории рецидива в советском уголовном праве, Воронеж, 1988, էջ 68, **Галиакбаров Р. Р., Ефимов М., Фролов Е.** Множественность преступных деяний как институт советского уголовного права // Советская юстиция, 1967, №2, 5-11 էջեր:

<sup>60</sup> Տե՛ս **Таганцев Н. С.** О повторении преступлений, СПб, 1867, էջ 61:

է ապահովելու հանցագործությունների ընդհանուր և անհատական կանխարգելումը: Հետևաբար միայն պատիժն ամբողջությամբ կրելուց հետո կամ դրա ընթացքում նոր հանցանքի կատարումն է վկայում անձի՝ ուղղվելու ցանկության բացակայության և նրա նկատմամբ կիրառված քրեաիրավական ներգործության միջոցների անարդյունավետության մասին՝ հիմք հանդիսանալով ավելի խիստ պատժի նշանակման: Այլ կերպ ասած, հանցագործությունների ռեցիդիվը վկայում է, որ պատժի մասնավոր կանխարգելման նպատակը չի իրացվել՝ չնայած, որ անձը ոչ միայն դատապարտվել է նախորդ արարքի համար, այլև պատիժ է կրել<sup>61</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 22-ի և 67.1-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի գնահատումը կախվածության մեջ չի դրվում հանցավորի կողմից պատիժը փաստացի կրելու հանգամանքից: Այսինքն՝ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, թեկուզև շատ կարճ ժամանակ անց, անձի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում հանցագործությունների ռեցիդիվն առկա է:

Հանցավորի կողմից պատիժն ամբողջությամբ կրելուց հետո նոր հանցանք կատարելու դեպքում միայն վերջինիս արարքում ռեցիդիվ գնահատելը թվում է՝ առավել համահունչ է այս ինստիտուտի էությանն ու հիմնական բովանդակությանը, քանի որ արտահայտում է բացասական վերաբերմունքն այն անձի նկատմամբ, ով, պետության անունից դատապարտվելով և պատժի ենթարկվելով, անհրաժեշտ դասեր չի քաղում այդ փաստից և պատիժը կրելուց հետո կրկին հանցանք է կատարում: Բացի այդ, տվյալ պարագայում նոր հանցագործության համար պատիժ սահմանելիս դատարանը հնարավորություն կունենա գնահատելու նախորդ պատժի կրման ընթացքում թույլ տրված սխալները, բացթողումները, այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել անձի ուղղման համար:

Չնայած վերոնշյալին՝ կարծում ենք, որ պատիժն ամբողջությամբ կրած լինելու հանգամանքը ռեցիդիվ գնահատելու պարտադիր պայման դիտելը նորմի գործնական կիրառության ընթացքում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել, տարամեկնաբանությունների տեղիք տալ և հանգեցնել դատական սխալների, ուստի այնքան էլ նպատակահարմար չէ այն նախատեսել որպես հանցագործությունների

---

<sup>61</sup> Տե՛ս *Панько К. А.* Вопросы общей теории рецидива в советском уголовном праве, Воронеж, 1988, էջ 51:

ռեցիդիվի պարտադիր հատկանիշ: Մասնավորապես եթե առաջին անգամ դատապարտվելուց և պատիժը կրելուց հետո նոր հանցանք կատարելու դեպքում անձի արարքում ռեցիդիվ գնահատելը թվում է՝ խնդիրներ չի առաջացնելու, ապա նույնը չի կարելի ասել դրանից հետո ազատազրկման դատապարտվելու և պատիժը կրելու ընթացքում նոր հանցանք կատարելու պարագայում: Մասնավորապես հարց է առաջանալու՝ արդյո՞ք անձի արարքում առկա է ռեցիդիվ, թե՞ ոչ, քանի որ մի կողմից՝ հանցավորը դատվածությունն ունի կրած պատժի համար, մյուս կողմից՝ դեռևս փաստացի պատիժ է կրում: Բացի այդ, կարող է խնդրահարույց լինել նաև «պատիժն ամբողջությամբ կրած լինելու» հանգամանքի որոշումը (օրինակ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելու կամ պատժից ազատելու կամ ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու պարագայում արդյոք անձը կհամարվի պատիժն ամբողջությամբ կրած, թե ոչ):

Արտասահմանյան մի շարք պետությունների՝ հանցագործությունների ռեցիդիվին վերաբերող օրենսդրական կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի բնույթի և էության կապակցությամբ հիմնականում դրսևորվում է նույն մոտեցումը: Մասնավորապես, մեր կողմից ուսումնասիրված գրեթե բոլոր պետություններում ռեցիդիվը հանցավորի մեջ կայուն հակահասարակական կողմնորոշումների արմատավորման ցուցանիշ է, այն դիտվում է որպես հանցավոր վարքագծի կրկնության առավել վտանգավոր տեսակ, և, որպես կանոն, նախատեսվում են պատիժ նշանակելու հատուկ կանոններ: Ուստի պատահական չէ, որ հանցագործությունների ռեցիդիվ են ձևավորում հիմնականում դիտավորյալ հանցագործությունները (Լատվիա, Լիտվա, Բուլղարիա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա, ԱՊՀ անդամ պետություններ): Սակայն Ֆրանսիայի, Իսպանիայի քրեական օրենսգրքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների ռեցիդիվ կարող են ձևավորել ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ հանցանքները:

Ինչ վերաբերում է հանցագործությունների ռեցիդիվի օրենսդրական բնորոշմանը, ապա տարբեր երկրների քրեական օրենսգրքերում առկա են տարբեր կարգավորումներ: Որոշ պետություններում տրվում են ռեցիդիվի հասկացությունը և



հատկանիշները, իսկ պատժին նվիրված հոդվածներում կարգավորվում է պատիժ նշանակելու կարգը (օրինակ՝ ԱՊՀ անդամ պետություններ, Լատվիա, Լիտվա, Իսպանիա և այլն): Մինչդեռ եվրոպական շատ երկրներում հանցագործությունների ռեցիդիվը դիտվում է որպես պատիժ նշանակելու կանոն (օրինակ՝ Ֆրանսիա, Սլովենիա, Սլովակիա, Լեհաստան և այլն): Մի շարք երկրներում էլ ընդհանրապես բացակայում են ռեցիդիվի հասկացությունը և պատիժ նշանակելու կանոնները (օրինակ՝ Գերմանիա, Շվեյցարիա և այլն)<sup>62</sup>:

Այսպիսով, ընդհանրացնելով կատարված վերլուծությունը, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ<sup>63</sup>:

*«1. Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտարկությանը հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտարկությանը կատարված հանցանքի համար:*

*2. Հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում՝*

*1) օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված դատվածությունը,*

*2) մինչև 18 տարին լրանալը կատարված հանցագործության համար դատվածությունը,*

*3) առաջին անգամ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատվածությունը»:*

#### **§4. Հանցագործությունների ռեցիդիվի տեսակները**

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ում առանձնացվում է հանցագործությունների ռեցիդիվի երկու տեսակ՝ վտանգավոր և առանձնապես վտանգավոր, սակայն քրեական իրավունքի գիտության մեջ առաջարկվել են հանցագործությունների ռեցիդիվի տեսակների տարբեր դասակարգումներ: Այսպես՝ կատարվող հանցանքների բնույթով պայմանավորված՝ տարբերակվում է ընդհանուր և

<sup>62</sup> Մեջբերված պետությունների քրեական օրենսդրությունները տե՛ս <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes> կայքէջում:

<sup>63</sup> Մեր կողմից սույն գլխի երկրորդ պարագրաֆում առաջարկվել է քրեական օրենսգրքում առանձնացնել ինքնուրույն՝ 7.1-րդ գլուխը՝ «Հանցագործությունների բազմակիություն» անվանմամբ, որտեղ անհրաժեշտ է տեղափոխել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 20-ը (հանցագործությունների համակցությունը) և 22-ը (հանցագործությունների ռեցիդիվը):

հատուկ ռեցիդիվ<sup>64</sup>: Ընդհանուր ռեցիդիվն անձի կողմից ցանկացած նոր (տարաբնույթ) դիտավորյալ հանցանքի կատարումն է, իսկ հատուկը՝ դատվածությունն ունեցող անձի կողմից կրկին նույն (նախատեսված նույն հոդվածով կամ հոդվածի մասով) կամ միաբնույթ (թեպետ տարբեր հոդվածներով նախատեսված, սակայն համասեռ հարաբերությունների դեմ ոտնձգող) դիտավորյալ հանցանքի կատարումը: Որոշ հեղինակներ դեմ են արտահայտվել նշված դասակարգմանը՝ ընդգծելով, որ այն հակասում է ռեցիդիվի սոցիալական էությանը: Նրանց կարծիքով հանցագործությունների ռեցիդիվի դեպքում կարևորը հանցավորի գիտակցության մեջ կայուն հակահասարակական կողմնորոշումների արմատավորումն է, և նրա պատրաստակամությունը կատարելու նոր հանցավոր արարքներ, իսկ հանցագործությունների բնույթը՝ նույն, միաբնույթ, թե տարաբնույթ, որևէ նշանակություն չունի: Նման դասակարգումը կարող է դեր խաղալ միայն կրիմինալոգիայում՝ հանցավորության պատճառները բացահայտելու և այն կանխարգելելու նկատառումներից ելնելով<sup>65</sup>:

Ըստ ունեցած դատվածությունների քանակի՝ տարբերակվում են հասարակ ռեցիդիվ (դատվածությունն ունեցող անձի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարում) և բարդ ռեցիդիվ (նոր դիտավորյալ հանցանքի կատարումն այն անձի կողմից, ով ունի երկու կամ ավելի դատվածություն), ըստ վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունների ռեցիդիվ՝ նախքան պատիժը լրիվ կրելը և հանցագործությունների ռեվիդիվ՝ պատիժը կրելուց հետո<sup>66</sup>: Մասնավորապես, պատիժը կրելուց հետո նոր դիտավորյալ հանցանքի կատարումը վկայում է հանցավորի առավել բարձր վտանգավորության մասին, ցույց է տալիս, որ անձի նկատմամբ սոցիալական ներգործության բոլոր միջոցները կիրառվել են, սակայն սպասված արդյունքը չի ապահովվել: Որպես նշված խմբի ենթատեսակ՝ առանձնացվում է նաև պենիտենցիար ռեցիդիվը՝ անձի կողմից նոր դիտավորյալ

<sup>64</sup> Տե՛ս **Агаев И. Б.** Рецидив в системе множественности преступлений, М., 2002, էջ 46, **Алиев Н. Б.** Повторность и рецидив преступлений по советскому уголовному праву, Махачкала, 1978, էջ 77, **Красиков Ю. А.** Множественность преступлений, М., 1988, էջ 36:

<sup>65</sup> Տե՛ս **Козлов А. П., Севастьянов А. П.** Единичные и множественные преступления, СПб, Санкт-Петербург, 2011, էջ 214:

<sup>66</sup> Տե՛ս **Малков В. П.** Множественность преступлений и ее формы по советскому уголовному праву, Казань, 1982, էջ 92:

հանցանքի կատարումը պատիժը կրելու վայրում<sup>67</sup>: Քրեական իրավունքի գիտության մեջ առանձնացվում են նաև լեզալ և փաստացի կամ կրիմինալոգիական ռեցիդիվը: Վերջինը ենթադրում է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքների կատարում, անկախ նրանից՝ դատապարտվել է դրանց համար, թե ոչ:

Նախքան 2003 թ. նոր քրեական օրենսգրքի ընդունումը 1961 թ. ՀԽՍՀ քրեական օրենսգրքում տրված էր ոչ թե ռեցիդիվի, այլ «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի» հասկացությունը (հոդված 23.1): Տեսության մեջ առաջարկվում էր նույնիսկ տարբերակել «ռեցիդիվիստ», «վտանգավոր ռեցիդիվիստ» և «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» տեսակները<sup>68</sup>: Օրենսդիրը գործող քրեական օրենսգրքում հրաժարվեց «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացությունից, որը, ինչպես նշվում է տեսության մեջ, անձին խարազանող պիտակ էր<sup>69</sup>: Իսկ ներկայումս տրվում է ռեցիդիվի՝ որպես երևույթի, հասկացությունը և միաժամանակ սահմանվում, որ այն համարվում է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, ինչպես նաև նախատեսվում են ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ի 1-ին մասի 1-ին կետ և հոդված 67.1):

Ռեցիդիվի վերը նշված տեսակները թեև չեն արտացոլվել օրենսդրության մեջ, այնուամենայնիվ դրանց առանձնացումը և ուսումնասիրությունը կրիմինալոգիական տեսանկյունից ունեն կարևոր նշանակություն: Դրանք թույլ են տալիս ավելի խոր ուսումնասիրելու ռեցիդիվային հանցավորության պատճառները, նպաստող պայմանները, անձի հանցավոր մասնագիտացումը, ինչպես նաև դատապարտյալների ուղղման և հետագայում ռեցիդիվային հանցավորության կանխարգելման տեսանկյունից նշանակված պատժի արդյունավետության հարցերը: Բացի այդ, ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս վեր հանելու օրենսդրության մեջ առկա թերությունները, նպաստելու ռեցիդիվին վերաբերող նորմերի հետագա կատարելագործմանը:

Նշենք, սակայն, որ քրեական իրավունքի գիտությանը հայտնի ռեցիդիվի որոշ տեսակներ տեղ էին գտել նաև օրենսդրության շրջանակներում: Այսպես՝ նախքան 2011

<sup>67</sup> Տե՛ս **Городянская В. В.** Постпенитенциарный рецидив: Дис. ... канд. юрид. наук, Томск, 2011, 247 էջ:

<sup>68</sup> Տե՛ս **Михлин А., Ромазин С.** Пути совершенствования законодательства о борьбе с рецидивом // Социалистическая законность, №3, М., 1984, էջ 73:

<sup>69</sup> Տե՛ս **Մ. Վ. Գրիգորյան** Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում, Երևան, 2001, էջ 306:

թ. մայիսի 23-ի օրենսդրական փոփոխությունները քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում որպես պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսված էր հանցանքի կատարումն այն անձի կողմից, ով նախկինում դատվածություն ուներ նույն կամ միաբնույթ հանցագործության համար (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 104-ը, 175-182-ը և այլն): Վերոնշյալը, ըստ էության, քրեական օրենսդրության շրջանակներում հատուկ ռեցիդիվի դրսևորում էր: Բացի այդ, գործող քրեական օրենսգրքում ռեցիդիվի տեսակները (հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր) տարբերակվում են, ի թիվս այլոց, նաև ըստ առկա դատվածությունների քանակի, հետևաբար կարելի է պնդել, որ նման դասակարգումը բխում է գիտության մեջ հայտնի հասարակ և բարդ ռեցիդիվի գաղափարից:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 22-ում տրված է, այսպես կոչված, «լեգալ ռեցիդիվի» բնորոշումը, այն է՝ դիտավորյալ հանցանքի համար դատվածություն ունեցող անձի կողմից նոր դիտավորյալ հանցանք կատարելը: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում սահմանվում են ռեցիդիվի՝ վտանգավոր և առանձնապես վտանգավոր տեսակները՝ «(...) 2. Հանցագործությունների ռեցիդիվը վրանգավոր է համարվում՝

1) դիտավորությամբ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար.

2) ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար:

3. Հանցագործությունների ռեցիդիվն առանձնապես վրանգավոր է համարվում անձի կողմից՝

1) դիտավորությամբ այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անձը նախկինում երեք անգամից ոչ պակաս ցանկացած հաջորդականությամբ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության դիտավորյալ հանցագործության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար.

2) այնպիսի ծանր հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անձը նախկինում երկու անգամ

ազատագրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար.

3) առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար: (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի տեսակների տարբերակման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ, մասնավորապես՝ հանցագործության տեսակը, նշանակվող պատիժը (այն է՝ ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը), առկա դատվածությունների քանակը: Միասնական չափանիշի բացակայությունը բազմաթիվ խնդիրներ է առաջ բերում: Այսպես՝ հասարակ ռեցիդիվը վտանգավորից տարբերակելու հիմնական չափանիշը նախկինում ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքն է: Ընդ որում, հասարակ ռեցիդիվն առկա է ոչ միայն նախկինում մեկ, այլև երկու կամ ավելի դիտավորյալ հանցագործությունների համար դատվածություն ունենալու պարագայում, եթե անձը նախկինում երկու կամ ավելի հանցագործությունների համար դատապարտված է եղել ազատագրկման հետ չկապված պատժի<sup>70</sup>: Սակայն ներկայիս կարգավորման պայմաններում ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը ոչ միշտ է հնարավոր ռեցիդիվի և վտանգավոր ռեցիդիվի սահմանազատման չափանիշ համարել: Հոդված 22-ի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը վտանգավոր է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատագրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար: Ստացվում է, եթե անձը նախկինում մեկ անգամ է ազատագրկման դատապարտվել, կատարվածը չի կարող գնահատվել վտանգավոր ռեցիդիվ, այլ պետք է դիտվի հասարակ ռեցիդիվ, չնայած որ առկա է ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը:

Առանձնապես վտանգավոր ռեցիդիվի որոշման հարցում նույնպես առաջ են գալիս որոշ բարդություններ: Մասնավորապես, քննարկվող հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվն առանձնապես վտանգավոր է

<sup>70</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2012թ., էջ 304:

համարվում անձի կողմից դիտավորությամբ այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անձը նախկինում երեք անգամից ոչ պակաս ցանկացած հաջորդականությամբ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության դիտավորյալ հանցագործության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար: Վերոնշյալ ձևակերպման պայմաններում պարզ չէ՝ ռեցիդիվի այս տեսակի գնահատման համար անձը նախկինում պետք է դատվածություն ունենա հանցագործությունների բոլոր երեք տեսակների համար՝ միջին ծանրության, ծանր, առանձնապես ծանր, թե՞ բավական է դրանցից միայն մեկ տեսակի համար երեք անգամ դատվածություն ունենալու հանգամանքը, օրինակ՝ երեք անգամ միջին կամ մեկ միջին և երկու ծանր և այլն: Մի կողմից՝ հանցագործությունների տեսակները միմյանցից անջատված են «կամ» շաղկապով, ինչը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 10-րդ մասի համաձայն՝ ենթադրում է, որ թվարկված պայմաններից բավական է առնվազն մեկի առկայությունը: Մյուս կողմից՝ օգտագործվում է «ցանկացած հաջորդականություն» արտահայտությունը, որը վկայում է հանցագործությունների թվարկված բոլոր երեք տեսակների պարտադիր առկայության վերաբերյալ օրենսդրի արտահայտած կամքի մասին:

Վերոնշյալ հարցին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը և արտահայտել հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանձնապես վրանգավոր ռեցիդիվի այս տեսակի առկայության համար նախկինում կատարած միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակային հաջորդականությունը որևէ նշանակություն չունի, բավարար է, որ ցանկացած հաջորդականությամբ վերը նշված երեք տեսակի հանցագործություններն էլ առկա լինեն: Նշված դիրքորոշման համար հիմք է հանդիսանում այն, որ օրենսդիրը «ցանկացած հաջորդականություն» բառակապակցությունը շարադրել է հանցագործությունների երեք տեսակները թվարկելուց առաջ: Այսինքն՝ հաջորդականության վերաբերյալ օրենսդրի պահանջը վերաբերում է հանցագործությունների տարբեր տեսակներին, քանի որ նույնատեսակ հանցագործությունների հաջորդականության մասին օրենսդրական կարգավորում

*նախատեսելը որևէ իրավական նպատակ չի կարող հետապնդել: (...)»<sup>71</sup>:*

Մեջբերված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ընդգծել է նաև, որ հակառակ մեկնաբանության պարագայում կխախտվի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Այսպես՝ եթե անձը նախկինում դատապարտվի ազատազրկման առանձնապես ծանր հանցագործության համար և հետո կատարի ծանր հանցանք, ապա առկա կլինի վտանգավոր ռեցիդիվ: Մինչդեռ եթե անձը նախկինում երեք անգամ ազատազրկման դատապարտվի միջին ծանրության հանցագործությունների համար և հետո կատարի ոչ մեծ ծանրության հանցանք, ապա առկա կլինի առանձնապես վտանգավոր ռեցիդիվ: Բացի այդ, օրենքի այդպիսի մեկնաբանության դեպքում նախկինում երեք անգամ միջին ծանրության հանցանք կատարած անձը և նախկինում երեք անգամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը ռեցիդիվի գնահատման տեսանկյունից կդիտարկվեն նույն հարթության վրա և կարժանանան միևնույն իրավական գնահատականի, ինչը չի կարելի արդարացված համարել:

Կարծում ենք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած վերոնշյալ դիրքորոշումը ևս խոցելի է, և օրենքի նորմի նման մեկնաբանությունը նույնպես կարող է անարդարացի իրավիճակ ստեղծվել: Մասնավորապես ստացվում է, որ նախկինում կատարված երեք կամ ավելի առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության համար դատվածության առկայության դեպքում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը չի կարող գնահատվել որպես առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, այլ պետք է դիտվի որպես վտանգավոր ռեցիդիվ: Այլ խոսքով, անկախ դատվածությունների և հետագայում կատարվող հանցանքների քանակից, քանի դեռ չեն կատարվել բոլոր երեք տեսակի հանցանքները (միջին, ծանր, առանձնապես ծանր), առանձնապես վտանգավոր ռեցիդիվը կբացակայի:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ հանցագործությունների ռեցիդիվի տեսակների որոշումը բազմաթիվ խնդիրներ է առաջացնում և շատ դեպքերում դատական սխալների հանգեցնում: Այսպես՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին

<sup>71</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԿԴ1/0059/15/13 որոշումը:

ատյանի դատարանը ամբաստանյալ Գ.Մկրտչյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ռեցիդիվի տեսակը սխալ է որոշել: Մասնավորապես, Գ.Մկրտչյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 178-ի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (2 դրվագ), ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 38-178-ի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 38-34-178-ի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքներ, որոնց համար դատապարտվել է ազատազրկման, և նախկինում կատարված հանցանքների համար ուներ չմարված դատվածություններ. 1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2013 թ. փետրվարի 15-ի դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 34-177-ի 3-րդ մասի 1.1 կետով (մեկ դրվագ) և հոդված 177-ի 3-րդ մասի 1.1 կետով (հինգ դրվագ) նախատեսված հանցագործությունների համար, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 66-ի կիրառմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ վեց տարի ժամկետով, 2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թ. մայիսի 12-ի դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 176-ի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցանքի համար՝ ազատազրկման չորս տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 66-ի 4-րդ և 6-րդ մասերի կիրառմամբ՝ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում յոթ տարի ժամկետով:

Ստացվում է, որ Գ.Մկրտչյանը կատարել էր միջին ծանրության հանցանք՝ նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատազրկման դատապարտված լինելով դիտավորյալ հանցագործության համար, այսինքն՝ վերջինիս արարքում առկա էր վտանգավոր ռեցիդիվ (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 2-րդ մասի 1-ին կետ): Մինչդեռ դատարանն արձանագրել էր, որ ամբաստանյալ Գ.Մկրտչյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասի պահանջով, այն է՝ հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից: Այլ կերպ ասած՝ դատարանը ամբաստանյալի արարքում գնահատել էր հասարակ ռեցիդիվ՝ այն պայմաններում, երբ վերջինիս արարքում առկա էր



վտանգավոր ռեցիդիվ<sup>72</sup>:

Ակնհայտ է, որ հանցագործությունների ռեցիդիվի տեսակների դասակարգումը խրթին է, դրա հիմքում չկան որևէ հստակ տրամաբանություն և միասնական չափանիշ, ինչը քննարկվող նորմի կիրառման առումով բազմաթիվ խնդիրներ է առաջացնում, հանգեցնում դատական սխալների և գործնական որևէ օգուտ չի ապահովում՝ խոչընդոտելով արդյունավետ և միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը: Նման կարգավորումը չի համապատասխանում իրավական որոշակիությանը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքով երաշխավորված օրինականության սկզբունքի խախտում է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ մի շարք վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը<sup>73</sup>:

Հարկ է նկատել, որ արտասահմանյան երկրների մեծամասնության քրեական օրենսդրություններում ռեցիդիվի տեսակներ ընդհանրապես չեն առանձնացվում: Մասնավորապես Սլովենիայի, Սլովակիայի, Լատվիայի, Լեհաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Ավստրիայի և Եվրոպական այլ երկրների քրեական օրենսդրությամբ ռեցիդիվը տեսակների չի դասակարգվում. այն պարզապես դիտվում է որպես պատիժը ծանրացնող հանգամանք՝ նախատեսելով ռեցիդիվի դեպքում կա՛մ պատիժ նշանակելու հատուկ կանոններ, կա՛մ պատժի խստացումը թողնելով դատարանի հայեցողությանը: Կան երկրներ, որտեղ ռեցիդիվի հասկացությունն ընդհանրապես բացակայում է (օրինակ՝ Գերմանիայիում դատարանը պատիժ նշանակելիս նախկինում առկա դատվածությունը կարող է հաշվի առնել

<sup>72</sup> Տե՛ս թիվ ԵՄԴ/0129/01/15 գործով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի դատավճիռը:

<sup>73</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշումը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ի թիվս այլ գործերի, **Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (The sunday times v. the united kingdom)** գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49, **Կանտոնին ընդդեմ Ֆրանսիայի (CANTONI v. FRANCE)** գործով 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17862/91, կետ 29, **Է.Կ.-ն ընդդեմ Թուրքիայի (E.K. v. TURKEY)** գործով 2002 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 28496/95, կետ 51:

որպես հանցավորի անձը բացասական բնութագրող հանգամանք)<sup>74</sup>:

Միևնույն ժամանակ հանցագործությունների ռեցիդիվի վտանգավոր և առանձնապես վտանգավոր տեսակներն առանձնացված են նախկին խորհրդային գրեթե բոլոր հանրապետություններում, մասնավորապես՝ Բելառուսի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Ղազախստանի (առանձնացվում է միայն վտանգավոր տեսակը), Ղրղզստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի քրեական օրենսգրքերում: Բացառություն են կազմում միայն Վրաստանը և Ուկրաինան<sup>75</sup>:

Ռուսաստանի քրեական օրենսգրքում թեպետ առանձնացվում են ռեցիդիվի վտանգավոր և առանձնապես վտանգավոր տեսակները, սակայն պատժի նշանակման գործընթացի վրա այդ բաժանումը որևէ ազդեցություն չի գործում, քանի որ ռեցիդիվի բոլոր տեսակների դեպքում նախատեսվում է պատիժ նշանակելու միանման կարգ<sup>76</sup>: Հետևաբար ռեցիդիվի տեսակների առանձնացումը, ըստ էության, դառնում է ինքնանպատակ և որևէ իրավական հետևանքներ չառաջացնող:

Ինչ վերաբերում է ընդհանուր իրավունքի համակարգին պատկանող պետություններին, ապա դրանց մեծ մասի քրեական օրենսդրությանը հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը և դրա տեսակները հայտնի չեն, չնայած որ նախկինում դատապարտված լինելը, որպես կանոն, խիստ պատիժ նշանակելու հիմք է: Մեծ Բրիտանիայի «Քրեական արդարադատության մասին» 1993 թ. օրենքը նախատեսում է, որ կատարված արարքի վտանգավորությունը գնահատելիս և պատիժ նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի նախկին բոլոր դատվածությունները՝ անկախ դրանց վաղեմությունից: 1997 թ. «Հանցագործությունների (պատիժների)» մասին օրենքում ռեցիդիվի բնորոշումը դարձյալ բացակայում է, սակայն կրկնակի հանցավոր վարքագծի դրսևորման դեպքերում (երեք անգամից ոչ պակաս դատվածության առկայության) նախատեսվում է պատժի խստացում<sup>77</sup>:

<sup>74</sup> Տե՛ս Գերմանիայի 1971 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <https://www.gesetze-im-internet.de/stgb/StGB.pdf>:

<sup>75</sup> Տե՛ս <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>:

<sup>76</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության 1996 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/):

<sup>77</sup> Տե՛ս **Ведерникова О. Н.** Теория и практика борьбы с преступностью в Великобритании, Рос. правовая акад. М-ва юстиции РФ : Рос. криминол. ассоц., М., 2001, էջ 256-258:

Ռեցիդիվի հասկացությունը բացակայում է նաև Հոլանդիայի քրեական օրենսգրքում, սակայն սահմանվում է, որ որոշակի տեսակի հանցանքների կրկնակի կատարման դեպքում ազատազրկման ձևով նշանակվող պատիժը 1/3-ով պետք է ավելանա, եթե հանցավորի կողմից ազատազրկումը լրիվ կամ մասնակի կրելուց հետո անցել է հինգ տարուց պակաս ժամանակ<sup>78</sup>:

ԱՄՆ-ի ֆեդերալ և նահանգային օրենսդրությունների մեծ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև բուն ռեցիդիվի հասկացությունը բացակայում է, սակայն բազմակիության ամենատարածված տեսակը հենց հանցագործությունների ռեցիդիվն է, որի դեպքում նախատեսվում են պատիժ նշանակելու բավականին խիստ կանոններ: Բացի այդ, առանձնացվում են ռեցիդիվի ընդհանուր և հատուկ, բռնի և ոչ բռնի տեսակները<sup>79</sup>:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք անհրաժեշտ է հրաժարվել հանցագործությունների ռեցիդիվի տեսակները օրենքում նախատեսելու գաղափարից, ինչը զերծ կպահի քրեական օրենսդրությունը ավելորդ ծանրաբեռնումից, կապահովի իրավական որոշակիության չափանիշներին համահունչ կարգավորում և դատական պրակտիկայում հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ նորմի սխալ կիրառումը կհասցվի նվազագույնի: Միևնույն ժամանակ ռեցիդիվի տեսակներից հրաժարվելու պայմաններում անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու և հանցավորի անձի ու կրկնվող արարքների վտանգավորությանը համահունչ պատիժ նշանակելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու գործող կանոնը խստացնել<sup>80</sup>:

<sup>78</sup> Տե՛ս Уголовный кодекс Голландии/Науч. ред. **Волженкин Б. В.**, СПб, Изд-во "Юрид. центр Пресс", 2001, էջ 15:

<sup>79</sup> Տե՛ս **Гукасян А. П.** Проблемы рецидивной и профессиональной преступности, учебно-методический комплекс, Ереван, 2014, էջ 87-90:

<sup>80</sup> Այս մասին ավելի մանրմասն կխոսվի սույն աշխատանքի երրորդ գլխի առաջին պարագրաֆում:

**ԳԼՈՒԽ 2**  
**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ**  
**ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

**§1. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման  
առանձնահատկությունները հանցագործությունների ռեցիդիվի դեպքում  
պատիժ նշանակելիս**

Պատիժ նշանակելը արդարադատության իրականացման ամենաբարդ և պատասխանատու փուլերից է: Այս ոլորտում առկա օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս պատկերացում կազմելու պատժի նշանակման բնագավառում պետության վարած քրեական քաղաքականության հիմնական ուղղությունների և որդեգրած գերակա նպատակների մասին:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է այն հիմնական կանոնները, որոնք դատարանը պարտավոր է հաշվի առնել յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս: Դրանք պատիժ նշանակելու հիմնարար սկզբունքներն են՝ ղեկավար դրույթներ, որոնցով դատարանն առաջնորդվում է պատիժ նշանակելու բարդ և պատասխանատու գործընթացում: Նշված սկզբունքներն ուրվագծում են դատարանի հայեցողության շրջանակները և կոչված են հնարավորինս բացառելու պատիժ նշանակելիս կամայականության դրսևորումները: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի («Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները») համաձայն՝

*«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:*

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

Մեջբերված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները կոչված են ապահովելու պատժի՝

- ա) օրինականությունը,
- բ) արդարությունը,
- գ) անհատականացումը,
- դ) մարդասիրությունը<sup>81</sup>:

Օրինականության սկզբունքը ենթադրում է, որ նշանակվող պատիժը պետք է որոշվի քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում՝ հաշվի առնելով ընդհանուր մասի դրույթները: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 1-ին մասով սահմանված վերոնշյալ դրույթը համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 5-ով ամրագրված օրինականության սկզբունքի հետ՝ կարելի է արձանագրել, որ դատարանը կարող է պատիժ նշանակել միայն այն արարքների համար, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված են որպես հանցավոր և ընտրել միայն այնպիսի պատժատեսակ ու պատժաչափ, որը նախատեսված է տվյալ հոդվածի սանկցիայի շրջանակներում: Դատարանի կողմից նշված դրույթներն անտեսելն անթույլատրելի է, օրինականության սկզբունքի կոպիտ խախտում է և դատական ակտը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ նշված պահանջներից կարող են օրենքով սահմանվել նաև բացառություններ: Մասնավորապես օրենքով հստակ նախատեսված դեպքերում և կարգով դատարանը հոդվածի սանկցիայով նախատեսվածից ավելի մեղմ կամ ավելի խիստ պատիժ է նշանակում: Խոսքը վերաբերում է պատիժ նշանակելու հատուկ կանոններին, որոնց կիրառման հիմքերի առկայության դեպքում դատարանը նշանակում է այնպիսի պատիժ, որն ավելի մեղմ է կամ ավելի խիստ, քան նախատեսված է հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով: Այսպես՝ ՀՀ

<sup>81</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը, ինչպես նաև ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2012, էջ 427:

քրեական օրենսգրքի հոդվածներ 64-ը և 65-ը նախատեսում են անձի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու կարգ. հոդված 64-ը սահմանում է որոշակի դեպքերում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հնարավորություն, իսկ հոդված 65-ը՝ չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու հատուկ, ավելի բարենպաստ կանոններ:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 66, 67 և 67.1 հոդվածների կիրառումը բացասական հետևանքներ է առաջ բերում անձի համար, քանի որ նախատեսում են խիստ պատիժ նշանակելու հնարավորություն: Դրանք, ըստ էության, վերաբերում են միևնույն անձի կողմից բազմակի հանցավոր վարքագիծ դրսևորելու դեպքերին, մասնավորապես՝ հանցանքների և դատավճիռների համակցությանը, ինչպես նաև հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգին:

Պատիժ նշանակելու հատուկ կանոնների գոյությունը չի կարելի համարել օրինականության սկզբունքից նահանջ, այլ հանդիսանում է դրա առանձնահատուկ դրսևորում և հետապնդում է իրավաչափ նպատակ, մասնավորապես թույլ է տալիս նշանակելու արդարացի պատիժ՝ պայմանավորված օրենսդրի կողմից առանձին դեպքերում հանցավորի անձին և հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին տրված գնահատականով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 48-ով նախատեսված պատժի նպատակների իրագործման անհրաժեշտությամբ: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ պատժի նշանակելու հատուկ կանոնները ընդհանուր սկզբունքներից բացառություն չեն և հարաբերակցվում են ինչպես «ամբողջ» և «մաս»՝ ապահովելով պատասխանատվության ու պատժի առավելագույն անհատականացում:

Հանցագործությունների ռեցիդիվի պարագայում նույնպես նախատեսված են պատիժ նշանակելու հատուկ կանոններ (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1), որի հիմնական նպատակը քրեաիրավական ներգործության միջոցների խստացումն է: Վերոնշյալ դեպքում դատարանը թեև պարտավորվում է պահպանել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այնուամենայնիվ պատժատեսակի և պատժաչափի ընտրության հարցում արվում են որոշ վերապահումներ: Մասնավորապես, ընտրվում է ամենախիստ պատժատեսակը, որի նվազագույն

սահմանը՝ ռեցիդիվի տեսակով պայմանավորված, խստացվում է:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում խիստ պատիժ նշանակելու հիմքը նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար դատվածության առկայության փաստն է: Այսպես՝ հանցագործության համար անձի դատապարտմամբ, նրա նկատմամբ պատժի նշանակմամբ և դրա կրմամբ հանցավորի ու պետության միջև հանցագործության փաստով ձևավորված հատուկ քրեաիրավական հարաբերությունները դեռևս չեն ավարտվում: Հանցագործության բնույթով պայմանավորված՝ պատիժը կրելուց որոշակի ժամանակ անցնելուց հետո միայն նշված հարաբերությունները դադարում են, եթե, իհարկե, այդ ընթացքում անձը նոր հանցանք չի գործում:

Կարելի է ասել, որ դատվածությունն անձի համար յուրահատուկ փորձաշրջան է, ինչն անցնելուց հետո վերջինս «ապացուցում է» իր ուղղված լինելը, հետևաբար դադարում է վտանգավորություն ներկայացնելուց և համարվում է հանցանք չգործած: Մինչդեռ այդ ժամանակահատվածում նոր հանցավոր արարք կատարելու դեպքում նրա համար առաջ են գալիս անբարենպաստ իրավական հետևանքներ: Վերոնշյալը կազմում է դատվածության ինստիտուտի հիմնական բովանդակությունը, որն արտահայտվում է անձի համար նրա կենսագործունեության տարբեր ոլորտներում լրացուցիչ իրավասահմանափակումներով: Քրեաիրավական առումով նախկինում կատարված հանցանքի համար դատված լինելու հանգամանքը անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու հիմնական նախապայմանն է (նախքան քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները հատուկ մասի որոշ հանցակազմերում դատվածությունը նախատեսված էր նաև որպես ծանրացնող հանգամանք):

Պետք է նշել, սակայն, որ քրեագետների շրջանում դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյությունը միանշանակ չի ընդունվում: Որոշ հեղինակներ դրանք դիտում են որպես ամբողջատիրական ռեժիմի արդյունք, որը նպատակ է հետապնդում ահաբեկելու հասարակությանը ու նման անարդարացի, հակաիրավական և չհիմնավորված մեթոդներով հետ պահելու հանցագործություններից: Նրանց կարծիքով, նախկինում կատարված հանցանքի համար դատվածության առկայությունը

հաշվի առնելով, նոր կատարված արարքի համար ակնհայտ խիստ պատիժ նշանակելը խախտում է քրեական իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են օրինականության, արդարության, կրկնակի դատապարտման անթույլատրելիության, օրենքի առաջ բոլորի հավասարության և մարդասիրության սկզբունքները: Ըստ պրոֆեսոր Վոլժենկինի՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նշանակվող պատժին «գումարվում» է նախկինում կատարված այն արարքի համար պատիժը, որն անձն արդեն լիովին կրել է և դրանով իսկ ամբողջությամբ «քավել» մեղքը, հետևաբար, նման դեպքերում անձը կրկնակի է պատասխանատվության ենթարկվում միևնույն հանցագործության համար<sup>82</sup>:

Վ. Յու. Ջուբակինի կարծիքով քրեական պատասխանատվության ոլորտում ռեցիդիվի ինստիտուտի գոյությունն անհավասարության դրսևորում է: Հեղինակը համոզմունք է արտահայտել, որ նույնաբնույթ հանցանք կատարած անձանց նկատմամբ տարբեր պատիժներ նշանակելը՝ այն հիմքով, որ նրանցից մեկը դատվածություն ունի, օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում է: Մասնավորապես, նշված սկզբունքից բխում է, որ միևնույն հանրային վտանգավորության բնույթ և աստիճան ունեցող հանցանքներ կատարած անձինք ենթակա են հավասար պատասխանատվության, մինչդեռ ռեցիդիվի վերաբերյալ նորմերի կիրառումը հանգեցնում է անարդարացի խիստ պատիժների նշանակման<sup>83</sup>:

Դատվածության և ռեցիդիվի ինստիտուտներին դեմ են արտահայտվել նաև ՌԴ սահմանադրական դատարանի անդամներ Ն. Վ. Վիտրուկն ու Ա. Լ. Կանոնովը ՌԴ սահմանադրական դատարանի՝ *«Անձի դատվածության, կրկնակիության և ռեցիդիվի իրավական հետևանքները կանոնակարգող ՌԴ քրեական օրենսգրքի դրույթների սահմանադրականությունը որոշելու գործով»* 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման կապակցությամբ ներկայացված հատուկ կարծիքների շրջանակներում: Նշված որոշմամբ ՌԴ սահմանադրական դատարանը վերանայվող նորմերը ճանաչել

<sup>82</sup> Տե՛ս **Волженкин Б. В.** Принцип справедливости и проблемы множественности преступлений по УК РФ // Законность, 1998, № 12, էջ 2-7:

<sup>83</sup> Տե՛ս **Зубакин В. Ю.** Институт рецидива преступлений как нарушение принципа равенства перед законом в системе уголовной ответственности // Российский следователь, 2006, N 8, էջ 15-16:



էր ՌԴ սահմանադրությանը համապատասխանող<sup>84</sup>:

Ն. Վ. Վիդրուկն իր հատուկ կարծիքում նշել է, որ դատվածությունն անձի համար յուրահատուկ քրեաիրավական փորձաշրջան է, շարունակական, կանխարգելիչ պատիժ, ինչն էլ վերջինիս համար վերաձվում է լրացուցիչ պատժի նոր հանցանք կատարելու դեպքում: Անձը, ով արդեն կրել է պատիժը և դրանով իսկ քավել մեղքը, շարունակվում է կասկածվել նոր հանցանք կատարելու հնարավորության մեջ, ինչը պետության կողմից նրան տրված հանրային «խարան» է: Վերջինիս կարծիքով դատվածությունը՝ որպես հատուկ քրեաիրավական երևույթ և քրեական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ, հակասում է «non bis in idem» սահմանադրական սկզբունքին<sup>85</sup>:

Առավել մանրամասն ներկայացնենք ՌԴ սահմանադրական դատարանի անդամ Ա. Լ. Կանոնովի հատուկ կարծիքը, քանի որ այն խտացված կերպով պարունակում է դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների հակառակորդների հիմնական փաստարկները: Այսպես՝ վերջինս, հանգամանալից վերլուծելով դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների բնույթն ու իրավական էությունը, եկել է այն եզրահանգմանը, որ դրանք հակասում են սահմանադրաիրավական ընդհանուր սկզբունքներին, ուստի պետք է օրենսդրությունից բացառվեն: Ընդ որում, վերջինս նշել է, որ դատվածության ինստիտուտը հակասահմանադրական է ոչ միայն կրկնակի քրեական պատասխանատվության արգելքի իմաստով՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, այլև որպես խիստ պատիժ նշանակելու հիմք՝ ռեցիդիվի դեպքում: Կանոնովի դիրքորոշումը մասնավորապես հանգում է հետևյալին՝

- դատվածությունը և ռեցիդիվը հակասում են «non bis in idem» սկզբունքին: Վերոնշյալ սկզբունքի տառացի մեկնաբանությունից կարող է տպավորություն ստեղծվել, որ այն իր գործողությունը տարածում է միայն քրեական պատասխանատվության ոլորտի վրա և չի շոշափում պատիժ նշանակելու գործընթացը, սակայն նման եզրահանգումը սխալ է: Նախ՝ չնայած «քրեական

<sup>84</sup> Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշումը, <http://base.garant.ru/1352925/#friends>:

<sup>85</sup> Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ Ն. Վ. Վիդրուկի հատուկ կարծիքը, <http://base.garant.ru/1352925/#friends>:

պատասխանատվություն» ու «պատիժ» հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են, այնուամենայնիվ պատիժը հենց քրեական պատասխանատվության էությունն է և նպատակը: Երկրորդ՝ միջազգային-իրավական ակտերով կրկնության արգելքը վերաբերում է ոչ միայն դատապարտմանը, այլև պատժին: «Non bis in idem» սկզբունքը բացարձակ արգելք է դնում կրկին վերադառնալու այն գործին, որին արդեն դատարանի դատավճռով իրավական գնահատական է տրվել, ուստի դրա հիման վրա նույն փաստով և նույն անձի նկատմամբ փոխել պատիժը, այն էլ խստացման առումով, անթույլատրելի է: «Անցյալի» համար անձն արդեն լիովին վճարել է հասարակության առջև և քավել է իր մեղքը, իսկ պետության քրեաիրավական հետապնդումը չի կարող ձգվել տևական ժամանակահատված, այն պետք է ավարտվի պատիժը կրելով կամ պատժից ազատվելով,

- քրեական իրավունքի թե՛ դասական, թե՛ սոցիոլոգիական դպրոցները ի վիճակի չեն համընդգրկուն կերպով հիմնավորելու դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյության և դրանցով պայմանավորված՝ անձի նկատմամբ պատասխանատվության խստացման իրավական հիմքերը:

Քրեական իրավունքի դասական դպրոցի գաղափարները հիմնվում են օրինականության սկզբունքի վրա («nulum crimen sine leges»), որն արդարացի քրեաիրավական ներգործությունը նախ և առաջ պայմանավորում է վնասվող բարիքի արժեքավորությամբ, հանցագործության եղանակով և պատճառված վնասի չափով: Մեղքի ձևերը, շարժառիթը և սուբյեկտի այլ բնութագրիչները նույնպես ուշադրության են արժանանում, սակայն այնքանով, որքանով դրանք արտացոլվում են կատարված արարքում: Նշված գաղափարախոսության համաձայն՝ ռեցիդիվային հանցավորության առաջացումը պայմանավորված է հանցավորի չար կամքով, հետևաբար ռեցիդիվիստները պետք է ավելի խիստ պատժվեն, քան սկզբնական հանցագործները, քանի որ այդ հանցավոր կամքը փոխում է արարքի օբյեկտիվ բնույթը և վնասի չափը, առավել մեծ վտանգ է ներկայացնում հասարակության համար: Սակայն դասական դպրոցի ներկայացուցիչներին այդպես էլ չի հաջողվել մատնանշել ռեցիդիվային հանցավորության այնպիսի հատկանիշ, որի ուժով այն կտարբերվեր սկզբնական արարքի հանրային վտանգավորության բնույթից և աստիճանից:

Ինչ վերաբերում է քրեական իրավունքի սոցիոլոգիական դպրոցին, ապա դրա մարդաբանական տեսությունը որոշիչ կերպով շեշտը օրինականության սկզբունքից տեղափոխեց դեպի նպատակահարմարություն, արարքից՝ դեպի հանցավորի անձ, իսկ պատժից՝ դեպի անվտանգության կանխարգելիչ միջոցներ: Նշված տեսության հիմքում դրված էր անձի վտանգավոր վիճակի գաղափարը, որը որոշվում էր հանցավորի վարքագծի, սոցիալական ու բարոյական որակների, մտքերի, հանցավոր կապերի և այլնի ընդհանուր գնահատականով: Ռեցիդիվիստները բնութագրվում էին որպես հանցավորի չարամիտ, սովորությանին, չուղղվող, քրոնիկ կամ մասնագիտացված (պրոֆեսիոնալ) տիպ:

Վտանգավոր վիճակի տեսությունը հատկապես պահանջված էր հետհեղափոխական Ռուսաստանում և 20-ական թթ. ուներ մեծ թվով կողմնակիցներ, ուստի դրվեց օրենսդրության և քրեական քաղաքականության հիմքում, քանի որ այդ գաղափարները բավականին նպատակահարմար էին անօրինական ռեպրեսիաները և խիստ պատժողական քաղաքականությունն արդարացնելու համար: Անձի վտանգավոր վիճակի տեսությունը քրեական օրենսդրության մեջ արտացոլվեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտի ներմուծմամբ: Նոր քրեական օրենսդրությունը թեև հրաժարվեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունից, սակայն դրա փոխարեն օրենսդիրը ներմուծեց հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվը, ինչով, սակայն, դրա էությունը չփոխվեց, և վտանգավոր վիճակի տեսության մնացորդները շարունակեցին գոյություն ունենալ:

Դատվածության ինստիտուտը, դրա մարման ժամկետները, ինչպես նաև դատվածությունը հանելու հիմքերը պարունակում են անձի վտանգավոր վիճակի տեսության տարրեր: Օրենսդիրը, դատվածությունը և դրա մարման ժամկետները սահմանելով, նախապես կանխորոշել է, որ անձը, չնայած իր կողմից պատիժը կրելու հանգամանքին, լիովին չի ուղղվել, ավելին՝ չի ապացուցել իր ուղղված լինելու հանգամանքը, հետևաբար համարվում է հանրային վտանգավորություն ներկայացնող, իսկ այդ վտանգավորությունը կանխորոշվում է կատարված արարքի ծանրությամբ, որով էլ պայմանավորվում են դատվածության մարման ժամկետները,

- դատվածության ինստիտուտը կասկածներ է հարուցում իր իրավական բնույթի և էության առումով, քանի որ միանգամայն հստակ է, որ դատվածությունը չի կարող լինել ո՛չ պատիժ կամ ունենալ պատժին համարժեք տարրեր և նպատակներ, ո՛չ էլ քրեաիրավական իմաստով փորձաշրջան: Այսպես՝ դատվածությունը ո՛չ պատժի ընդհանուր համակարգում, ո՛չ էլ հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում նախատեսված չէ որպես հիմնական կամ լրացուցիչ պատիժ:

Միայն դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը կարող է իրավաչափ հիմք լինել անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման համար, ընդ որում այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսվում են այդ պատժով և այն ժամանակահատվածում, որը նշանակվել է դատարանի կողմից, հետևաբար դատվածությունը չի կարող հավակնել լինելու անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափ հիմք: Դատվածությունը չի կարող նաև փորձաշրջան համարվել, քանի որ փորձաշրջանի խնդիրներն ու իրավական հետևանքները պարզորոշ ձևակերպված են քրեական իրավունքում,

- ծանրացնող հանգամանքներից ռեցիդիվը միակն է, որը չի վերաբերում հանցագործության որևէ տարրի: Այսպես՝ այն չի կարելի դասել հանցագործության օբյեկտի կամ օբյեկտիվ կողմի, սուբյեկտի կամ սուբյեկտիվ կողմի որևէ հատկանիշների շարքին: Օրենքը չի նկարագրում ռեցիդիվային հանցագործության կատարման որևէ հատուկ եղանակ, պատճառված առանձնահատուկ նյութական կամ բարոյական վնաս, մեղքի ավելի մեծ բաժին, հետևաբար ռեցիդիվի առկայությունը չի արտացոլվում հանցագործության որևէ տարրում: Ռեցիդիվը չի կարելի նույնացնել նաև հանցագործության սուբյեկտի բնութագրիչներին, քանի որ դրա հատկանիշները հստակ թվարկված են օրենքով, ինչպես նաև բացահայտվում են հատուկ մասի կոնկրետ հանցակազմում: Մինչդեռ հատուկ մասում առկա չէ որևէ հիմնական հանցակազմ, որը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ կնախատեսեր ռեցիդիվային հանցանքի կատարումը<sup>86</sup>:

Վերոնշյալ դիրքորոշումների հետ դժվար է համաձայնել: Գործող

<sup>86</sup> Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-П որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ Ա. Լ. Կանոնովի հատուկ կարծիքը:

իրավակարգավորումների համաձայն՝ դատվածությունը և ռեցիդիվը հաշվի են առնվում միայն պատիժ նշանակելիս, իսկ արարքի որակման վրա որևէ ազդեցություն չունեն, ուստի անձը չի ենթարկվում կրկնակի քրեական պատասխանատվության կամ դատապարտման միևնույն հանցագործության համար: Այլ էր հարցը նախկինում գործող դատվածության հետ կապված կրկնակիության պարագայում, որն անմիջականորեն ազդում էր արարքի որակման վրա: Այսպես՝ քրեական օրենսգրքի հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում դատվածությունը նախատեսված էր որպես ծանրացնող հանգամանք և ազդում էր արարքին տրվող քրեաիրավական գնահատականի վրա: Մասնավորապես, նախկինում կատարված հանցանքի համար առկա դատվածությունը հետագայում նույն կամ միաբնույթ նոր հանցանք կատարելու դեպքում հիմք էր արարքի որակումը փոխելու, այն է՝ հանցանքը ծանրացնող հանգամանքով որակելու համար, ինչը, ըստ հանցագործությունների դասակարգման, որպես կանոն, պատկանում էր ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին: Վերոնշյալը իրավամբ լուրջ խնդիր էր առաջ բերում կրկնակի դատապարտման անթույլատրելիության կարևորագույն սահմանադրիրավական և միջազգային սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության հոդված 68-ը սահմանում է կրկին դատվելու արգելքը՝ *«Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար»<sup>87</sup>*: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության հոդված 4-ի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»<sup>88</sup>*: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 14-ի 7-րդ մասի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի*

<sup>87</sup> Տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն <http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>:

<sup>88</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (ընդունվել է 04.11.1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ., ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002թ.) // <http://conventions.coe.int/treaty/rus/treaties/html/005.htm>:

համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»<sup>89</sup>։ Կրկին դատվելու անթույլատրելիության վերաբերյալ համանման դրույթներ են պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերը։

Թեև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կրկնակիության ինստիտուտը որպես հակասահմանադրական չգնահատվեց, այնուամենայնիվ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ հետագա օրենսդրական զարգացումները նպատակահարմար կլինեին տանել այն ուղղությամբ, որ դատվածությունն ազդեր պատժի և ոչ թե որակման տարրի վրա։ 2011 թ. մայիսի 23-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կրկնակիությունը՝ որպես բազմակիության տեսակ, վերացվեց, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչվեցին անձի՝ նախկին դատվածության առկայությամբ պայմանավորված բոլոր որակյալ հանցակազմերը<sup>90</sup>։

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ անձի նախկին դատվածությունը հաշվի առնելով խիստ պատիժ նշանակելը (ռեցիդիվի դեպքում) նույնպես «non bis in idem» սկզբունքի խախտում է, քանի որ այդ սկզբունքը ենթադրում է ոչ միայն կրկնակի դատապարտման, այլև կրկնակի պատիժ նշանակելու արգելք միևնույն արարքի համար, ապա վերոնշյալի հետ ևս դժվար է համաձայնել։ Առկա դատվածության քրեաիրավական հետևանքների տարածումը նոր հանցանքի համար պատիժ նշանակելիս դուրս չի գալիս այն թույլատրելի քրեաիրավական միջոցների շրջանակներից, որն օրենսդիրն իրավունք ունի օգտագործելու արդարացված նպատակների նվաճման համար՝ ապահովելով պատժի տարբերակումն ու անհատականացումը, դրա ազդեցության ուժեղացումը դատապարտյալի նկատմամբ, նոր հանցագործությունների կանխումը և հանցավոր ոտնձգություններից անձի, հասարակության ու պետության պաշտպանությունը։ Հարկ է նկատել, որ տվյալ դեպքում ոչ թե կրկնակի պատիժ է նշանակվում, այլ նոր կատարված արարքի համար

<sup>89</sup> Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 16.12.1966թ.-ի 2200 Ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 23.03.1976)։

<sup>90</sup> Վերոնշյալ հարցը մանրամասն քննարկվել է սույն աշխատանքի առաջին գլխի երկրորդ պարագրաֆի շրջանակներում։

նշանակվող պատիժը օրենքով սահմանված կոնկրետ չափերով խստացվում է՝ պայմանավորված հանցավորի անձին տրվող օբյեկտիվ գանահատականով: Այն ոչ թե հակասում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, այլ, ընդհակառակը, բխում է այդ սկզբունքներից, ապահովում է պատժի անհատականացում, հետևաբար նաև՝ արդարացի պատժի նշանակում:

Անթույլատրելի է տեսության մեջ տարածված այն մոտեցումը, որ հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող ի վնաս անձի հաշվի առնվել, իսկ հանցավորին պատասխանատվության և պատժի ենթարկելիս պետք է առաջնորդվել միայն կատարված արարքը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով, մասնավորապես՝ հանցագործությամբ պատճառված վնասով, եղանակով, մեղքի ձևերով, շարժառիթներով ու նպատակներով և այլն, այսինքն՝ այնպիսիներով, որոնք արտացոլվում են միայն կատարված հանցավոր արարքում: Մեր համոզմամբ հանցագործությունը և հանցանք կատարած անձը սերտորեն կապված են, և դրանք միմյանցից արհեստականորեն տարանջատելու փորձերը ի սկզբանե ենթակա են ձախողման: Հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների ամբողջությունը բնութագրում և թույլ է տալիս պատկերացում կազմելու նաև հանցավորի վերաբերյալ, իսկ հանցավորի անձը բնութագրող տվյալներն իրենց հերթին ազդում են հանցագործության վտանգավորության աստիճանի վրա (օրինակ՝ կրկնահանցագործների դեպքում վերջիններս մասնագիտանում են հանցավոր արարքների կատարման մեջ, յուրացնում են հանցավոր տեխնիկան, ինչը մեծացնում է յուրաքանչյուր հաջորդ հանցագործությունը բարեհաջող ավարտին հասցնելու հավանականությունը՝ դրանով իսկ ազդելով հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի վրա): Հետևաբար միայն հանցագործությունը և հանցավորին բնութագրող տվյալների ամբողջական վերլուծությունը թույլ կտա պատկերացում կազմելու հանցագործության իրական վտանգավորության վերաբերյալ և նշանակելու արդարացի ու անհատական պատիժ:

Հարկ է նկատել, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանը նույնպես իր որոշումներում բազմիցս ընդգծել է հանցավորի անձը բնութագրող տվյալները

մանրամասն վերլուծության ենթարկելու կարևորությունը<sup>91</sup>: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը Ա.Շաքարյանի գործով որոշմամբ նշել է՝ «(...) [Պ]ատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված հանցագործության բնույթի և հանրային վրանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող տվյալների՝ նրա սոցիալ-հոգեբանական, քրեաիրավական և մի շարք այլ հատկանիշների համակցության ճիշտ գնահատումը: Հանցավորի անձը բնութագրող տվյալներն էական նշանակություն ունեն քրեաիրավական ներգործության այս կամ այն միջոցի ընտրության համար, հետևաբար պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է բացահայտել և օբյեկտիվորեն հաշվի առնել նրա ֆիզիոլոգիական և սոցիալական առանձնահատկությունները: Դատարանի նշված պարտականությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի տրամաբանությունից, որի համաձայն՝ պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը (...)»<sup>92</sup>:

Կարծում ենք՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը ծանրացնող հանգամանք է, որը նախևառաջ վերաբերում է հանցանքը կատարած անձին, քանի որ այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը և պատիժը խստացնելը պայմանավորված է նրա կողմից նախկինում կատարված հանցանքի համար դատապարտված լինելու հանգամանքով, ինչը բացասական առումով է բնութագրում հանցավորի անձը և վկայում նրա բարձր վտանգավորության մասին: Հետևաբար, տեղին չէ այն պնդումը, որ ռեցիդիվը՝ որպես ծանրացնող հանգամանք, հանցագործության որևէ տարրին չի պատկանում. ռեցիդիվը սերտորեն կապված է և վերաբերում է հանցագործության սուբյեկտին, վկայում է վերջինիս մեջ հանցավոր կողմնորոշումների արմատավորման, նրա վարքագծի հակասոցիալական ուղղվածության մասին:

Ինչ վերաբերում է այն պատճառաբանությանը, որ դատվածության և ռեցիդիվի ինստիտուտներն ամբողջատիրական ռեժիմի արդյունք են և հակասում են

<sup>91</sup> Տե՛ս, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ս.Սարգսյանի վերաբերյալ գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ՍԴ/0109/01/12, Ս.Աղախանյանի վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կայացված թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշումները:

<sup>92</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ա.Շաքարյանի վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացրած թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշումը:



Եվրոպական արժեքներին, ապա եվրոպական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ինստիտուտները նախատեսված են պետությունների մեծ մասի քրեական օրենսգրքերում, ընդ որում, որոշ դեպքերում սահմանվում են բավականին խիստ ներգործության միջոցներ, ինչին առավել հանգամանորեն կանդրադառնանք սույն գլխի հաջորդ պարագրաֆում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հանցագործությունների ռեցիդիվը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսելը և քրեաիրավական ներգործության միջոցները խստացնելը արդարացված է, չի հակասում կրկնակի դատապարտման անթույլատրելիության ու օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքներին, հետապնդում է իրավաչափ նպատակ: Մասնավորապես այն պայմանավորված է ոչ թե նախկին արարքի համար «հատուցման» անհրաժեշտությամբ (նախորդ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելով և պատիժ կրելով՝ անձն արդեն լիովին «քավում» է իր մեղքը), այլ հանցավորի անձին և կրկնվող հանցավոր վարքագծի վտանգավորության աստիճանին ու բնույթին օրենսդրի կողմից տրված օբյեկտիվ գնահատականով. կրկնվող հանցագործությունները նպաստում են անձի հանցավոր մասնագիտացմանը, անհրաժեշտ տեխնիկայի յուրացմանը և հետագայում հանցավոր գործունեությունն ավելի դյուրին ու արդյունավետ շարունակելուն, ինչն անկասկած բարձրացնում է նաև յուրաքանչյուր հաջորդ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը: Այնուհանդերձ ռեցիդիվը նախևառաջ բնութագրում է հանցավորի անձը, նրա մեջ կայուն և խոր հակահասարակական կողմնորոշումների առկայության, հանցավոր վարքագծում հմտացման և արհեստավարժության ցուցանիշ է, վկայում է, որ պետության անունից կայացված դատավճիռը և դրանով հանցավորի վարքագծին տրված բացասական գնահատականը բավարար արդյունավետություն չեն ունեցել ու չեն ազդել վերջինիս ուղղման վրա:

Բացի այդ, հանցագործությունների ռեցիդիվը բավականին տարածված երևույթ է, որին հաճախ առնչվում է իրավակիրառ պրակտիկան: Ռեցիդիվային հանցագործությունների ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը «առաջատար

դիրքեր» է զբաղեցնում ԱՊՀ անդամ երկրների շարքում: Միջին հաշվով ռեցիդիվային հանցավորության մակարդակը կազմում է ընդհանուր հանցագործությունների քառորդ մասը՝ զիջելով միայն Բելառուսի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը<sup>93</sup>: Վերոնշյալ հանգամանքը նույնպես վկայում է ռեցիդիվային հանցավորության դեպքում խիստ պատիժների նախատեսման անհրաժեշտությունը:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները նույնպես առանձնահատուկ դրսևորում են ձեռք բերում: ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 10-ի և 61-ի իմաստով պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցագործության հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, հանցավորի անձը բնութագրող տվյալներին, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին: Ռեցիդիվի պարագայում արդարացի և անհատական պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է թվարկվածներից բացի մանրամասն գնահատման ենթարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասով նախատեսված հանգամանքները՝ կատարված հանցանքների քանակը, բնույթը և վտանգավորությունը, այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժն արդյունավետ չի եղել հանցավորի ուղղման տեսանկյունից, ինչպես նաև նոր հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը: Այլ կերպ ասած, դատարանը պատիժ նշանակելիս պարտավոր է պարզաբանել ինչպես նախկին դատապարտման, այնպես էլ նոր հանցագործության հետ կապված բոլոր հանգամանքները:

Ինչ վերաբերում է մարդասիրության սկզբունքին, ապա այն նախևառաջ անհրաժեշտ է դիտարկել մարդու և հասարակության շահերի պաշտպանության տեսանկյունից: Այսպես՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում քրեաիրավական ներգործության միջոցների խստացումը նպատակ է հետապնդում ապահովելու քրեական օրենսգրքի խնդիրների իրացումը, այն է՝ հանցավոր ոտնձգությունից մարդու և հասարակության իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հանցագործությունների կանխարգելումը: Չպետք է նաև մոռանալ

<sup>93</sup> Տե՛ս հանցավորության վիճակն ԱՊՀ անդամ-պետությունների տարածքում 2004-2010 թվականներին, Վիճակագրական ժողովածու, ՌԴ ՆԳՆ, 2011թ., էջ 15-16:

հանցագործությունից տուժած անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի մասին՝ նկատի ունենալով, որ հանցավորի նկատմամբ պատասխանատվության չափը միևնույն ժամանակ մարդասիրության չափ է տուժողի նկատմամբ: Մեր համոզմամբ արդարության և մարդասիրության սկզբունքները կխախտվեին հատկապես այն պարագայում, երբ առաջին անգամ հանցանք կատարած և կրկնակի հանցավոր վարքագիծ դրսևորած (ընդ որում, նախկինում կատարված հանցանքներից մեկի համար արդեն իսկ դատապարտված) անձանց նկատմամբ ցուցաբերվեր միատեսակ մոտեցում, և հավասար պատասխանատվություն սահմանվեր:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ում ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն առանձնահատուկ դրսևորում են ստանում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Մասնավորապես, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի կանոններով, պատիժ է նշանակում ոչ թե քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայի, այլ այն շրջանակներում, ինչը ստացվում է նշված կանոնի կիրառման արդյունքում՝ պատժի նվազագույն չափի պարտադիր խստացմամբ: Բացի այդ, պատիժ նշանակելիս դատարանը, հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները գնահատելուց զատ, գնահատման է ենթարկում նախկինում կատարված հանցանքների բնույթը, քանակը, այն հանգամանքները, որոնց ուժով կրած պատիժն արդյունավետ չի եղել: Միայն նշված հանգամանքների ամբողջական և համակողմանի վերլուծության արդյունքում է հնարավոր նշանակել անհատական և արդարացի պատիժ, որը համաչափ կլինի կատարված արարքի վտանգավորությանը և հանցավորի անձին:

## §2. Հանցագործությունների ռեցիդիվը՝ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ով սահմանված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների թվարկումը սկսվում է հանցագործությունների ռեցիդիվից: Բավականին երկար ժամանակ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները բացակայում էին, և դատարանն անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակը և չափը որոշում էր իր հայեցողության շրջանակներում: 2011 թ. մայիսի 23-ին ընդունված ՀՕ-143-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքը լրացվեց 67.1 հոդվածով, որով սահմանվեցին ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ: Նշված կանոնների հիման վրա, ռեցիդիվի տեսակով պայմանավորված, անձի նկատմամբ կիրառելի պատժի նվազագույն չափը խստացվում է:

Այսինքն՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքում հանցագործությունների ռեցիդիվը դիտվում է որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք և միաժամանակ նախատեսվում են պատիժ նշանակելու հատուկ կանոններ: Որոշ հեղինակների կարծիքով ռեցիդիվի՝ որպես ծանրացնող հանգամանքի և դրա դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների միաժամանակյա առկայությունը հանգեցնում է ռեցիդիվի կրկնակի գնահատման, ուստի այն որպես ծանրացնող հանգամանք անհրաժեշտ է բացառել<sup>94</sup>: Մյուսները գտնում են, որ մեջբերված նորմերի միջև հակասություն առկա չէ. հոդված 63-ը ընդհանուր գծերով սահմանում է ռեցիդիվի դերը պատիժ նշանակելու համակարգում, ուղղվածություն է տալիս նշանակվող պատժի վերաբերյալ՝ ոչինչ չասելով, սակայն, կոնկրետ պատժաչափի մասին, ինչը որոշվում է հատուկ կանոնի կիրառման արդյունքում<sup>95</sup>:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է համաձայնել վերջին տեսակետին, քանի որ քննարկվող նորմերը (հոդված 63-ի 1-ին մասի 1-ին կետը և հոդված 67.1-ը) ոչ թե

<sup>94</sup> Տե՛ս **Тосакова Л. С.** Назначение наказания при рецидиве преступлений по действующему уголовному законодательству: дис. ... канд. юрид. наук, Казань, 1997, էջ 153-171, **Серков П. П.** Смягчающие и отягчающие обстоятельства как средства обеспечения индивидуализации наказания: Автореф. дис. ...канд. юрид. наук, М., 2003, էջ 10, **Горбунова Л. В.** Обстоятельства, отягчающие наказание по уголовному законодательству России и зарубежных стран: Автореф. дис. канд. юрид. наук, Самара, 2003, էջ 24, **Благов Е. В.** Назначение наказания (теория и практика), Ярославль, 2002, էջ 102:

<sup>95</sup> Տե՛ս **Чучаев А. И., Буранов Г. К.** Рецидив преступления и наказание // Журнал российского права, 2000, N 2, էջ 35:

հակասում, այլ, ընդհակառակը, լրացնում են միմյանց: Հակառակ մոտեցումը մեր համոզմամբ վիճելի կլինի օրինականության սկզբունքի տեսանկյունից: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ը սպառիչ կերպով թվարկում է այն հանգամանքները, որոնց առկայությունը հիմք է անձի նկատմամբ նշանակվող պատիժը խստացնելու համար, և դրանցից բացի՝ այլ հանգամանք դատարանն իրավունք չունի դիտելու որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող: Այսինքն՝ անձի համար խիստ պատիժ նախատեսող ցանկացած կարգ պետք է որոշակի հիմքեր ունենա: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը պարունակում է պատժի խստացման պարտադիր կանոն, որի հիմքը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ով որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսված հանցանքը կատարելու ռեցիդիվն է: Հետևաբար, եթե ռեցիդիվը բացառվի ծանրացնող հանգամանքների շարքից, ապա հոդված 67.1-ը կկորցնի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հետ կապը և կհակասի հոդվածներ 5-ին, 61-ին և 63-ին: Այլ կերպ ասած՝ նշված ծանրացնող հանգամանքը վերացվելու դեպքում անձի նկատմամբ խիստ պատիժ նշանակելու կարգ նախատեսող հատուկ կանոնը կզրկվի իր օրինական հիմքից:

Ինչ վերաբերում է այն հակափաստարկին, որ պատիժ նշանակելիս ռեցիդիվը կարող է կրկնակի գնահատման ենթարկվել, ապա դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ մտահոգությունը տեղին չէ: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը կիրառում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով սահմանված կանոնը, ռեցիդիվի առկայությունը կրկնակի չի դիտարկվում որպես ծանրացնող հանգամանք: Միևնույն ժամանակ, եթե առկա է հատուկ կանոնի կիրառման որևէ արգելք, ապա հանցագործությունների ռեցիդիվը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ի կարգով դիտվում է որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Օրինակ՝ հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Ալեք Պողոսյանի* վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ/0071/01/13 գործով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ գործի դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում

հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է, և պետք է գործի արագացված դատաքննության կանոնը՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մայիսի 3-ի գործով դատավճռով, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունիսի 7-ի գործով դատավճռով արձանագրել են, որ թեպետ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը՝ սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով, չի կարող կիրառվել, այնուամենայնիվ ռեցիդիվի առկայությունը պետք է դիտվի որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք<sup>96</sup>:

Այսպիսով, հանցանքը կատարելու ռեցիդիվը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ում որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսելն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, ուստի անթույլատրելի է այն բացառել ծանրացնող հանգամանքների թվից:

Դժվար չէ նկատել, որ Նախագծում այլ կարգավորում է նախատեսվել: Մասնավորապես, որպես պատիժը ծանրացնող հանգամանք սահմանվել է ոչ թե հանցանքը կատարելու ռեցիդիվը, այլ հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը (հոդված 73, 1-ին մասի 1-ին կետ): Կարծում ենք՝ Նախագծում առաջարկվող լուծումն ավելի արդարացված է և իր մեջ ընդգրկում է ոչ միայն ռեցիդիվը, այլև որպես ռեցիդիվ չգնահատվող մյուս իրավիճակները: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը հիմք չէ պատիժ նշանակելու հատուկ կանոնը կիրառելու համար (Նախագծի հոդված 79), կամ առկա դատվածությունը չի ձևավորում հանցագործությունների ռեցիդիվ, ապա այն (դատվածությունը) դատարանի կողմից պետք է գնահատվի որպես ծանրացնող հանգամանք: Վերոնշյալը թույլ կտա դատարանին պատիժ նշանակելիս համապատասխան իրավական գնահատականի արժանացնել այն անձանց արարքը, ովքեր նախկինում կատարված հանցանքի համար ունեն չմարված կամ չհանված

<sup>96</sup> Տե՛ս Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 3-ին թիվ ԵՄԴ/0001/01/17 գործով, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 7-ին թիվ ՏԴ/0025/01/17 գործով կայացված դատավճիռները:

դատվածություն, որը, սակայն, հանցագործությունների ռեցիդիվ չի ձևավորում (օրինակ՝ անզգույշ հանցագործությունների կամ նախքան 18 տարին լրանալը առաջացած դատվածության դեպքերում և այլն):

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 84-ի 2-րդ մասում թեև նշվում է, որ դատվածությունը հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս, այնուամենայնիվ հոդված 63-ում թվարկված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների մեջ այն չի նախատեսվում, ինչը բացառում է դատվածությունը պատիժ նշանակելիս որպես ծանրացնող հանգամանք հաշվի առնելու հնարավորությունը, քանի որ դրանք քրեական օրենսգրքում թվարկված են սպառիչ կերպով: Հետևաբար Նախագծով սահմանված կարգավորումն ավելի հիմնավորված է:

Հանցագործությունների ռեցիդիվը՝ որպես հանցավոր վարքագծի կրկնության առավել վտանգավոր դրսևորում, մշտապես դիտվել է որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, սակայն մինչև այժմ շարունակվում է վիճելի մնալ ռեցիդիվի դեպքում պատասխանատվությունը խստացնելու հիմքերի հարցը. ինչո՞ւ է պայմանավորված ռեցիդիվային հանցավորության վտանգավորությունը՝ ռեցիդիվիստի անձո՞ւ, թե՞ արարքի վտանգավորության բնույթով և աստիճանով: Նշված խնդրի ճիշտ լուծումը սկզբունքային նշանակություն ունի, քանի որ դրանով պայմանավորված՝ ռեցիդիվի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները վերջին տարիներին էական փոփոխությունների են ենթարկվել:

Հանցագործությունների ռեցիդիվը բազմակիության առավել վտանգավոր տեսակն է, քանի որ անձը կատարում է մեկից ավելի հանցավոր արարքներ և շարունակում է հանցավոր գործունեությունը՝ ի հեճուկս այն բանի, որ պետության անունից արդեն իսկ դատապարտվել է նախկինում կատարված արարքի համար, նրա նկատմամբ կիրառվել են պետական հարկադրանքի միջոցներ, սակայն վերջինս այդ փաստից որևէ հետևություն չի կատարել և չի կանգնել ուղղման ճանապարհին: Սա վկայում է անձի կայուն հակասոցիալական վարքագծի, արդեն իսկ կիրառված հարկադրանքի միջոցների անբավարարության, ուստի և տվյալ անձի նկատմամբ

առավել ազդեցիկ միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին: Հետևաբար հանցագործությունների ռեցիդիվը պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը և դրանով պայմանավորված նշանակվող պատիժը խստացնելը միանգամայն արդարացված է: Սակայն այն հարցը, թե ռեցիդիվի վտանգավորությունը գնահատելիս ինչն է կարևորվում՝ հանցագործի անձը, թե վերջինիս կատարած արարքը, շարունակվում է վիճելի մնալ: Որոշ հեղինակներ այն պայմանավորում են հանցավորի անձնական առանձնահատկություններով.<sup>97</sup> *«Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատասխանատվության խստացման անհրաժեշտությունը մշտապես պայմանավորված է եղել հանցավորի անձի բարոյական աղճատման, նրա ուղղման ենթակա չլինելու հանգամանքով»*<sup>98</sup>:

Ն. Ֆ. Կուզնեցովան ևս հետևողականորեն այդ գաղափարն էր պնդում: Վերջինիս կարծիքով անհրաժեշտ էր քրեական օրենսգրքում պահպանել առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտը, քանի որ քրեական իրավունքի տեսանկյունից ռեցիդիվիստը նույնքան հատուկ սուբյեկտ է, որքան, օրինակ, պաշտոնատար անձը կամ զինծառայողը<sup>99</sup>:

Այլ հեղինակների կարծիքով հանցագործությունների ռեցիդիվը ծանրացնող հանգամանք է, որը վերաբերում է հանցավոր արարքին<sup>100</sup>: Ոմանք էլ կարծում են, որ ռեցիդիվի դեպքում բարձրանում է թե՛ արարքի, թե՛ անձի վտանգավորությունը<sup>101</sup>: Մասնավորապես, հանցագործի և հանցագործության վտանգավորության աստիճանը պետք է դիտել միասնության և փոխպայմանավորվածության մեջ, ընդ որում այդ միասնության մեջ որոշիչ նշանակություն ունի հենց արարքի հանրային վտանգավորությունը. անձի վտանգավորությունը, առանց իր կատարած արարքի հետ

<sup>97</sup> Տե՛ս **Дядькин Д. С.** Теоретические основы назначения уголовного наказания: алгоритмический подход. СПб.: Юридический центр Пресс, 2006, էջ 303:

<sup>98</sup> Տե՛ս **Шевченко В. Ф.** Уголовно-правовая и криминологическая характеристика рецидивной преступности (на материалах Санкт-Петербурга): Автореф. дис. ... канд. юрид. наук, СПб., 1998, էջ 11:

<sup>99</sup> Տե՛ս **Кузнецова Н. Ф.** Профилактическая функция уголовного закона // Уголовное право, 1998, N 1, էջ 20:

<sup>100</sup> Տե՛ս **Непомнящая Т. В.** Назначение уголовного наказания: теория, практика, перспективы. СПб.: Юридический центр Пресс, 2006, էջ 85:

<sup>101</sup> Տե՛ս **Коробеев А.И.** Полный курс уголовного права: В 5 т. Т. 1, Преступление и наказание, СПб.: Юридический центр Пресс, 2008, էջ 875:



կապի, չի կարող ինքնուրույն դեր խաղալ<sup>102</sup>: Հետաքրքիր է նաև այս հարցի կապակցությամբ Ա. Վ. Բրիլլիանտովի այն դիրքորոշումը, որ արարքը անձից առանձնացնելու փորձը ի սկզբանե ենթակա է ձախողման, քանի որ արարքի միջոցով բնութագրվում է հանցագործը, իսկ հանցավորի միջոցով՝ արարքը: Պատիժը գործի ողջ հանգամանքների համակցության վերլուծության արդյունք է<sup>103</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ռեցիդիվի դեպքում քրեական պատասխանատվության զարգացումները ընթացել են *դասական և սոցիոլոգիական* դպրոցների ազդեցության ներքո:

*Սոցիոլոգիական դպրոցի* ներկայացուցիչները հանցավորի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս առավել կարևորում էին վերջինիս անձնական բնութագրիչները, այսինքն՝ շեշտը հանցավոր արարքից ուղղում էին դեպի հանցավորի անձ: Վերջիններս զարգացրել են անձի վտանգավոր վիճակի մասին գաղափարը, ինչը լայնորեն տարածում գտավ Խորհրդային Միության ժամանակահատվածում՝ հիմնավորելով քրեական պատասխանատվության հարցը լուծելիս հանցավորի անձը բնութագրող տվյալների որոշիչ դերի վերաբերյալ տեսակետը<sup>104</sup>:

Խորհրդային հանրապետությունների քրեական օրենսգրքերում առկա առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտը ոչ այլ ինչ էր, քան սոցիոլոգիական դպրոցի գաղափարների և անձի վտանգավոր վիճակի տեսության ներթափանցում քրեական օրենսդրության մեջ: Այսպես՝ 1958 թվականի ԽՍՀՄ քրեական օրենսդրության հիմունքներում նախատեսվեց «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացությունը, սակայն դրա մեկնաբանությունը դեռևս տրված չէր: 1969 թվականի՝ ԽՍՀՄ և Խորհրդային հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով ներմուծվեց ինքնուրույն հոդված (հոդված 23), որով սահմանվեցին և միասնականացվեցին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հատկանիշները: Մասնավորապես անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ էր ճանաչում դատարանը՝ հաշվի առնելով հանցավորի անձը, հանցագործության բնույթն ու

<sup>102</sup> Տե՛ս **Бузынова С. П.** Рецидив преступлений, М., 1980, էջ 10-11:

<sup>103</sup> Տե՛ս **Бриллиантов А. В.** Дифференциация наказания: уголовно-правовые и уголовно-исполнительные проблемы: Дис. ... д-ра юрид. наук, М., 1998, էջ 239 - 240:

<sup>104</sup> Տե՛ս **Кафаров Т. М.** Проблемы рецидива в советском уголовном праве, Баку, 1972, էջ 96:

վտանգավորության աստիճանը, դատվածությունների քանակը, հանցանքների ծանրությունը, բնույթը (պետք է դիտավորյալ լինեին), նախկինում և նոր կատարված հանցանքների համար սահմանված պատժի տեսակն ու չափը և այլ հանգամանքներ: Առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելիս հաշվի չէին առնվում այն հանցագործությունների համար դատվածությունը, որոնք անձը կատարել էր նախքան 18 տարին լրանալը, ինչպես նաև հանված կամ մարված դատվածությունը:

Առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունից երևում է, որ այն իրենից ներկայացնում էր երկու տեսությունների՝ դասական և սոցիոլոգիական, յուրահատուկ սինթեզ, քանի որ որոշվում էր մի կողմից՝ հանցագործության բնույթով և վտանգավորության աստիճանով, մյուս կողմից՝ հանցավորի անձով, նրա ունեցած դատվածությունների քանակով:

Առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացության օրենսդրական վերոնշյալ չափորոշիչները կոնկրետացվում էին ԽՍՀՄ Գերագույն դատարանի որոշումներով: Մասնավորապես սահմանվում էր, որ դատարաններն անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելիս պետք է հաշվի առնեին հանցավորի անձը, կատարված հանցանքների հանրային վտանգավորության աստիճանը, հանցագործության շարժառիթները, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությանն անձի մասնակցության բնույթն ու աստիճանը և գործի մյուս բոլոր հանգամանքները: Նշված որոշումներում Գերագույն դատարանն ընդգծում էր, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ պետք է ճանաչվեն առավել չարամիտ հանցագործները, որոնք բարձր վտանգավորություն են ներկայացնում հասարակության համար և համառորեն չեն ցանկանում ուղղվել<sup>105</sup>: Դատական պրակտիկան ընթանում էր ռեցիդիվիստների պատասխանատվության խստացման ճանապարհով: Այսպես՝ ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի՝ 1976 թ. հունիսի 25-ի «Դատարանների կողմից ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարում օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին» պարզաբանմամբ ընդգծվեց, որ դատարանները ռեցիդիվիստների նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է առաջնորդվեին այն համոզմունքով, որ անարդարացի մեղմ պատիժները չեն կարող

<sup>105</sup> Ст'я Бюллетень Верховного Суда РСФСР, 1977, № 6:

նպաստել վերջիններհս վերադաստիարակման նպատակի իրագործմանը<sup>106</sup>:

ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքում ևս սահմանվում էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը (հոդված 23.1): Ընդ որում, այն նախատեսված էր ոչ թե պատիժ նշանակելու գլխում, ինչպես որ մի քանի հանցագործությունների (այսինքն՝ հանցանքների համակցության) կամ մի քանի դատավճիռներով պատիժ նշանակելու (այսինքն՝ դատավճիռների համակցության) դեպքերում, այլ պատժի տեսակները գլխում (գլուխ 3), իսկ հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից հանցանք կատարելը սահմանված էր որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք:

Այսպիսով, նախկին քրեական օրենսգրքում ռեցիդիվային հանցավորության վտանգավորությունը պայմանավորվում էր հանցավորի անձով, ինչի վկայությունն էր քրեական օրենսգրքում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք ոչ թե երևույթը՝ ռեցիդիվը դիտելը, այլ անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելը: Փաստորեն քրեական պատասխանատվության հիմքը արարքից տեղափոխվել էր դեպի անձը: Ընդ որում, այն ոչ միայն պատասխանատվությունն ու պատիժը անհատականացնելու հիմք էր, այլև որոշ դեպքերում նաև քրեական պատասխանատվության հիմք, քանի որ հատուկ մասի մի շարք հոդվածներում հանցանքն առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից կատարելը նախատեսված էր որպես ծանրացնող հանգամանք, ուստի անմիջականորեն ազդում էր արարքի քրեաիրավական որակման վրա: Հատկանշական է, որ 1961 թ. քրեական օրենսգրքի՝ քրեական պատասխանատվության հիմքերը վերտառությամբ հոդված 3-ում սահմանվում էր, որ քրեական պատասխանատվության և պատժի *ենթակա է միայն հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձը*, այսինքն՝ որպես քրեական պատասխանատվության հիմք նախևառաջ շեշտադրվում էր անձը: Բացի այդ, առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտը լիովին տարանջատված էր հանցագործությունների բազմակիության տեսակներից (համակցություն, կրկնակիություն)<sup>107</sup>:

Ինչ վերաբերում է քրեական իրավունքի *դասական դպրոցին*, ապա դրա

<sup>106</sup> Տե՛ս ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի՝ 1976 թվականի հունիսի 25-ի պարզաբանումը, № 4:

<sup>107</sup> Տե՛ս ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքը:

ներկայացուցիչները ռեցիդիվը դիտում էին ծանրացնող հանգամանք, որն օբյեկտիվորեն բարձրացնում էր հանցագործության վտանգավորությունը: Այլ կերպ ասած՝ դասական դպրոցի գաղափարախոսությունը հիմնավորում էր արարքի հայեցակարգը<sup>108</sup>: ՀՀ գործող քրեական օրենսգիրքն ամբողջովին կառուցված է այդ գաղափարախոսությանը համահունչ, որը բացառում է քրեական պատասխանատվության հիմքի տեղափոխումը դեպի հանցավորի անձ. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ի համաձայն՝ քրեական պատասխանատվության **միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք** կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Ռեցիդիվի դեպքում նույնպես կարևորվում է հանցավոր արարքը, ինչի մասին է վկայում հանցագործությունների ռեցիդիվը որպես բազմակիության տեսակ դիտելը: Կատարված փոփոխությունների հիմնական նպատակը (առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտից հրաժարվելը) անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս ծանրությունը դեպի հանցավոր արարք տեղափոխելն էր և հանցանքների որակումը հանցավորի անձով պայմանավորելը բացառելը: Բացի այդ օրենսդիրը, ռեցիդիվը բացատրելով արարքների մակարդակով, փորձեց խուսափել հանցավորի անձի ստիգմատիզացիայից, ինչն էականորեն դժվարացնում էր վերջինիս ուղղման գործընթացը:

Այսպիսով, գործող քրեական օրենսգիրքը հրաժարվեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունից և հատուկ մասի համապատասխան հոդվածներում «հանցանքը առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից կատարված լինելու» ծանրացնող հանգամանքից: Հանցագործությունների ռեցիդիվը նախատեսվեց որպես հանցագործությունների բազմակիության տեսակ<sup>109</sup>, և դրա

<sup>108</sup> Տե՛ս **Яковлев А. М.** Совокупность преступлений по советскому уголовному праву, М., 1960, **Малков В. П.** Множественность преступлений и ее формы по советскому уголовному праву, Казань, 1982, **Бузынова С. П.** Множественность преступлений и ее виды (уголовно-правовое исследование), М., 1988:

<sup>109</sup> Հանցագործությունների ռեցիդիվը օրենսդրի կողմից որպես բազմակիության տեսակ դիտելու մասին է վկայում այն հանգամանքը, որ դրա հասկացությունը սահմանող նորմը՝ հոդված 22-ը, նախատեսվել է հանցագործությունների համակցությունից՝ հոդված 20, և կրկնակիությունից՝ հոդված 21 (նախքան դրա ուժը կորցրած ճանաչելը), անմիջապես հետո: Սակայն այս հարցն առավել հստակ կերպով լուծվել է քրեական օրենսգրքի նախագծում, որտեղ օրենսդրական մակարդակով ներմուծվել է հանցագործությունների բազմակիություն հասկացությունը, իսկ որպես դրա տեսակներ նախատեսվել են հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը:

վտանգավորությունը պայմանավորվեց ոչ թե հանցավորի անձով, այլ հանցավոր վարքագծի կրկնությամբ, դրա պարբերական բնույթով: Մասնավորապես դրա մասին է վկայում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ով տրված հանցագործությունների ռեցիդիվի բնորոշումը, որտեղ որպես այդպիսին շեշտվում է *դիտավորյալ հանցանքի կատարումը*՝ նախկինում դարձյալ *դիտավորությամբ արարք* կատարած լինելու պայմաններում: Ինչ վերաբերում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով նախատեսված նորմին, ապա դրանում ևս հանցանք կատարած անձի վերաբերյալ որևէ նշում առկա չէ: Մասնավորապես սահմանվում է, որ պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնել կատարված *հանցանքների* քանակը, բնույթը և ծանրությունը, այն *հանգամանքները*, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև *նոր հանցագործության* բնույթը, ծանրությունը և հետևանքները:

Մինչդեռ կարծում ենք, որ ռեցիդիվն իր էությամբ նախ և առաջ բնութագրում է հանցավորին, պայմանավորված է նրա՝ նախկինում դատված լինելու ու չմարված դատվածություն ունենալու փաստով, ուստի վկայում է անձի բարձր վտանգավորության մասին: Հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու պահանջ սահմանվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, այնինչ ռեցիդիվի դեպքում անձը բնութագրող հանգամանքները մանրամասն վերլուծության ենթարկելը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում, ուստի անհրաժեշտ է օրենքում հատուկ այդ մասին նշում կատարել: Համաձայն ենք տեսության մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ դասական դպրոցի գաղափարներն ի վիճակի չեն համապարփակ կերպով բացատրելու ռեցիդիվային հանցավորության բարձր վտանգավորության պատճառները, քանի դեռ այն փորձում են տեսնել միայն կատարված հանցավոր արարքում: Վերջիններիս փաստարկներն այնքան էլ համոզիչ չեն, քանի որ, եթե արարքը դիտարկում ենք ինքնին՝ հանցավորից դուրս, ապա դժվար է գտնել այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հատկանիշ, որի ուժով ռեցիդիվային հանցագործության վտանգավորության բնույթն ու աստիճանը կտարբերվի սկզբնական

հանցագործության վտանգավորությունից:

Այս տեսանկյունից հատկապես արժեքավոր են սոցիոլոգիական դպրոցի գաղափարները, որոնք առաջին պլան են մղում հանցանք կատարած անձին՝ նկատի ունենալով, որ քրեաիրավական ներգործության միջոցները կիրառվում են հանցավորի նկատմամբ, ուստի պետք է համաչափ լինեն ոչ միայն կատարված արարքի, այլև անձի վտանգավորությանը: Միայն այդ կերպ է հնարավոր իրագործել այն կարևորագույն նպատակները, որոնք հետապնդում է նշանակվող պատիժը, և որոնք սերտորեն կապված են հենց հանցավորի անձի հետ, այն է՝ ապահովելու նրա ուղղումը ու հետագա հանցագործությունների կանխարգելումը:

Տեղին է մեջբերել քրեական իրավունքի սոցիոլոգիական-պոզիտիվիստական դպրոցի 19-րդ դարի հայտնի ներկայացուցիչ, իտալացի քրեագետ Էնրիկո Ֆերրիի քննադատությունը՝ ուղղված դասական դպրոցի ներկայացուցիչներին: Մասնավորապես վերջինս ընդգծել է, որ դասական քրեագետները մշտապես զբաղվել են հանցագործության՝ վերացական երևույթի ուսումնասիրությամբ. քրեագետն ուսումնասիրում է գողությունը, սպանությունը և այլ հանցագործությունները ինքնանպատակ՝ որպես «իրավաբանական հասկացություններ», իսկ հանցավորի անձը նրանց համար երկրորդական նշանակություն ունի: Մինչդեռ պոզիտիվիստական դպրոցը ուսումնասիրում է ոչ թե երևույթը՝ հանցագործությունը, այլ այն կատարողին: Վերոնշյալը Ֆերրին պատկերավոր կերպով համեմատել է բժշկության հետ՝ նշելով, որ մինչև 19-րդ դարի սկիզբ և նույնիսկ ավելի ուշ բժիշկը հիվանդին երկրորդ պլան էր մղում և զբաղվում էր միայն հիվանդությամբ: Իսկ հետո բժշկության մեջ նոր ուղղություն առաջ եկավ, որը կիրառում էր փաստերի դիտարկման մեթոդը և նախևառաջ ուսումնասիրում հիվանդին, նրա կյանքի պայմանները, օրգանիզմի առանձնահատկությունները և այլն: Նախկին վերացական ուղղվածությունը դուրս մղվեց պրակտիկայից և գիտությունից, իսկ հիվանդությունը բուժելու փոխարեն սկսեցին բուժել հիվանդներին<sup>110</sup>:

Այն, որ ռեցիդիվը նախևառաջ բնութագրում է հանցավորին, ընդգծել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությանը

<sup>110</sup> Տե՛ս *Энрико Ферри*, Уголовная социология, Москва, “ИНФРА-М”, 2016, էջ 31-37:

համապատասխանությունը որոշելու հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ **կրկնահանգագործները և ռեցիդիվիստները** դասվում են հատուկ սուբյեկտների շարքին, քանի որ իրենց իրավական կարգավիճակով առանձնանում են առաջին անգամ հանցանք կատարած անձանցից: **Ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է, որը հանցավորի անձը բնութագրում է որպես հանրորեն վտանգավոր և հանցավոր հակումներ ունեցող:** Այնուհետև որոշման մեջ նշվում է՝ «(...) Օրենսդիրը, սահմանելով չհանված կամ չմարված դատվածության քրեաիրավական հետևանքները, տարբերակում է դրանք կախված այն բանից, թե ինչպես է դատվածությունն անդրադառնում այս կամ այն բնույթի հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանի վրա: Եթե նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից կատարված հանցագործությունը, անկախ դրա բնույթից, մեծացնում է այդ հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, ապա դա նախատեսվում է օրենսգրքի ընդհանուր մասի նորմերում որպես պատիժը ծանրացնող հանգամանք: Իսկ եթե նախկին դատվածության ազդեցությունը նոր հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանի վրա օրենսդրի կողմից գնահատվում է որպես սովորականի շրջանակներից դուրս եկող, ապա դատվածությունը գնահատվում է որպես հանցավորի սուբյեկտին բնորոշ հատկանիշ, որի հակասոցիալական բնույթը մեծամասնությամբ որոշվում է անձի հանցավոր վարքագծի պարբերականությամբ:

Դատվածության ինստիտուտը՝ և՛ որպես որակյալ հանցակազմի տարր, և՛ որպես պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, և դրա տարբեր ձևերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է»<sup>111</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում նույնպես ընդգծել է, որ հանցագործությունների ռեցիդիվը որպես ծանրացնող հանգամանք դիտելը և պատիժ նշանակելու կանոններ սահմանելը, ըստ էության, պայմանավորված է ռեցիդիվային հանցավորության դեպքում անձի հանրային բարձր վտանգավորությամբ, ինչը դրսևորվում է նրանում, որ նա, իր նախկին հակաօրինական գործունեությանը

<sup>111</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 11-ի ՍԴՈ-882 որոշումը:

պետության կողմից տրված բացասական գնահատականի պայմաններում նոր հանցանք կատարելով, արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության և պետության շահերի նկատմամբ<sup>112</sup>:

Արտասահմանյան փորձի վերլուծությունը ևս վկայում է, որ դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյությունը հիմնականում պայմանավորվում է հանցավորի անձի բարձր վտանգավորությամբ: Պատահական չէ, որ մի շարք պետություններում նախկինում հանցագործության համար դատապարտված և հանրության համար վտանգ ներկայացնող անձանց համար պատժից բացի նախատեսվում է անվտանգության միջոցներ կիրառելու հնարավորություն, որն ուղղված է անձի վտանգավոր վիճակի չեզոքացմանը:

Այսպես՝ *Գերմանիայի Դաշնային Հանրապետության* քրեական օրենսգրքում թեպետ դատվածության և հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտները որպես այդպիսին բացակայում են, այնուամենայնիվ նախկինում կատարված հանցանքի համար առկա դատվածությունը որոշ դեպքերում ուղղման և անվտանգության միջոցներ կիրառելու հիմք է: Ուղղման և անվտանգության միջոցները դասակարգվում են երկու խմբի՝ ազատությունից զրկելու հետ կապված և ազատությունից զրկելու հետ չկապված: Ազատությունից զրկելու հետ կապված միջոցառումներից հետաքրքրություն է ներկայացնում կանխարգելիչ կալանավորումը, որի կիրառման ընդհանուր պայմանն այն է, որ անձի և նրա կատարած արարքի ընդհանուր գնահատականը ցույց տա, որ լուրջ հանցանքներ կատարելու *հակվածության* պատճառով (այնպիսիք, որոնք տուժողին պատճառում են հոգեկան տառապանք կամ ֆիզիկական ծանր վնաս) նա հանրության համար վտանգ է ներկայացնում: Անվտանգության միջոցի կիրառման տևողությունը դատավճռում *չի նշվում*: Կանխարգելիչ կալանավորման պարազայում օրենքով դրա առավելագույն ժամկետը սահմանվում է տասը տարի (§67d): Անձը կարող է ազատվել այն դեպքում, երբ դատարանը գտնի, որ վերջինս հանրության համար այլևս վտանգավոր չէ<sup>113</sup>:

*Ավստրիայի Հանրապետության* քրեական օրենսգրքով նույնպես պատիժների

<sup>112</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արամայիս Հարությունյանի վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ին կայացված թիվ ՍԴ/0204/01/13 գործով որոշումը:

<sup>113</sup> Տե՛ս Գերմանիայի 1971 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <https://www.gesetze-im-internet.de/stgb/StGB.pdf>:



հետ մեկտեղ նախատեսվում է անվտանգության միջոցներ կիրառելու հնարավորություն, որոնք քրեական օրենսգրքում անվանվում են կանխարգելիչ միջոցառումներ (3-րդ բաժին): Այդ միջոցառումներից հետաքրքրություն է ներկայացնում վտանգավոր ռեցիդիվիստների համար նախատեսված հատուկ բաժանմունք տեղավորելը: Այսպես, եթե 24 տարեկանից բարձր անձը առնվազն երկու տարի ժամկետով դատապարտվում է ազատազրկման, դատարանը միևնույն ժամանակ կարող է կարգադրել տեղավորել վերջինիս վտանգավոր ռեցիդիվիստների բաժանմունք հետևյալ դեպքում՝

ա. եթե դատապարտումը բացառապես կամ հիմնականում մեկ կամ մի քանի արարքների համար է՝ ուղղված կյանքի կամ առողջության, ազատության, սեփականության դեմ՝ զուգորդված բռնության գործադրմամբ կամ դրա սպառնալիքով,

բ. եթե նա արդեն երկու անգամ դատապարտվել է բացառապես կամ հիմնականում հողվածի առաջին մասում թվարկված արարքների համար ազատազրկման՝ վեց ամսից ավել ժամկետով, և

գ. եթե *առկա է վրանգ, որ կշարունակի* հողվածի առաջին մասում թվարկված արարքների կատարումը (§ 23-ի 1-ին մաս):

Վտանգավոր ռեցիդիվիստների համար նախատեսված հատուկ բաժանմունք տեղավորելը կատարվում է ազատազրկման ձևով *պատիժը կրելուց հետո*, որի անհրաժեշտության հարցը քննարկում է դատարանը (§24-ի 2-րդ մաս): Կանխարգելիչ միջոցառումները նշանակվում են *անորոշ ժամկետով և տևում են այնքան, որքան քիչում են դրանց կիրառման նպատակներից*: Այնուամենայնիվ վտանգավոր ռեցիդիվիստների համար նախատեսված հատուկ բաժանմունք տեղավորելը չի կարող 10 տարուց ավել լինել<sup>114</sup>:

*Իսպանիայի Թագավորության* քրեական օրենսգրքի հողված 22-ում թվարկված են ծանրացնող հանգամանքները, որոնց թվին է դասվում նաև նախկին դատվածությունը: Նույն հողվածը տալիս է ռեցիդիվի բնորոշումը, ըստ որի՝ ռեցիդիվն առկա է, երբ նախքան հանցանքի կատարումը անձն արդեն վերջնական դատավճռով դատապարտվել է միաբնույթ հանցանքի համար: Ըստ քրեական օրենսգրքի՝

<sup>114</sup> Տե՛ս Ավստրիայի 1974 թվականի քրեական օրենսգրքը՝ 2016 թվականի փոփոխություններով Austria\_CPC\_1975\_am2016\_de:

հանցավոր արարքները բաժանվում են հանցագործությունների և զանցանքների՝ կախված օրենքով դրանց համար նախատեսված պատժաչափից: Ռեցիդիվի բնորոշումից երևում է, որ այն ձևավորվում է միայն հանցագործությունների (felony) դեպքում: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ օրենքով նախատեսվում է միայն հատուկ ռեցիդիվը, իսկ ընդհանուր ռեցիդիվը քրեաիրավական նշանակություն չունի:

Իսպանիայի քրեական օրենսգրքում նույնպես նախատեսվում է անվտանգության միջոցների կիրառման հնարավորություն (4-րդ բաժին): Մասնավորապես հոդված 95-ի համաձայն՝ անվտանգության միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ կատարված արարքը հանցագործություն է (felony), և արարքը ու անձը բնութագրող հանգամանքները թույլ են տալիս եզրահանգելու, որ ապագայում ևս կարող են հանցանքներ կատարվել: Անվտանգության միջոցները դասակարգվում են երկու խմբի՝ ազատությունից զրկելու հետ կապված և չկապված<sup>115</sup>:

*Լիտվայի Հանրապետության* քրեական օրենսգիրքը նախատեսում է անձին ռեցիդիվիստ ճանաչելու կարգը: Մասնավորապես որպես այդպիսին է համարվում այն անձը, ով կատարում է մեկ կամ մի քանի դիտավորյալ հանցանքներ և դատվածություն ունի նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար, եթե դատվածությունը չի մարվել կամ հանվել օրենքով սահմանված կարգով (հոդված 27-ի): Բացի այդ՝ դատարանը անձին կարող է ճանաչել վտանգավոր ռեցիդիվիստ՝ հաշվի առնելով մեղադրյալի անձը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործության կատարմանը նրա մասնակցության բնույթը և գործի այլ հանգամանքները<sup>116</sup>:

Ռեցիդիվի վտանգավորությունը նախևառաջ հանցավորի անձով է պայմանավորվում նաև Ֆրանսիայի (հոդված 132.8)<sup>117</sup>, Լատվիայի (հոդված 27)<sup>118</sup>,

<sup>115</sup> Տե՛ս Իսպանիայի Թագավորության 1995 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2013 թվականի փոփոխություններով Spain\_CC\_am2013\_en:

<sup>116</sup> Տե՛ս Լիտվայի Հանրապետության 2000 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.111555/OTzspIvXy>:

<sup>117</sup> Տե՛ս Ֆրանսիայի 1992 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>:

<sup>118</sup> Տե՛ս Լատվիայի Հանրապետության 1998 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով, <http://likumi.lv/doc.php?id=88966>:

Սլովենիայի (հոդված 49-ի 3-րդ մաս)<sup>119</sup>, Սլովակիայի (հոդված 37-ը)<sup>120</sup>, Լեհաստանի (հոդված 64, §1)<sup>121</sup>, Բոսնիա-Հերցեգովինայի (հոդված 49-ի 2-րդ մաս)<sup>122</sup> և մի շարք այլ պետությունների քրեական օրենսգրքերով:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հանցագործությունների ռեցիդիվի վտանգավորությունը նախևառաջ պայմանավորված է հանցավորի անձով: Ընդ որում, օբյեկտիվ հատկանիշով չտարբերվող հանցագործությունների բազմակիության մյուս տեսակներից ռեցիդիվը տարբերվում է այնպիսի սուբյեկտիվ չափանիշով, ինչպիսին է նախկինում ունեցած չմարված կամ չհանված դատվածությունը, ինչը բնութագրում է հանցագործի անձը՝ ռեցիդիվը դարձնելով բազմակիության առավել վտանգավոր տեսակ: Ընդհանուր առմամբ համաձայն ենք ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության դրսևորում դիտելուն, քանի որ այն առավել մոտ է քրեական օրենսդրության ընդհանուր տրամաբանությանը և դասական դպրոցի գաղափարներին, սակայն ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հանցավորի անձին չպետք է երկրորդական նշանակություն տրվի: Կատարված արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու և պատիժ նշանակելու գործընթացում հանցավորի անձը բնութագրող տվյալները պետք է խոր վերլուծության ենթարկվեն, քանի որ պատիժն ուղղված է հանցանք կատարած անձին՝ պատժվում է ոչ թե հանցանքը, այլ այն կատարողը: Վերջին հաշվով պատժի նպատակներից է նաև հանցանք կատարած անձի ուղղումը, ուստի անձի առանձնահատկությունները հաշվի առնելն անչափ կարևոր է:

Այս մոտեցումն է որդեգրվել նաև Նախագծում: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգում ընդգծվում է, որ աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերը հիմնվում են «անձի հայեցակարգի» վրա, համաձայն որի՝ պատժվում է հանցանք կատարած անձը, ուստի պատիժը պետք է համապատասխանի

<sup>119</sup> Տե՛ս Սլովենիայի Հանրապետության 2008 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <http://www.pisrs.si/Pis.web/pregledPredpisa?id=ZAKO5050>:

<sup>120</sup> Տե՛ս Սլովակիայի Հանրապետության 2005 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <http://www.zakonypreludi.sk/zz/2005-300>:

<sup>121</sup> Տե՛ս Լեհաստանի Հանրապետության 1997 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով Poland\_CC\_1997\_am2016\_pl:

<sup>122</sup> Տե՛ս Բոսնիա-Հերցեգովինայի 2003 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>:

ոչ միայն հանցագործության, այլ նաև անձի հանրային վտանգավորությանը: Մեր քրեական օրենսգիրքը, հիմնվելով արարքի հայեցակարգի վրա, շատ դեպքերում թույլ չի տալիս ոչ միայն ապահովելու արդարության սկզբունքը, այլև պրագմատիկ և ժամանակակից պայմաններին ու քրեական իրավունքի տեսությանը համապատասխան իրականացնելու քրեաիրավական քաղաքականություն: Ըստ այդմ էլ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու, պատիժ նշանակելու, պատժից կամ պատասխանատվությունից ազատելու հարցերը անհրաժեշտ է կարգավորել հիմք ընդունելով ոչ միայն հանցագործության պատկանելությունը դասակարգման այս կամ այն խմբին, այլև հանցանք կատարողի անձնավորությունը, նրա հանրային վտանգավորությունը, կրիմինալոգիական բնութագիրը, ուղղման և վերասոցիալականացման հնարավորությունները<sup>123</sup>:

---

<sup>123</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, Երևան, 2015 թվական, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81318>:

### ԳԼՈՒԽ 3

## ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ

### **§1. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի ընդհանուր բնութագիրը և կիրառման առանձնահատկությունները**

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի սահմանումը համեմատաբար նորույթ է ՀՀ քրեական օրենսգրքի համար: Այն նախատեսվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թ. մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքով: Մինչև համապատասխան փոփոխությունները հանցագործությունների ռեցիդիվը գնահատվում էր որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք և հանգեցնում խիստ պատժի նշանակման. պատժատեսակի և պատժաչափի ընտրությունն իրականացնում էր դատարանն իր հայեցողության շրջանակներում: Հատուկ կանոնի նախատեսումը պայմանավորված էր ռեցիդիվային հանցավորության բարձր վտանգավորությամբ: Մասնավորապես ռեցիդիվը բազմակիության առավել վտանգավոր տեսակն է, քանի որ, չնայած նախկինում կատարված արարքի համար դատապարտվելուն և երբեմն նաև՝ պատիժը կրելուն, անձը շարունակում է իր հանցավոր գործունեությունը, ինչն ակնհայտորեն վկայում է հանցավորի բարձր վտանգավորության մասին: Միևնույն ժամանակ հանցավոր վարքագծի պարբերական բնույթը նպաստում է հանցավորի մասնագիտացմանը, հանցավոր տեխնիկայի և եղանակների կատարելագործմանը, ինչն էլ իր հերթին բարձրացնում է յուրաքանչյուր հաջորդ հանցագործության վտանգավորությունը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք ռեցիդիվի դեպքում պատժի նշանակելու հատուկ կանոնի նախատեսումն արդարացված է, նպատակ է հետապնդում բացառելու չարդարացված մեղմ պատիժների, ինչպես նաև նույնանման արարք կատարած և համանման բնութագիր ունեցող անձանց նկատմամբ տարբեր պատժատեսակների ու պատժաչափերի նշանակման հնարավորությունը:

Բացի այդ, ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու տարբերակված կարգի սահմանումն էականորեն նվազեցնում է դատարանի հայեցողության սահմանները: Որքան մանրամասն են օրենսդրի կողմից կարգավորվում պատժի նշանակման հարցերը, այնքան սահմանափակվում է դատարանի հայեցողության շրջանակը և հակառակը<sup>124</sup>: Թերևս արդարացված է գրականության մեջ արտահայտված այն դիրքորոշումը, որ «չափազանց լայն դատական հայեցողություն թույլատրող օրենքը կամայականությունների նախադրյալներ է ստեղծում և դառնում է այն խախտողների դաշնակիցը»<sup>125</sup>: Խոսքը, բնականաբար, դատարանի հայեցողությունը լրիվ բացառելու մասին չէ, քանի որ այն դատավորի գործունեության անբաժան մասն է, առանց որի անհնար կլիներ պատժի ու պատասխանատվության անհատականացումը և արդարության սկզբունքի կենսագործումը: Պարզապես դատարանի ընտրության ազատությունն օրենքով կանխորոշված որոշակի շրջանակներով սահմանափակելու շնորհիվ դատական հայեցողությունը չի վերածվում կամայականության:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի համաձայն՝ «1. Հանցագործությունների ռեցիդիվի, վրանգավոր և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:

Հանցագործությունների վրանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վրանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի

<sup>124</sup> Տե՛ս **Лесниевски-Костарева Т. А.** Дифференциация уголовной ответственности. Теория и законодательная практика, М., 2000, էջ 23:

<sup>125</sup> Տե՛ս **Поляков С. А.** Санкции в уголовном законодательстве: Автореф. дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук. СПб., 1996, էջ 10-12:

*համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:*

Մեջբերված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ ռեցիդիվի ազդեցությունը նշանակվող պատժի վրա բազմաբնույթ է: Մասնավորապես ռեցիդիվի դեպքում սահմանվում է պատիժ նշանակելու տարբերակված կարգ՝ նվազագույն պատժաչափի պարտադիր խստացմամբ, ինչից հետո, սակայն, պատժի հետագա անհատականացման անհրաժեշտությունը չի վերանում, որն էլ իրականացվում է՝ հաշվի առնելով հոդվածի առաջին մասում թվարկված, հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի առնվող հատուկ հանգամանքները: Այսպես՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 2-րդ մասով սահմանված ընդհանուր հանգամանքներից բացի (հանցագործության հանրային վտանգավորության բնույթ և աստիճան, հանցավորի անձ, մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ) պետք է հատուկ ուշադրություն դարձնի՝

- նախկինում կատարված հանցագործությունների քանակին, բնույթին ու ծանրությանը,

- այն հանգամանքներին, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար,

- նոր հանցագործության բնույթին, ծանրությանը և հետևանքներին:

Նշենք, որ հոդվածում տրված ձևակերպումները չեն համապատասխանում քրեական օրենսգրքում նույն երևույթները բնորոշելու համար օգտագործվող հասկացություններին, հետևաբար շփոթից խուսափելու համար ճիշտ կլիներ միասնական տերմիններ օգտագործել: Մասնավորապես «*հանցագործության բնույթ և ծանրություն*» հասկացության փոխարեն քրեական օրենսգրքում, ինչպես նաև տեսության մեջ օգտագործվում է «*հանցագործության վրանգավորության բնույթ և աստիճան*» հասկացությունը, ուստի կարծում ենք՝ անհրաժեշտ է այդ ձևակերպումը փոխել: Բացի այդ, «նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները» ձևակերպման մեջ ևս թերություն է առկա: Բանն այն է, որ հանցագործության հետևանքները հանցագործության վտանգավորության աստիճանի հիմնական

ցուցանիշն են, դրա բաղկացուցիչ մասը, ուստի դրանք իրարից առանձնացնելը սխալ է<sup>126</sup>:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի առաջին մասի համաձայն՝ դատարանը պատիժ նշանակելիս նախ պետք է հաշվի առնի կատարված հանցավոր արարքների քանակը: Ընդ որում, պետք է հաշվի առնել ինչպես դատապարտումների, այնպես էլ յուրաքանչյուր անգամ դատապարտվելիս կատարված արարքների թիվը: Բնականաբար, եթե հանցանք է գործում մեկից ավելի դատվածություն ունեցող անձը, պատիժը կարող է համեմատաբար ավելի խիստ լինել (բարդ ռեցիդիվ):

Թվում է, թե գործող օրենսդրությամբ պատիժ նշանակելիս կատարված հանցավոր արարքների թիվը գնահատելու պահանջն ավելորդ է, քանի որ նախկին դատապարտումները հաշվի առնելով՝ ռեցիդիվը դասակարգվում է տեսակների՝ վտանգավոր և առանձնապես վտանգավոր, որոնցից յուրաքանչյուրի դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսվում է պատժի խստացման պահանջ, ուստի ճիշտ չէր լինի կատարված արարքների թիվը կրկնակի գնահատման ենթարկել: Սակայն մեր կողմից սույն աշխատանքի առաջին գլխում առաջարկվել է հրաժարվել ռեցիդիվը տեսակների դասակարգելուց: Հետևաբար, եթե օրենսդրորեն ռեցիդիվի տեսակները վերացվեն, ապա պատիժ նշանակելիս նախկինում կատարված արարքների և առկա դատվածությունների թիվը հաշվի առնելու պահանջը ձեռք կբերի առաջնահերթ նշանակություն՝ պատժի անհատականացման տեսանկյունից:

Դատարանն այնուհետև պարտավոր է գնահատել նախկին և նոր կատարված հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Եթե նախկինում կատարված հանցանքներն աչքի են ընկնում բարձր հանրային վտանգավորությամբ, իսկ նոր կատարվածն էլ իր վտանգավորությամբ չի զիջում վերջիններին, ապա կարող է նշանակվել ավելի խիստ պատիժ: Սակայն որքան էլ որ բարձր լինի նախորդ հանցանքների վտանգավորությունը, դատարանը չի կարող էապես խստացնել պատիժը, եթե նոր կատարված արարքը ցածր հանրային վտանգավորություն ունի, չնչին վնաս է պատճառել կամ հանցավորը երկրորդական դեր է ունեցել հանցանքի կատարման մեջ:

<sup>126</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2012 թ., էջ 453:



Նախկինում և նոր կատարված հանցանքների բնույթն ու հանրային վտանգավորությունը հաշվի առնելու պահանջն անհրաժեշտ է նաև հանցավորի կայուն հակահասարակական դիրքորոշումը, միաբնույթ հանցանքներ կատարելու նրա հակվածությունը (շահադիտական, բռնի, բռնի-շահադիտական և այլն) բացահայտելու համար<sup>127</sup>: Մասնավորապես, եթե անձը նախկինում կատարել է նույն կամ միաբնույթ հանցանքներ, այսինքն՝ առկա է հատուկ ռեցիդիվ, ապա նշանակվող պատիժը կարող է համեմատաբար ավելի խիստ լինել, քանի որ հատուկ ռեցիդիվը, որպես կանոն, վկայում է հանցավորի մասնագիտացման, կայուն հանցավոր հայացքների և հանցանք գործելու հակվածության մասին, ինչը պետք է արտահայտվի պատիժ նաշանակելիս: Սակայն վերոնշյալը պետք է դիտարկել գործի բոլոր հանգամանքների ամբողջության մեջ, քանի որ կոնկրետ դեպքում հնարավոր է, որ ընդհանուր ռեցիդիվը վկայի հանցավորի առավել բարձր վտանգավորության մասին, քան հատուկը:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է բացահայտել այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել հանցավորի ուղղման համար: Որոշ հեղինակներ կարծում են, որ վերոնշյալ դրույթը օրենքից պետք է բացառվի<sup>128</sup>, քանի որ դատական քննության ընթացքում գործնականում անհնար է հավաստի կերպով սահմանել՝ ինչպիսի հանգամանքների արդյունքում է նախկին պատժի ուղղիչ ազդեցությունն անբավարար եղել<sup>129</sup>: Քրեական օրենսգիրքը ոչ միայն չի սահմանում, այլև որևէ ակնարկ չի պարունակում այն չափանիշների վերաբերյալ, որոնցով կարելի է որոշել նախորդ պատժի անարդյունավետությունը: Գործնականում գրեթե անհնար է հավաստի սահմանել և ի հայտ բերել այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատժի ուղղիչ ազդեցությունն անբավարար է եղել<sup>130</sup>:

Նշված դիրքորոշումներին դժվար է համաձայնել: Իհարկե, իրականում շատ

<sup>127</sup> Տե՛ս **Чучаев А. И.** Комментарий к уголовному кодексу РФ, Москва, 2010, էջ 212-215:

<sup>128</sup> Տե՛ս **Коротких Н. Н.** Рецидив как вид множественности преступлений в российском уголовном праве. Дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук., Владивосток, 2001, էջ 145-146:

<sup>129</sup> Տե՛ս **Бытко Ю. И.** Учение о рецидиве преступлений в российском уголовном праве (История и современность), Дис. ... д-ра юрид. наук, Саратов, 1998, էջ 206:

<sup>130</sup> Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-П որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ Ա. Լ. Կանոնովի հատուկ կարծիքը, <http://base.garant.ru/1352925/#friends>:

բարդ է հստակ սահմանել նախորդ պատժի՝ հանցավորի ուղղման տեսանկյունից անբավարար լինելու չափանիշները: Դրանք կարող են բազմաթիվ լինել և տարբեր պատճառներ ունենալ՝ պայմանավորված ինչպես հանցավորի ներքին առանձնահատկություններով, այնպես էլ արտաքին պատճառներով: Այդ է վկայում նաև մեղադրական դատավճիռների ուսումնասիրությունը, որտեղ բացակայում են նախկին դատապարտման և պատժի կրման պայմանների հետ կապված հանգամանքների բացահայտումը:

Սակայն, կարծում ենք, որ դատարանը հնարավորինս պետք է փորձի նախորդ դատապարտման հետ կապված հանգամանքները վեր հանել, քանի որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դրանց բացահայտումը կարևոր նշանակություն է ձեռք բերում. նշված հանգամանքները դատարանին հնարավորություն են տալիս կանխատեսելու անձի հետագա հանցավոր վարքագիծը, հետևաբար նաև՝ կողմնորոշվելու ճիշտ պատիժ ընտրելու հարցում: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի՝ նախկինում ինչ պատիժ է նշանակվել և ինչ ժամկետով, ինչպիսին է եղել նրա վարքագիծը պատիժը կրելու ընթացքում, դատապարտյալի նկատմամբ ինչ ուղղիչ-դաստիարակչական ներգործություն է իրականացվել, ինչպիսին է եղել նրա արձագանքը դրանց նկատմամբ և այլն: Սակայն, եթե այդ հանգամանքները պայմանավորված են հանցավորի հետ տարվող աշխատանքներում առկա թերություններով, ապա պատիժ նշանակելիս չեն կարող ի վնաս անձի հաշվի առնվել<sup>131</sup>:

Կարծում ենք՝ հոդված 67.1-ի առաջին մասում շատ կարևոր է նախատեսել պատիժ նշանակելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու պահանջ: Վերոնշյալը ոչ թե կկրկնօրինակի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այլ դատարանի ուղադրությունը կկենտրոնացնի հանցավորի անձի վրա: Ռեցիդիվն անհատի արմատավորված հակասոցիալական կայուն հատկանիշների, նրա վարքագծի հանցավոր բնույթի դրսևորումն է: Հանցանք կատարած յուրաքանչյուր անձի վերաբերյալ պետք է հավաքվեն ամբողջական տեղեկություններ, հաշվի առնվեն յուրաքանչյուրի անձնական

<sup>131</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2012, էջ 454:

առանձնահատկությունները, վերաբերմունքը պատժի նկատմամբ, ուղղիչ հիմնարկնում նրա նկատմամբ իրականացված դաստիարակչական աշխատանքների բնույթն ու մեթոդները, նոր հանցանքի կատարման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև պատիժը կրելուց հետո նրա կենսագործունեությունը, ընտանեկան պայմանները, աշխատանքի առկայությունը և այլն: Միայն վերը նշված հանգամանքները պարզելով՝ դատարանը կարող է իրականացնել պատասխանատվության ու պատժի անհատականացում և նշանակել արդարացի պատիժ, որը կբխի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանից և հանցավորի անձը բնութագրող տվյալներից՝ ապահովելով պատժի նպատակների իրագործումը՝ հանցավորի ուղղման և հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասը սահմանում է հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը՝ նախատեսելով պատժի նվազագույն չափի խստացման պարտադիր պահանջ. ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից:

Մեջբերված նորմից երևում է, որ ռեցիդիվի դեպքում պատժի խստացումը կատարվում է երկու ուղղությամբ՝ քանակական և որակական: Քանակականն արտահայտվում է նվազագույն չափի խստացմամբ, իսկ որակականը՝ առավելագույն պատժի ընտրությամբ: Որոշակի մեկնաբանության կարիք ունի *«առավելագույն պատիժ»* հասկացությունը: Մասնավորապես, պարզ չէ՝ խոսքը վերաբերում է ամենախիստ պատժատեսակին, թե դատարանի կողմից ընտրվող պատժատեսակի առավելագույն չափին: Հաշվի առնելով այն, որ օգտագործվում է *«պատիժ»* հասկացությունը, կարելի է ենթադրել, որ օրենսդիրը նկատի է ունեցել հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված ամենախիստ պատժատեսակի առավելագույն չափը: Այս առումով առավել հստակ է ՌԴ քրեական օրենսգրքում տրված ձևակերպումը: Մասնավորապես, հոդված 68-ի 2-րդ մասի համաձայն՝ ռեցիդիվի

ցանկացած տեսակի դեպքում պատժի ժամկետը չի կարող պակաս լինել կատարված հանցանքի համար սահմանված *ամենախիստ պատժատեսակի առավելագույն չափի* մեկ երրորդից, սակայն հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում<sup>132</sup>: Նման ձևակերպում է առկա նաև Բելառուսի, Մոլդովայի, Տաջիկստանի, Թուքմենստանի քրեական օրենսգրքերում<sup>133</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասի կարգավորման տրամաբանությունից բխում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը հավասարապես կիրառելի է ոչ միայն ազատազրկման, այլև ցանկացած այլ պատժատեսակի դեպքում, եթե, իհարկե, կոնկրետ հոդվածի սանկցիայով ազատազրկումը նախատեսված չէ: Օրինակ՝ եթե սանկցիայով նախատեսված են տուգանք և կալանք պատժատեսակները, ապա ռեցիդիվի դեպքում կիրառման է ենթակա կալանքը՝ որպես առավելագույն պատիժ: Որոշակի բարդություն է առաջանում, սակայն, երբ սանկցիայով նախատեսված առավելագույն պատիժը ինչ-ինչ պատճառներով չի կարող նշանակվել (օրինակ՝ կալանքի դեպքում, եթե նախաքննության ընթացքում որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը): Այսպես՝ ԼԴ/0039/01/15 քրեական գործի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արձանագրել էր, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 118-ի սանկցիայով նախատեսված առավելագույն պատիժը՝ կալանքը, չէր կարող նշանակվել, քանի որ նախաքննության ընթացքում կալանավորումն ընտրված էր եղել որպես խափանման միջոց, ուստի առկա էր պատիժ նշանակելու անհնարինություն: Արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ամբաստանյալ Ա.Թամարյանին դատապարտել էր՝ առանց պատիժ նշանակելու:

Վերոնշյալ դիրքորոշմանն իր անհամաձայնությունն էր արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը: Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսված նորմը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «առավելագույն պատիժ» եզրույթը ենթադրում է սանկցիայով նախատեսված և նշանակման համար թույլատրելի,

<sup>132</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության 1996 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/):

<sup>133</sup> Տե՛ս <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes:>

այսինքն՝ կիրառման ենթակա պատժապետականներից առավել խիստը: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ սանկցիայով նախատեսված են մեկից ավելի պատժապետականներ, իսկ դրանցից առավել խիստը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի համապատասխան նորմի ուժով կիրառման ենթակա չէ, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով որպես «առավելագույն պատիժ» պետք է համարել խստությամբ դրան նախորդող պատժապետակը: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը պայմանավորված է թե՛ քրեական օրենսդրության (մասնավորապես<sup>134</sup> պատասխանատվության անխուսափելիության) և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների ապահովման անհրաժեշտությամբ, թե՛ ռեցիդիվային հանցավորության՝ քրեաիրավական հարաբերությունների կարգավորման կառուցակարգում ունեցած դերով և նշանակությամբ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի այդպիսի մոտեցումը կոչված է բացառելու այն իրավիճակը, երբ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը անձի համար կարող է ստեղծել ավելի բարենպաստ վիճակ, քան դրա բացակայությունը՝ խաթարելով ռեցիդիվի ինստիտուտի, ինչպես նաև քրեական օրենսդրության և պատժի նշանակման սկզբունքների տրամաբանությունը: Ավելին՝ այն հանգամանքը, որ դատարանի կողմից մեղավոր ճանաչվելու դեպքում միևնույն է անձի նկատմամբ պատիժ չի նշանակվելու, կարող է կանխորոշվել դեռևս մինչդատական վարույթում՝ պատժի մասով կայացվելիք դատական ակտը վերածելով կանխատեսելի իրողության, ինչն անթույլատրելի է, և բովանդակազրկում է արդարադատության էությունը: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, բոլոր այն դեպքերում, երբ անձին մեղսագրվող հանցավոր արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասը նախատեսում է միայն տուգանք կամ կալանք պատժապետականներից որևէ մեկի կիրառման հնարավորություն (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ, 144-րդ, 155-րդ, 156-րդ, 160-րդ, 197-րդ, 260-րդ հոդվածներ, 120-րդ և 121-րդ, 124-րդ, 129-րդ, 130-րդ, 147-րդ հոդվածների 1-ին մասեր և այլն), և այդ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվում կալանավորումը (...)<sup>134</sup>:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի

<sup>134</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արմեն Թամարյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ին կայացված թիվ ԼԴ/0039/01/15 գործով որոշումը:

հողված 118-ի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժի՝ կալանքի կիրառումը նույն օրենսգրքի ընդհանուր մասի հոդված 57-ի 1-ին մասի ուժով կիրառելի չլինելու պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասի իմաստով որպես «առավելագույն պատիժ» է դիտարկվում տուգանքը:

Պետք է համաձայնել ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշմանը. ռեցիդիվի առկայությունը ոչ մի դեպքում չի կարող անձի համար բարենպաստ վիճակ ստեղծել, ինչը կհակասի ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 63-ի և 67.1-ի պահանջներին: Հանցագործությունների ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության տարատեսակ է, որը պետք է ունենա ինքնուրույն նորմատիվային արժեք և ուրույն դեր քրեաիրավական հարաբերությունների կարգավորման կառուցակարգում: Հակառակ պարագայում կստացվի, որ հանցագործությունների ռեցիդիվը կազմող իրավադրույթները հասարակական հարաբերությունների որևէ շրջանակ չեն կանոնակարգում և առարկայազուրկ են, որպիսի ենթադրությունը չի բխում օրենսդրական կարգավորման տրամաբանությունից, արդյունքում վտանգվում է քրեական օրենսդրության խնդիրների իրականացումը<sup>135</sup>:

Արտասահմանյան մի շարք պետությունների քրեական օրենսդրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների գործադրումը և պատժի խստացումը պայմանավորվում է առավել վտանգավոր հանցանքների կատարմամբ, որոնց համար անձի նկատմամբ նշանակվում է ազատազրկում պատժատեսակը: Այսպես՝ Ֆրանսիայի քրեական օրենսդրությամբ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժն էականորեն խստացվում է: Մասնավորապես, եթե անձը նախկինում դատապարտվել է ազատազրկման մինչև 10 տարի ժամկետով և կրկին այնպիսի հանցանք է կատարել, որի համար նախատեսվում է 20 կամ 30 տարի ժամկետով ազատազրկում, ապա դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, իսկ եթե նոր կատարված հանցանքի համար նախատեսվում է 15 տարի ժամկետով ազատազրկում, ապա նշանակվող պատիժը կրկնապատկվում է մինչև 30 տարի ժամկետով ազատազրկման (հոդված 132.8): Ավստրիայի քրեական օրենսդրությամբ ռեցիդիվի դեպքում պատժի խստացում տեղի է ունենում, եթե անձը

<sup>135</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Պապիկյանի* վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ին կայացված թիվ ՎԲ-149/07 գործով որոշումը:

նախկինում երկու անգամ դատապարտվել է ազատազրկման և կրկին գործած հանցանքի համար դարձյալ նշանակվում է ազատազրկում (§39-ի 1-ին մաս): Իսպանիայի քրեական օրենսդրությամբ ռեցիդիվ է ձևավորվում և դրա կանոններով պատիժ է նշանակվում միայն միաբնույթ հանցագործությունների (felony)՝ դեպքում (ոչ զանցանքների) (հոդված 22), որի պարագայում կարող է նշանակվել պատժի առավելագույն չափը (հոդված 66-ի 5-րդ մաս): Լիտվայի քրեական օրենսգրքի հոդված 56-ի համաձայն՝ դիտավորյալ հանցագործության համար ռեցիդիվիստի նկատմամբ, որպես կանոն, նշանակվում է ազատազրկում պատժատեսակը, իսկ վտանգավոր ռեցիդիվիստի նկատմամբ պետք է նշանակվի հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի միջին չափից ավելի խիստ պատիժ: Լեհաստանի քրեական օրենսգրքի հոդված 64-ի 2-րդ մասի համաձայն՝ այն անձը, ով կրել է պատժի ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով ազատազրկումը և վերջին պատիժը լրիվ կամ մասնակի կրելուց հետո հինգ տարվա ընթացքում կրկին կատարել է անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցանք, բռնաբարություն, ավազակություն կամ սեփականության դեմ ուղղված՝ բռնությամբ կամ դրա սպառնալիքով զուգորդված այլ հանցանք, դատարանը նշանակում է ազատազրկում: Վրաստանի քրեական օրենսգրքի՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող հոդված 58-ի համաձայն՝ որոշակի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքում պատիժը պետք է ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով գերազանցի պատժի նվազագույն չափը<sup>136</sup>: Ռումինիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ ռեցիդիվն առկա է, եթե դատապարտվելուց և մեկ տարուց ավել ազատազրկումը կրելուց հետո դատապարտյալը կրկին ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ հանցանք է կատարում, որի համար օրենքը նախատեսում է ազատազրկում՝ մեկ տարուց ավել ժամկետով (հոդված 41-ի 1-ին մաս)<sup>137</sup>: Սլովակիայի քրեական օրենսգրքով ռեցիդիվի առկայության դեպքում ազատազրկման նվազագույն պատժաչափը 1/3-ով բարձրացվում է (հոդված 38-ի 4-րդ մաս):

<sup>136</sup> Տե՛ս Վրաստանի 1999 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով Georgia\_CC\_1999\_am2016\_ru:

<sup>137</sup> Տե՛ս Ռումինիայի՝ 2009 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <http://legeaz.net/noul-cod-penal/>:

Հաշվի առնելով միջազգային փորձը և հիմք ընդունելով այն, որ ռեցիդիվի դեպքում նախատեսված հատուկ կանոնի գործադրումը էականորեն խստացնում է նշանակվող պատիժը, կարծում ենք՝ այն ռեցիդիվի առկայության ոչ բոլոր դեպքերում պետք է կիրառվի: Մասնավորապես, ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնը պետք է գործի միայն այն պարագայում, երբ անձը նախկինում կատարված դիտավորյալ հանցագործության համար ցմահ ազատազրկման կամ ազատազրկման ձևով պատիժ է կրել կամ կրում և նոր կատարված արարքի համար դարձյալ դատապարվում է ազատազրկման, ինչն ավելի տրամաբանական է և բխում է քննարկվող ինստիտուտի բուն էությունից: Այսպես՝ ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության ամենավտանգավոր տեսակն է, վկայում է հանցավորի անձի բարձր վտանգավորության և նրա վարքագծի կայուն հակասոցիալական ուղղվածության մասին, որի համար օրենսդրորեն նախատեսվել է պատիժ նշանակելու հատուկ կանոն, ուստի և ենթադրում է առավել խիստ պատժատեսակի՝ ազատազրկման նշանակում: Հետևաբար, եթե կիրառման ենթակա հոդվածի սանկցիայով ազատազրկում պատժատեսակը նախատեսված չէ, ապա հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնը չպետք է կիրառվի: Տվյալ դեպքում դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ի կարգով ռեցիդիվը պետք է դիտի որպես ծանրացնող հանգամանք և նշանակվող պատիժը համեմատաբար խստացնի:

Առավել վիճահարույց է և փոփոխությունների կարիք ունի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժը խստացնելու գործող մեխանիզմը, սակայն նախքան դրան անդրադառնալը վերլուծենք արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսգրքերում առկա համապատասխան կարգավորումները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի դեպքում պատժի խստացումը կատարվում է հիմնականում հետևյալ ուղղություններով՝

1) հանցագործությունների ռեցիդիվը դիտվում է որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Նման կարգավորում առկա էր նաև ՀՀ քրեական օրենսգրքում մինչև համապատասխան օրենսդրական փոփոխություններ իրականացնելը և հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու



հատուկ կանոններ սահմանելը: Մեր կողմից ուսումնասիրված պետություններից հանցագործությունների ռեցիդիվը որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է Լատվիայի, Լիտվայի, Սլովենիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Իսպանիայի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ուզբեկստանի քրեական օրենսգրքերով:

Հետաքրքրություն է ներկայացնում *Բուլղարիայի* քրեական օրենսգրքում առկա կարգավորումը: Մասնավորապես սահմանվում է վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու կարգը և նշվում, որ հատուկ մասում առավել խիստ պատիժ է նախատեսվում այն դեպքերում, երբ հանցանքը կատարվում է վտանգավոր ռեցիդիվիստի կողմից: Այսինքն՝ վտանգավոր ռեցիդիվիստի կողմից հանցանք կատարելը հատուկ մասի կոնկրետ հոդվածներում նախատեսվում է որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ (հոդված 29-ի 1-ին մաս)<sup>138</sup>: *Իսպանիայի* քրեական օրենսգրքում ռեցիդիվը դիտվում է որպես ծանրացնող հանգամանք, որի առկայության դեպքում դատարանը կարող է նշանակել պատժի առավելագույն չափը (հոդված 66-ի 5-րդ մաս): *Լիտվայի* քրեական օրենսգրքում սահմանվում են ռեցիդիվիստի և վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունները՝ ընդգծելով, որ դիտավորյալ հանցագործության համար ռեցիդիվիստի նկատմամբ, որպես կանոն, նշանակվում է ազատազրկում, իսկ վտանգավոր ռեցիդիվիստի նկատմամբ՝ ավելի խիստ պատիժ, քան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով միջին պատիժն է (հոդված 56-ի 1-ին և 2-րդ մասեր): Ինչ վերաբերում է *Լատվիայի*, *Սլովենիայի*, *Բոսնիա-Հերցեգովինայի*, *Ուկրաինայի*, *Ղազախստանի*, *Ուզբեկստանի* քրեական օրենսգրքերին, ապա դրանցով ռեցիդիվի դեպքում պատժի խստացումը թողնվում է դատարանի հայեցողությանը:

2) Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժի նվազագույն չափը խստացվում է: Մեր կողմից ուսումնասիրած պետություններից նման կարգ նախատեսված է Ռուսաստանի Դաշնության, Ռումինիայի, Սլովակիայի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքերով, որոնցով պատժի

<sup>138</sup> Տե՛ս Բուլղարիայի 1968 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով <http://lex.bg/laws/ldoc/1589654529>:

նվազագույն չափը խստացվում է՝ ամենախիստ պատժատեսակի առավելագույն չափից որոշակի հարաբերակցությամբ:

Հետաքրքրություն է ներկայացնում *Վրաստանի* քրեական օրենսգրքում առկա կարգավորումը: Մասնավորապես, սահմանվում է, որ որոշակի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքում պատիժը պետք է ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով գերազանցի պատժի նվազագույն չափը (հոդված 58-ի 1-ին մաս): *Ռումինիայի* քրեական օրենսգրքի համաձայն՝ եթե անձը նախորդ պատիժն ամբողջությամբ կրելուց հետո նոր հանցանք է կատարում, ապա նոր նշանակվող պատժի սկզբնական սահմանը կիսով չափ ավելանում է (հոդված 43-ի 5-րդ մաս): *Սլովակիայի* քրեական օրենսգրքով ռեցիդիվը դասվում է ծանրացնող հանգամանքների թվին, որի առկայության դեպքում ազատազրկման նվազագույն պատժաչափը 1/3-ով բարձրացվում է (հոդված 38-ի 4-րդ մաս):

3) Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նախատեսվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժի առավելագույն սահմանը գերազանցելու հնարավորություն: Նման կարգ նախատեսված է մեր կողմից ուսումնասիրված պետություններից *Լեհաստանի*, *Ֆրանսիայի*, *Ավստրիայի* քրեական օրենսգրքերով:

*Լեհաստանի* քրեական օրենսգրքում օգտագործվում է ոչ թե հանցագործությունների ռեցիդիվ, այլ «հանցագործությունների կրկնություն» բառակապակցությունը, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ, ըստ էության, խոսքը հատուկ ռեցիդիվի մասին է: Այսպես՝ նշվում է, որ այն անձը, ով դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար ազատազրկման, եթե պատժի ոչ պակաս, քան վեց ամիսը կրելուց հետո հինգ տարվա ընթացքում կատարում է դիտավորյալ հանցանք՝ նման այն հանցագործությանը, որի համար արդեն դատապարտվել է, ապա դատարանը կարող է նշանակել տվյալ հանցագործության սանկցիայով նախատեսված պատիժ՝ վերին սահմանի կիսով չափի ավելացմամբ (հոդված 64-ի 1-ին մաս): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն անձը, ով նախկինում դատապարտվել է նույն հոդվածի 1-ին պարագրաֆով նախատեսված պայմաններում և կրել է պատժի ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով ազատազրկումը և վերջին պատիժը լրիվ կամ

մասնակի կրելուց հետո հինգ տարվա ընթացքում կրկին կատարել է անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցանք, բռնաբարություն, ավազակություն կամ սեփականության դեմ ուղղված՝ բռնությամբ կամ դրա սպառնալիքով զուգորդված այլ հանցանք, ապա դատարանը նշանակում է ազատազրկում սանկցիայի ներքին սահմանից բարձր պատիժ և կարող է նշանակել սանկցիայի վերին սահմանի կիսով չափի ավելացմամբ պատիժ:

*Ֆրանսիայի* օրենսդրությամբ հանցագործության կամ զանցանքի համար դատապարտված անձը, որի համար օրենքով նախատեսված է ազատազրկում մինչև 10 տարի ժամկետով, կրկին կատարում է հանցանք, որի համար նախատեսվում է 20 կամ 30 տարի ժամկետով ազատազրկում, ապա նշանակվում է պատիժ՝ ցմահ ազատազրկում, իսկ եթե հանցագործությունը պատժվում է առավելագույնը 15 տարի ժամկետով ազատազրկմամբ, ապա պատիժը կրկնապատկվում է մինչև 30 տարի ժամկետով ազատազրկման (հոդված 132.8):

Այն անձը, ով արդեն դատապարտվել է մինչև 10 տարի ժամկետով ազատազրկմամբ պատժվող հանցագործության կամ զանցանքի համար, և նախորդ պատիժը կրելուց հետո 10 տարվա ընթացքում կատարել է զանցանք՝ պատժվող նույն ժամկետում, ապա ազատազրկման և տուգանքի առավելագույն չափերը պետք է կրկնապատկվեն:

Այն անձը, ով արդեն դատապարտվել է մինչև 10 տարի ժամկետով ազատազրկմամբ պատժվող հանցագործության կամ զանցանքի համար, և նախորդ պատիժը կրելուց հետո 5 տարվա ընթացքում կատարել է զանցանք՝ պատժվող մեկ տարուց ավել, բայց տասը տարուց պակաս ժամկետով ազատազրկման, ապա ազատազրկման և տուգանքի առավելագույն չափերը պետք է կրկնապատկվեն (հոդված 132.9):

Եթե անձը, ով արդեն դատապարտվել է զանցանքի համար, պատիժը կրելուց հետո 5 տարվա ընթացքում կատարում է նույն կամ միաբնույթ զանցանք, ապա ազատազրկման և տուգանքի առավելագույն չափերը պետք է կրկնապատկվեն (հոդված 132.10):

*Ավստրիայի* քրեական օրենսգրքով սահմանվում է, որ ռեցիդիվի դեպքում

նշանակվող պատիժը կարող է կիսով չափ գերազանցել ազատագրկման կամ տուգանքի ձևով պատժի առավելագույն չափը (§39-ի 1-ին մաս):

Այսպիսով, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի խստացումը կատարվում է տարբեր կերպ. այն կա՛մ դիտվում է որպես պատիժը ծանրացնող հանգամանք, սակայն պատիժ նշանակելու որևէ կարգ չի սահմանվում, կա՛մ էլ նախատեսվում են պատիժ նշանակելու հատուկ կանոններ՝ պատժի նվազագույն կամ առավելագույն չափի կամ միաժամանակ երկուսի պարտադիր խստացմամբ: Ընդ որում, պատժի նվազագույն չափի խստացումը տարբեր պետություններում տարբեր մեխանիզմով է իրականացվում. երբեմն պատժի նվազագույն սահմանը բարձրացվում է առավելագույն չափից որոշակի հարաբերակցությամբ, երբեմն էլ անմիջականորեն ավելացվում է նվազագույն պատժաչափը՝ կամ բացարձակ մեծությամբ (օրինակ՝ Վրաստանում բարձրացվում է ոչ պակաս, քան մեկ տարով), կամ որոշակի հարաբերակցությամբ (օրինակ՝ Սլովակիայում բարձրացվում է 1/3-ով):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է սահմանել ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որն առավելագույնս զերծ կլինի թերություններից և կապահովի նորմի նախատեսման նպատակներից բխող համակողմանի կարգավորում, ինչը, սակայն, չի իրացվում ՀՀ քրեական օրենսգրքում պատիժ նշանակելու գործող կարգի պայմաններում: Մասնավորապես, հոդված 67.1-ի 2-րդ մասում սահմանվում է, որ հասարակ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից:

Եթե առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կանոնը կիրառելու արդյունքում նվազագույն պատժաչափի խստացումը գրեթե միշտ ապահովվում է, ապա նույնը չի կարելի ասել հասարակ և վտանգավոր ռեցիդիվի պարագայում: Հասարակ ռեցիդիվի դեպքում բազմաթիվ են այն հոդվածները, որոնցում պատժի նվազագույն չափը ոչ միայն չի խստացվում, այլ նույնիսկ հոդվածի սանկցիայով նախատեսվածից մեղմ է ստացվում (օրինակ՝ հոդվածներ 104-ի 1-ին և 2-րդ մասեր, 112-ի 2-րդ մաս, 131-ի 2-րդ մաս, 132, 132.2, 133-ի 2-րդ և 3-րդ մասեր, 134-ի 2-րդ մաս, 138-

ի 1-ին և 3-րդ մասեր, 139-ի 1-ին և 3-րդ մասեր, 165-ի 4-րդ մաս, 167-ի 3-րդ մաս, 168-ի 2-րդ մաս, 175, 176-ի 2-րդ և 3-րդ մասեր, 177-ի 3-րդ մաս, 178-ի 3-րդ մաս, 179-ի 3-րդ մաս, 182-ի 3-րդ մաս, 217, 218, 238, 266-ի 2-րդ մաս, 299, 302, 303, 304, 305 և այլն): Նույն խնդիրն առաջանում է նաև վտանգավոր ռեցիդիվի պարագայում (օրինակ՝ հոդվածներ 131-ի 3-րդ մաս, 132-ի 3-րդ մաս, 132.2-ի 3-րդ մաս, 132.2, 217-ի 2-րդ և 3-րդ մասեր, 222-ի 1-ին մաս, 223-ի 1-ին և 3-րդ մասեր, 299, 303 և այլն):

Նման կարգավորումը չի բխում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի նախատեսման տրամաբանությունից, որի հիմնական նպատակը պատժի խստացման ապահովումն է: Ստացվում է, որ հասարակ և վտանգավոր ռեցիդիվի պարագայում շատ հաճախ պատժի խստացում ոչ միայն տեղի չի ունենում, այլև նշանակվող պատիժը երբեմն կարող է նվազագույնից էլ պակաս ստացվել: Կարծում ենք՝ իրականում դատարանը սանկցիայի նվազագույնից ցածր պատիժ չի նշանակի, սակայն այս խնդիրն պետք է օրենսդրական լուծում տրվի<sup>139</sup>: Ռեցիդիվը չի կարող մասնակիորեն գործել՝ միայն որոշակի դեպքերում ապահովելով խիստ պատժի նշանակում, ինչպես նաև չի կարող հակառակ ազդեցությունն ունենալ՝ ոչ թե խստացնելով, այլ, ընդհակառակը, մեղմացնելով պատիժը: Վերոնշյալը հակասում է ռեցիդիվի՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի էությանն ու նշանակությանը, ուստի անհրաժեշտ է նախատեսել նշված խնդիրը համակողմանիորեն լուծող կառուցակարգ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, առավել նպատակահարմար է ընտրել պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որը ներկայումս գործող՝ առավելագույն պատժաչափից որոշակի հարաբերակցությամբ պատիժը խստացնելու կարգավորման

---

<sup>139</sup>Նշված խնդիրն առաջանում է նաև ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 68-ով սահմանված հանցագործությունների ռեցիդիվի համար պատիժ նշանակելու կարգի դեպքում, որին փորձել են լուծում տալ նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորապես, եթե հատուկ կանոնի կիրառման արդյունքում պատժաչափը նվազագույնից մեղմ է ստացվում, ապա պատիժը պետք է նշանակվի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում: Վերոնշյալի կապակցությամբ ՌԴ Գերագույն դատարանի պլենումը՝ «ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N58 որոշմամբ ընդգծել է, որ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն չափից էլ պակաս լինել, նույնիսկ եթե ամենախիստ պատժի առավելագույն չափի մեկ երրորդը պակաս է ստացվում տվյալ հանցագործության համար նախատեսված պատժի նվազագույն չափից: Կարծում ենք, սակայն, նման կարգավորումը մասամբ է լուծում առկա խնդիրը, քանի որ պատժի պարտադիր խստացում ամեն դեպքում չի ապահովվում:

փոխարեն անմիջականորեն կբարձրացնի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժի նվազագույն ժամկետը: Նման կարգավորման առավելությունն այն է, որ ռեցիդիվի առկայությունը բոլոր դեպքերում կհանգեցնի նշանակվող պատժի խստացման<sup>140</sup>: Ընդ որում, մեր կողմից ուսումնասիրված մի շարք պետությունների քրեական օրենսդրություններով ընտրված է պատիժ նշանակելու հենց առաջարկվող մոդելը (օրինակ՝ Սլովակիա, Ռումինիա, Վրաստան, Լեհաստան):

Ինչ վերաբերում է կիրառման ենթակա պատժի նվազագույն ժամկետի բարձրացման կոնկրետ չափ սահմանելուն, ապա պետք է ընտրել այնպիսին, որը մի կողմից՝ չի լինի անարդարացի ու չափազանց խիստ, մյուս կողմից՝ կապահովի պատժի համաչափ ավելացում: Այս առումով, կարծում ենք, նվազագույն պատժաչափի մեկ երրորդով խստացումն ամենաօպտիմալ լուծումն է: Առաջարկվող կարգի կիրառման դեպքում հնարավոր է, սակայն, որ պատժի նվազագույն ժամկետի 1/3-ով ավելացումը երբեմն հանգեցնի առավելագույն ժամկետի գերազանցման, ուստի անհրաժեշտ է նաև օրենսդրորեն սահմանել, որ նման դեպքում նշանակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի կոնկրետ հոդվածով սահմանված պատժի առավելագույն ժամկետը<sup>141</sup>:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Նախագծով սահմանված հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգին, որով գործողի համեմատությամբ նախատեսվում է որակապես տարբերվող նոր կարգավորում: Մասնավորապես, Նախագծի հոդված 79-ի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ «2. Եթե դիտարկորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած,

<sup>140</sup> Անհրաժեշտ է նշել, որ, սույն աշխատանքի առաջին գլխում քննարկելով հանցագործությունների ռեցիդիվի հասկացության և տեսակների սահմանման հիմնահարցերը, պրակտիկայում առաջացող հիմնական խնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով արտասահմանյան առաջադեմ պետությունների օրենսդրական փորձը, առաջարկել ենք հրաժարվել հանցագործությունների ռեցիդիվը տեսակների դասակարգելուց: Ուստի, անհրաժեշտ է հանցանքը կատարելու ռեցիդիվը դիտել որպես ծանրացնող հանգամանք և նախատեսել պատիժ նշանակելու միասնական կարգ: Ինչ վերաբերում է կատարված հանցանքների բնույթին և վտանգավորության աստիճանին, ինչպես նաև նախկին դատվածությունների քանակին, ապա դատարանը դրանք պետք է գնահատման ենթարկի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս:

<sup>141</sup> Այդ խնդիրը, իհարկե, գործող օրենսդրությամբ նախատեսված սանկցիաների պարագայում առաջանալու է խիստ հազվադեպ, մեր կողմից իրականացված ուսումնասիրությամբ՝ միայն հոդված 132.2-ի 2-րդ և 3-րդ մասերի դեպքում:

դավաճություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, որի համար դատապարտվում է ազատազրկման, ապա նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով առավելագույն պատժի երկու երրորդից և կարող է գերազանցել տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավել, քան քսանհինգ տարին:

3. Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած, դավաճություն ունեցող անձը կատարել է մեկից ավելի հանցանքներ, ապա համակցության մեջ մտնող յուրաքանչյուր դիտավորյալ հանցանքի համար պատիժը որոշվում է սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված կանոններով: Այդ դեպքում հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի կարող գերազանցել քսանհինգ տարի ժամկետով ազատազրկումը»:

Մեջբերված նորմի վերլուծությունից երևում է, որ Նախագծում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում որպես պատժի խստացման տարբերակ ընտրվել է նվազագույն պատժաչափի բարձրացումը պատժի առավելագույն ժամկետից երկու երրորդ հարաբերակցությամբ: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, պատիժ նշանակելու այդ մեխանիզմը մի շարք դեպքերում պատժի խստացում չի ապահովում: Ավելին, այդ խնդիրն առաջանում է նաև Նախագծի հատուկ մասի մի շարք հոդվածների սանկցիաների պարագայում (օրինակ՝ հոդվածներ 153-ի 2-րդ մաս, 182-ի 3-րդ մաս, 183-ի 3-րդ մաս, 233-ի 2-րդ մաս, 235-ի 3-րդ մաս, 237-ի 3-րդ մաս, 284-ի 3-րդ մաս, 289-ի 3-րդ մաս, 291-ի 1-ին մաս, 295-ի 3-րդ մաս և այլն), որոնցում քննարկվող կանոնի կիրառման արդյունքում պատիժը կա՛մ նվազագույնից ցածր է ստացվում, կա՛մ չի խստացվում: Ընդ որում, նորմը որևէ նշում չի պարունակում. եթե պատիժը նվազագույնից ցածր է ստացվում, արդյո՞ք դատարանը կարող է այն նշանակել, թե պետք է գործի հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Վերոնշյալը ևս վկայում է, որ հարցի լուծման լավագույն տարբերակը պատժի նվազագույն ժամկետի անմիջական բարձրացումն է: Մեկ օրինակ ներկայացնենք

Նախագծով սահմանված գողության հանցակազմի առնչությամբ: Այսպես՝ գողության հանցակազմի 3-րդ մասի սանկցիան պատիժ է նախատեսում ազատազրկում՝ *չորսից վեց* տարի ժամկետով (հոդված 235-ի 3-րդ մաս): Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ Նախագծով սահմանված կանոնի կիրառման արդյունքում (նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով առավելագույն պատժի երկու երրորդից) նվազագույն պատժաչափը չի խստացվում ( $6 \cdot 2/3 = 4$ ): Մինչդեռ մեր կողմից առաջարկված տարբերակի պարագայում (պատժի նվազագույն չափի մեկ երրորդով ավելացում) խստացումը բոլոր դեպքերում ապահովվում է ( $4 \cdot 1/3 = 1,3$ ;  $4 + 1,3 = 5,3$ , հետևաբար, նշանակվող պատիժը ստացվում է՝ 5 տարի 3 ամսից մինչև 6 տարի ժամկետով ազատազրկում):

Ինչ վերաբերում է Նախագծով պատժի առավելագույն ժամկետը գերազանցելու հնարավորություն նախատեսելուն, ապա, կարծում ենք, այն արդարացված է՝ պայմանավորված հատկապես ռեցիդիվի տեսակներից հրաժարվելու հանգամանքով: Ռեցիդիվը տեսակների դասակարգելու հիմնական քրեաիրավական նշանակությունը կայանում է նշանակվող պատժի անմիջական խստացման մեջ, հետևաբար դրանցից հրաժարվելու պայմաններում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորում, որը կապահովի համաչափ պատժի նշանակում բազմակի դատվածությունն ունեցող, առավել ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ: Բացի այդ, քրեական օրենսգրքում հանցագործությունների կրկնակիության ինստիտուտը վերացվելուց հետո բաց է մնացել պրոֆեսիոնալ հանցագործների դեմ պայքարի հարցը<sup>142</sup>: Այսպես՝ դատվածության հետ կապված կրկնակիության վերացմամբ, որն իրենից, ըստ էության, հատուկ ռեցիդիվ էր ներկայացնում, պրոֆեսիոնալ հանցագործների և ռեցիդիվիստների նկատմամբ պատժողական քաղաքականությունն էականորեն թուլացել է: Հետևաբար ռեցիդիվի դեպքում պատժի խստացման հարցը դարձել է անհրաժեշտություն, ինչը չի կարող ապահովվել միայն պատժի նվազագույն սահմանի ավելացմամբ. անհրաժեշտ է նախատեսել նաև առավելագույն չափը խստացնելու կարգ: Նախագծով սահմանված պատժի առավելագույն սահմանը մեկ երրորդ չափով

<sup>142</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, Երևան, 2014 թվական:



գերազանցելու հնարավորությունը թույլ կտա ապահովելու նշանակվող պատժի անհրաժեշտ խստացումը: Ընդ որում, ռեցիդիվի դեպքում պատժի առավելագույն չափը գերազանցելու հնարավորություն նախատեսված է նաև մեր կողմից ուսումնասիրված եվրոպական մի շարք երկրների քրեական օրենսդրություններով (օրինակ՝ Ավստրիա, Ֆրանսիա, Լեհաստան):

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը գերազանցելը էականորեն խստացնելու է անձի նկատմամբ նշանակվող պատիժը, հետևաբար նվազ վտանգավորության հանցավոր արարքներ կատարելու պարագայում պատժի առավելագույն չափը գերազանցելու հնարավորություն նախատեսելն անթույլատրելի է, քանի որ դրա արդյունքում անձի վիճակը անհամաչափորեն ծանրանալու է: Ուստի նման իրավիճակները բացառելու համար անհրաժեշտ է պատժի առավելագույն սահմանը խստացնելու դեպքերը օրենսդրորեն հստակ կանոնակարգել: Մեր կարծիքով միակ տեսանելի չափանիշը, որը կարող է դրվել վերոնշյալի հիմքում, նախկին և նոր կատարված հանցանքների բնույթն ու վտանգավորության աստիճանն է: Մասնավորապես պատժի նվազագույն ժամկետը խստացնելու հետ մեկտեղ դատարանը կարող է գերազանցել նաև սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը, եթե հանցավորը դատվածություն ունի նախկինում կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար և կատարում է ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Մինչդեռ եթե անձը դատվածություն ունի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար և կատարում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կամ հակառակը, եթե դատվածություն ունի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար և դարձյալ կատարում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցավոր արարք, ապա հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն չափը չի կարող գերազանցվել:

Ինչ վերաբերում է նշված դեպքերում պատժի առավելագույն սահմանը խստացնելու դատարանի լիազորությանը, ապա այն մեր համոզմամբ չպետք է հայեցողական լինի, քանի որ կարող է կամայականությունների և նորմի ոչ միատեսակ կիրառության հանգեցնել: Հետևաբար եթե համապատասխան պայմաններն առկա են

(այն է՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար չմարված կամ չհանված դատվածության պայմաններում նոր ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է կատարվում), ապա դատարանը ոչ թե կարող է, այլ պետք է սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը խստացնի:

Միաժամանակ անհրաժեշտ է սահմանել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը խստացնելու դեպքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել 25 տարին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձնապես ծանր մի շարք հանցագործությունների պարագայում որպես ազատազրկման առավելագույն ժամկետ նախատեսված է քսան տարին, հետևաբար դրանց ռեցիդիվի դեպքում նույնպես անհրաժեշտ է պատժի խստացում ապահովել:

Կարծում ենք՝ հանցագործությունների ռեցիդիվի՝ վերևում նշված առավել վտանգավոր դրսևորումների դեպքում նշանակվող պատիժն էականորեն խստացնող կարգավորում նախատեսելը ճիշտ է, քանի որ վկայում է հանցավորի՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու հակվածության, հանցավոր վարքագծի կայունության, հետևաբար նաև՝ հասարակության համար մեծ վտանգավորություն ներկայացնելու մասին:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք կատարելու պարագայում տվյալ հանցագործության համար նվազագույն պատժաչափ պետք է դիտվի այն ժամկետը, որը ստացվում է հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման նվազագույն չափը մեկ երրորդով բարձրացնելու արդյունքում, իսկ որպես առավելագույն պատժաչափ՝ այն ժամկետը, որը գերազանցում է հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավել, քան քսանհինգ տարին:

Ողջունելի է նաև Նախագծում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող նորմում դատվածություն ունեցող անձի կողմից

մեկից ավելի նոր հանցանք կատարելու դեպքում հանցագործությունների համակցության կանոնով պատիժ նշանակելու կարգի հստակ սահմանումը: Մասնավորապես Նախագծի հոդված 79-ի 3-րդ մասում նշվում է, որ նման դեպքերում համակցության մեջ մտնող յուրաքանչյուր դիտավորյալ հանցանքի համար պատիժը որոշվում է նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ռեցիդիվի կանոններով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մեր կողմից առաջարկվել է հանցագործությունների ռեցիդիվի առկայության որոշ դեպքերում նախատեսել պատժի առավելագույն սահմանը գերազանցելու հնարավորություն, բայց ոչ ավել, քան 25 տարի ժամկետով ազատազրկումը, ապա ռեցիդիվի և հանցագործությունների համակցության կանոնների միաժամանակյա կիրառման հիմքերի առկայության դեպքում անհրաժեշտ է որպես առավելագույն չափ սահմանել 30 տարի ժամկետով ազատազրկումը: Վերոնշյալը, կարծում ենք, արդարացված է, քանի որ տվյալ դեպքում կիրառվում են արդեն հանցագործությունների համակցության կանոնները՝ զուգակցված ռեցիդիվի հետ, այսինքն՝ պատիժ է նշանակվում ոչ թե մեկ, այլ մեկից ավելի հանցավոր արարքների համար՝ դատվածության առկայության պայմաններում:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել նաև Նախագծի հոդված 79-ի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հետևյալ դրույթին՝ «*եթե* դիտավորյալ հանցագործության համար նախկինում *որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած*, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, *որի համար դատապարտվում է ազատազրկման*, ապա (...)»։ Այսինքն՝ ռեցիդիվի կանոնը կիրառվում է հետևյալ դեպքերում՝ նախկին պատիժը, որը կրելուց հետո անձը դեռ դատվածություն ունի, եղել է ազատազրկում և *եթե նոր հանցագործության համար դարձյալ դատապարտվում է ազատազրկման*:

Նշված դրույթից հետևում է, որ նոր հանցագործության համար ազատազրկման դատապարտելու, հետևաբար նաև՝ հանցագործությունների ռեցիդիվի կանոնը կիրառելու հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, այսինքն՝ նույնիսկ եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվ, և անձը նախկինում ազատազրկման ձևով պատիժ է կրել, այնուամենայնիվ դատարանը կարող է ընտրել ոչ թե ազատազրկում, այլ ուրիշ պատժատեսակ, որի պարագայում պատիժ նշանակելու կանոնը չի կիրառվի:

Կարծում ենք՝ դատարանին օրենսդրորեն այդքան լայն հայեցողություն տրամադրելը այնքան էլ ճիշտ չէ և նորմի կիրառության առումով կարող է հանգեցնել կամայականությունների՝ անարդարացիորեն առաջ բերելով ռեցիդիվի կանոնի չկիրառման: Ինչպես արդեն նշվել է, ռեցիդիվը ներկայումս բազմակիության միակ տեսակն է, որն ուղղված է պրոֆեսիոնալ և կրկնահանցագործների դեմ պայքարին, ուստի պետք է ապահովել հավասարակշռված պատժողական քաղաքականություն՝ մի կողմից զերծ մնալով չափազանց խիստ պատիժներից, մյուս կողմից՝ առավել վտանգավոր դեպքերում՝ համաչափորեն խստացնել այն: Հետևաբար, եթե անձի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ, և վերջինս նախորդ հանցագործության համար ազատազրկման ձևով պատիժ է կրել, իսկ նոր կատարված հանցանքի սանկցիան պարունակում է ազատազրկում պատժատեսակը, ապա դատարանը ոչ թե կարող է, այլ պարտավոր է այն ընտրել և պատիժ նշանակել ռեցիդիվի կանոններով:

Այսպիսով, հաշվի առնելով կատարված առաջարկությունները՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը առաջարկում ենք ձևակերպել հետևյալ կերպ՝

**«Հոդված 67.1. Պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում**

1. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և վրանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը և վրանգավորության աստիճանը:

2. Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, ապա դատապարտվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի, որի դեպքում նշանակվող պատիժը պետք է մեկ երրորդով ավել լինի ազատազրկման նվազագույն չափից:

Եթե սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով

նախատեսված ազատագրկման ձևով պատժի նվազագույն չափի մեկ երրորդով ավելացումը գերազանցում է սանկցիայով նախատեսված ազատագրկում պատժատեսակի առավելագույն ժամկետը, ապա նշանակվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատագրկում պատժատեսակի առավելագույն չափը:

Եթե սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով ազատագրկում պատժատեսակը նախատեսված չէ, ապա հանցագործությունների ռեցիդիվը սույն օրենսգրքի հոդված 63-ի 1-ին մասի 1-ին կետի կարգով պետք է հաշվի առնվի որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

3. Եթե ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատագրկման կամ ցմահ ազատագրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք, ապա ազատագրկման նվազագույն ժամկետը որոշվում է սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված կարգով, իսկ առավելագույն ժամկետ է համարվում այն չափը, որը գերազանցում է տվյալ հանցագործության համար հոդվածի սանկցիայով նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավելի, քան քսանհինգ տարին:

4. Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատագրկման կամ ցմահ ազատագրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է մեկից ավելի դիտավորյալ հանցանքներ, ապա համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար պատիժը որոշվում է սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված կանոններով: Այդ դեպքում հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի կարող գերազանցել երեսուն տարի ժամկետով ազատագրկումը:

5. (...)»:

## **§2. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի հարաբերակցությունը պատիժ նշանակելու այլ կանոնների հետ**

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ քրեական օրենսգիրքը, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից բացի, նախատեսում է հատուկ կանոններ, որոնք պատիժ նշանակելու գործընթացում առաջացող որոշակի հարաբերությունների առավել մանրամասն կարգավորումներ են պարունակում: Մասնավորապես, հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու նորմի հետ մեկտեղ քրեական օրենսգրքում նախատեսվում են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու, չավարտված հանցագործությունների, հանցանքների և դատավճիռների համակցության դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնները: Պատիժ նշանակելու մեկ կանոն էլ նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ, այն է՝ դատաքննության արագացված կարգ կիրառելու դեպքում:

Հաճախ կոնկրետ գործով անհրաժեշտ է լինում պատիժ նշանակելիս գործադրել մեկից ավելի հատուկ կանոններ, սակայն գործող քրեական օրենսգիրքը դրանց հարաբերակցության հետ կապված որևէ ընդհանուր կարգավորում չի նախատեսում, ինչը պրակտիկայում բազմաթիվ դժվարություններ է առաջացնում հանգեցնելով նորմերի ոչ միատեսակ կիրառության: Մասնավորապես հարց է առաջանում՝ արդյո՞ք դատարանը կարող է միաժամանակ կիրառել բոլոր կանոնները, եթե այո, ապա ինչպիսի՞ հաջորդականությամբ, թե՞ մեկից ավելի կանոնների գործադրման հիմքերի առկայության դեպքում քրեաիրավական նորմերի մրցակցության ընդհանուր կանոններով պետք է ընտրվի դրանցից միայն մեկը: Նկատենք, որ երկու դեպքում էլ մի շարք խնդիրներ են առաջանում: Այսպես՝ պատիժ նշանակելու մեկից ավելի կանոնների միաժամանակյա գործադրման դեպքում հիմնականում գործ ենք ունենում բացարձակ որոշակի սանկցիաների հետ, որոնց դեպքում դժվարանում է ապահովել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառությունը, պատասխանատվության և պատժի անհատականացումը: Միևնույն ժամանակ դրանցից մեկին առավելություն տալը հանգեցնում է մյուս կանոնի արժեզրկման, ինչն անհամատեղելի է քրեական օրենսդրությունում դրա նախատեսման նպատակներին:

Մեր համոզմամբ հարցի լավագույն լուծումը պատիժ նշանակելու հատուկ կանոնների հարաբերակցության հստակ օրենսդրական կանոնակարգումն է: Մասնավորապես օրենսդիրը, հաշվի առնելով պետության պատժողական քաղաքականության գերակա նպատակները և այդ ոլորտում առկա հիմնական խնդիրները, պետք է նախատեսի պատիժ նշանակելու հատուկ կանոնների հարաբերակցության հստակ կարգ՝ որոշ դեպքերում առավելությունը տալով դրանցից մեկին, որոշ դեպքերում էլ չբացառելով նորմերի միաժամանակյա կիրառության հնարավորությունը՝ հստակ սահմանելով դրանց հաջորդականությունը:

Գործող քրեական օրենսգրքով կարգավորվել է միայն հանցագործությունների ռեցիդիվի և չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցության հարցը՝ նախապատվությունը տալով ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ նորմին: Նման օրենսդրական լուծումը ողջունելի է, քանի որ բացառում է այն հնարավոր հակասությունը, որը կարող էր առաջանալ երկու կանոնների կիրառման արդյունքում<sup>143</sup>: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 65-ի 4.1-ին մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վրանգավոր և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս»*: Հոդված 65-ի 2-րդ և 3-րդ մասերում խոսք է գնում հանցագործությունների նախապատրաստության և հանցափորձի դեպքում պատիժ նշանակելու կարգի մասին, որոնց համաձայն՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը, իսկ հանցափորձի համար՝ որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Հետևաբար եթե պատիժ է նշանակվում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում, ապա չավարտված

<sup>143</sup> Տեսության մեջ երկու նորմերի հարաբերակցությունը սահմանող կանոնն անվանվում է կոլիզիոն կանոն կամ կոլիզիոն նորմ, որը, առավելությունը տալով պատիժ նշանակելու կանոններից որևէ մեկին, կոչված է բացառելու դրանց միաժամանակյա կիրառման դեպքում հանրավոր հակասության առաջացումը կամ համատեղ կիրառության դեպքում սահմանում է դրանց գործադրման կարգն ու հաջորդականությունը:

հանցագործությունների՝ անձի համար առավել բարենպաստ կանոնները չեն գործում:

Սակայն պրակտիկայում վերոնշյալ օրենսդրական պահանջը միշտ չէ, որ պահպանվում է: Այսպես՝ թիվ ԿԴՅ/0006/01/12 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ամբաստանյալ Ս. Թադևոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել՝ ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասի՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնով: Մինչդեռ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանել է ստորադաս դատարանի դատավճիռը՝ պատճառաբանելով, որ ամբաստանյալի նկատմամբ պետք էր պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 67.1-ի և 65-ի 3-րդ մասի կանոններով, որի պայմաններում նշանակված պատժի ժամկետը չէր կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 34-268-ի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը՝ 2 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկումը, ուստի առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը չի համապատասխանում մատնանշված հոդվածների պահանջներին<sup>144</sup>:

Վերոնշյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իրավացիորեն արձանագրել է՝ «(...) [*Հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը բացառում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների կիրառմամբ պատիժ նշանակելը: Հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում պատիժը նշանակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով՝ անկախ նրանից, թե հանցագործությունը, որի կատարման մեջ անձը մեղավոր է ճանաչվել, ավարտված է, թե ոչ: Այլ խոսքով՝ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չեն կիրառվում, եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվի որևէ տեսակ*»<sup>145</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված

<sup>144</sup> Տե՛ս թիվ ԿԴՅ/0006/01/12 քրեական գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 9-ի որոշումը:

<sup>145</sup> Տե՛ս Սահակ Թադևոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ԿԴՅ/0006/01/12 գործով որոշումը:



65-ի 4.1-ին մասով նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի կիրառման սահմանափակում նախատեսելու նպատակն այնքան էլ պարզ չէ. մասնավորապես, այն պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսված կանոնի հետ հնարավոր հակասությունը բացառելու անհրաժեշտությամբ, թե՛ օրենսդիրը, հաշվի առնելով ռեցիդիվային հանցավորության բարձր վտանգավորությունը, բացառում է դրա առկայության դեպքում չավարտված հանցագործությունների դեպքում անձի համար բարենպաստ կանոնի կիրառությունը: Նշված հարցի պարզաբանումը սկզբունքային է, քանի որ եթե պատճառն առաջինն է, ապա բոլոր այն դեպքերում, երբ ռեցիդիվն առկա է, սակայն պատիժ նշանակելու հոդված 67.1-ի 2-րդ մասի կանոնը կոնկրետ դեպքում չի կիրառվում, ապա պատիժը կարող է նշանակվել հոդված 65-ի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով՝ առանց նույն հոդվածի 4.1-ին մասով նախատեսված սահմանափակման<sup>146</sup>: Երկրորդ դեպքում, սակայն, ռեցիդիվի առկայությունն ինքնին, անկախ պատիժ նշանակելու հատուկ կանոնը գործադրելու փաստից, բացառում է չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառումը:

Մեր կարծիքով հոդված 65-ի 4.1-ին մասում խոսքը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման մասին է, և նպատակը երկու կանոնների միաժամանակյա կիրառումը ու հնարավոր հակասության առաջացումը բացառելն է, ուստի ճիշտ կլիներ քննարկվող կոլիզիոն նորմը ձևակերպել հետևյալ կերպ. *«Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վրանգավոր և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի դեպքում [ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով սահմանված կարգով] պատիժ նշանակելիս»:*

ՀՀ քրեական օրենսգրքում կարգավորված չէ նաև հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի հարաբերակցությունը հոդվածներ 66-ի (պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ) և 67-ի (պատիժ նշանակելը դատավճիռների համակցությամբ) հետ, թեպետ դրանց դեպքում հիմնականում

<sup>146</sup> Իհարկե գործող օրենսդրությամբ ռեցիդիվի առկայությունը գրեթե միշտ հանգեցնում է հոդված 67.1-ով նախատեսված կանոնով պատիժ նշանակելուն, սակայն հազվադեպ դեպքերում այն կարող է նաև չկիրառվել, օրինակ՝ երբ, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման, դատաքննությունն անցկացվում է արագացված կարգով:

խնդիրներ չեն առաջանում: Մասնավորապես հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելիս, եթե անձը դատվածություն ունի նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար, համակցության մեջ մտնող յուրաքանչյուր արարքի համար պատիժը որոշվում է հանցագործությունների ռեցիդիվի կանոններով, ապա ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 66-ի 1-ին մասով սահմանված կարգով՝ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով, նշանակվում է վերջնական պատիժ: Այլ կերպ ասած՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում ռեցիդիվի և համակցության կանոնները գործում են միմյանց հետ զուգակցված, ընդ որում, նշանակված առանձին պատիժները գումարելիս հոդված 66-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված ազատազրկման առավելագույն չափերը պետք է պահպանվեն (համապատասխանաբար՝ 5, 10 և 25 տարին)<sup>147</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում հոդված 66-ի 6-րդ մասով նախատեսված դեպքում (*«Պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը»*) հանցագործությունների ռեցիդիվի առկայության հարցը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի համաձայն՝ ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի *նախկինում* դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 66-ի 6-րդ մասի կարգով պատիժ է նշանակվում այն դեպքում, երբ անձը սկզբնական հանցագործության համար դեռևս չի դատապարտվել, ինչը պարզվում է երկրորդ արարքի համար դատապարտվելուց հետո միայն, ուստի ռեցիդիվը բացակայում է: Նշված հարցին անդրադարձել է ՌԴ Գերագույն դատարանի պլենումը *«ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին»*

<sup>147</sup> Սույն գլխի առաջին պարագրաֆում մեր կողմից առաջարկվել է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու նորմում կարգավորել նաև հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու հարցերը: Ընդ որում, ռեցիդիվի և համակցության կանոնների միաժամանակյա կիրառության դեպքում որպես առավելագույն սահման, որը չի կարող գերազանցվել պատիժները գումարելիս, առաջարկվել է սահմանել 30 տարի ժամկետով ազատազրկումը, այսինքն՝ տվյալ պարագայում հոդված 66-ի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված ժամկետային սահմանափակումները չեն գործելու:

որոշմամբ: Մասնավորապես որոշման 44-րդ կետում Գերագույն դատարանն ընդգծել է, որ ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 69-ի 5-րդ մասի կանոններով պատիժ նշանակելու դեպքում հանցագործությունների ռեցիդիվը բացակայում է: Ռեցիդիվը բացակայում է նաև այն դեպքում, երբ թեև նոր հանցանքը կատարվել է նախորդ արարքի համար դատավճիռը կայացվելուց հետո, սակայն մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը<sup>148</sup>:

Ինչ վերաբերում է դատավճիռների համակցության և հանցագործությունների ռեցիդիվի հարաբերակցությանը, ապա դրանց համակցված կիրառումը հնարավոր է դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատիժը լրիվ կրելը անձի կողմից նոր հանցավոր արարք կատարելու դեպքում: Դատավճիռների համակցության պարագայում դատարանը վերջին արարքի համար պատիժ է նշանակում հանցագործությունների ռեցիդիվի կանոններով, այնուհետև նոր դատավճռով նշանակված պատժին լրիվ կամ մասնակիորեն գումարում է նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասը:

Դատավճիռների համակցության և հանցագործությունների ռեցիդիվի կանոնների կիրառման հարցում պրակտիկայում հաճախ թույլ են տրվում դատական սխալներ: Մասնավորապես, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 4-ին կայացված դատական ակտով արձանագրվել է հետևյալը՝ «(...) Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ 2015 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռով ամբաստանյալը դիտավորյալ հանցագործության համար պայմանականորեն դատապարտվել է երկու տարի ժամկետով ազատազրկման և սահմանվել է երկու տարի ժամկետով փորձաշրջան, սույն գործով հաստատված արարքը կատարել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին՝ մինչև փորձաշրջանի ավարտը, այսինքն, առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 67 հոդվածի կիրառման հիմք (...): Ընդ որում, ամբաստանյալի արարքում թեև առկա է հանցագործությունների ռեցիդիվ, սակայն այն որպես պատասխանատվությունն ու

<sup>148</sup> Տե՛ս ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N58 (29.11.2016 թվականի խմբագրությամբ) «ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» որոշումը [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_190932/36245df60f7688e59149f564045c228dfa9e8587/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_190932/36245df60f7688e59149f564045c228dfa9e8587/) /:

պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի չի առնվում, քանզի դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս դա կոդիվի միևնույն հանգամանքի կրկնակի մեղսագրում ու կհակասի ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ կետի պահանջին»<sup>149</sup>:

Ակնհայտ է, որ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 67-ի և 67.1-ի սխալ կիրառում: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 1-ին մասի համաձայն՝ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Հետևաբար, եթե անձը դատարանի դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո կատարում է նոր հանցավոր արարք, ապա դա, ըստ գործող քրեական օրենսգրքի կարգավորումների, հիմք է միաժամանակ հանցագործությունների ռեցիդիվի և դատավճիռների համակցության կանոններով պատիժ նշանակելու համար: Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությունը, որ ռեցիդիվը որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի չի առնվում, քանի որ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս դա կոդիվի միևնույն հանգամանքի կրկնակի մեղսագրում, օրենքի սխալ մեկնաբանության արդյունք է: Բացի այդ՝ դատարանը չի մանրամասնել, թե ինչ միևնույն հանգամանքի կրկնակի մեղսագրման մասին է խոսքը:

Առավել վիճահարույց է և պատիժ նշանակելիս բազմաթիվ խնդիրներ է առաջացնում հանցագործությունների ռեցիդիվի և դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 375.3-ի 6-րդ մաս) պատիժ նշանակելու հատուկ կանոնների հարաբերակցության հարցը: Մասնավորապես, տվյալ դեպքում գործ ունենք պատիժ նշանակելու երկու այնպիսի կանոնների հետ, որոնցից մեկի կիրառումը անձի համար առաջ է բերում վատթարացնող, իսկ մյուսինը՝ բարելավող հետևանքներ, ընդ որում թե՛ քրեական, թե՛ քրեադատավարական օրենսդրությամբ դրանց հարաբերակցության կարգի վերաբերյալ որևէ նորմ նախատեսված չէ: Սակայն նախքան նշված խնդրի լուծմանն անդրադառնալը քննարկենք պատիժ նշանակելու մեկից ավելի հատուկ կանոնների

<sup>149</sup> Տե՛ս թիվ ՏԴ1/0079/01/16 գործով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 4-ի դատավճիռը:

կիրառության վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ առկա հիմնական մոտեցումները՝

- փուլային կամ հաջորդական կիրառում. քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափի նկատմամբ սկզբում կիրառվում է կանոններից մեկը, այնուհետև դրա արդյունքում ստացված պատժաչափի նկատմամբ կիրառվում է հաջորդ կանոնը<sup>150</sup>: Եթե միաժամանակ պետք է գործադրվեն պատիժը պարտադիր խստացնող և պարտադիր մեղմացնող կանոնները, ապա սկզբում անհրաժեշտ է կիրառել պատժի առավելագույն չափի նվազում նախատեսող նորմը (բարելավող նորմ), այնուհետև արդեն ստացված պատժաչափի նկատմամբ կիրառել պարտադիր խստացման կանոնը: Ինչ վերաբերում է անձի վիճակը բարելավող երկու կամ ավելի կանոնների միաժամանակյա առկայությանը, ապա տվյալ դեպքում կարևորը ոչ թե դրանց կիրառման հաջորդականությունն է, այլ այն, որ յուրաքանչյուր հաջորդը գործադրվի նախորդի կիրառմամբ ստացված պատժաչափի նկատմամբ<sup>151</sup>:

Պատիժ նշանակելու հատուկ կանոնների փուլային կամ հաջորդական կիրառման հնարավորությունը արձանագրել է ՌԴ Գերագույն դատարանը՝ անդրադառնալով չավարտված հանցագործությունների և ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հարցերին: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում քրեական օրենսգրքի հոդված 68-ի կանոնով պատիժ նշանակելիս որպես պատժի առավելագույն չափ պետք է հիմք ընդունել այն, ինչը ստացվում է հոդված 66-ով (չավարտված հանցագործությունների դեպքում) սահմանված կարգով պատիժ նշանակելիս<sup>152</sup>: Ենթադրվում է, որ սկզբում չավարտված հանցագործության կանոնը կիրառելու վերաբերյալ դիրքորոշումը պայմանավորված է ՌԴ քրեական օրենսգրքի հոդվածներ 66-ում և 68-ում առկա ձևակերպումների տարբերություններով:

<sup>150</sup> Տե՛ս **Малков В. П., Тосакова Л. С.** Назначение наказания при рецидиве преступлений // Российская Юстиция, N9, 1997, էջ 36-37:

<sup>151</sup> Տե՛ս **Севастьянов А.П.** Совместное применение специальных правил назначения наказания, установленных статьями 62, 63.1, 65, 66, 68 УК РФ // Пробелы в российском законодательстве, 3/2012, էջ 150-154:

<sup>152</sup> Տե՛ս ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ 2007 թվականի հունվարի 11-ի N2 «ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» որոշման 15-րդ կետը <https://rg.ru/2007/01/24/nakazaniya-dok.html>:

Մասնավորապես, հոդված 66-ի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ նախապատրաստության կամ հանցափորձի դեպքում նշանակվող պատժի ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել *օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված* առավել խիստ պատժի առավելագույն չափի կամ ժամկետի կեսը կամ երեք քարորդը, այսինքն՝ չավարտված հանցագործությունների դեպքում օրենքը դատարանին պարտավորեցնում է պատիժ նշանակելիս որպես հիմք ընդունել միայն հատուկ մասի հոդվածով նախատեսված սանկցիան: Մինչդեռ հոդված 68-ի 2-րդ մասի համաձայն՝ ռեցիդիվի ցանկացած տեսակի դեպքում պատժի ժամկետը չի կարող պակաս լինել *կատարված հանցագործության համար նախատեսված* առավել խիստ պատժի առավելագույն չափի մեկ երրորդից: Այլ կերպ հանցագործության համար նախատեսված պատիժ ասելով հասկանում ենք ոչ միայն քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիայով նախատեսված պատիժը, այլև այն, ինչը ստացվում է ընդհանուր մասի դրույթների կիրառման արդյունքում: Հետևաբար չավարտված հանցագործությունների և ռեցիդիվի միաժամանակյա առկայության պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի համար օրենքով նախատեսված պատիժ է համարվում չավարտված հանցագործությունների կանոնի կիրառման արդյունքում ստացվող պատիժը:

- Պատիժ նշանակելու նորմերի ինքնուրույն կիրառում. այսինքն՝ կանոնները կիրառվում են ոչ թե հաջորդաբար՝ մեկ կանոնի կիրառման արդյունքում ստացվող պատժի նկատմամբ, այլ միանգամայն ինքնուրույն՝ յուրաքանչյուր դեպքում հիմք ընդունելով քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը<sup>153</sup>:

- Պատիժ նշանակելու միայն մեկ կանոնի կիրառում. մեկից ավելի կանոնների առկայության դեպքում նշված նորմերը միմյանց հետ գտնվում են *մրցակցության* մեջ, հետևաբար դրանց միաժամանակյա գործադրումը բացառվում է, և պետք է կիրառվի դրանցից միայն մեկը, ընդ որում, այն կանոնը, որն անձի վիճակն առավել բարելավում

<sup>153</sup> Տե՛ս **Степанов В. М.** Общие начала и специальные правила назначения наказания // Вестн. Омского университета, Омск, 2005, N 1, էջ 88-94:

է<sup>154</sup>: Այսպես՝ Լ. Վ. Ինոգամովա-Հեգայը տարանջատում է քրեաիրավական նորմերի մրցակցության չորս տեսակ՝ նորմերի մրցակցություն հանցագործությունները որակելիս, պատիժ նշանակելիս, պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս: Ըստ հեղինակի՝ մեկից ավել հատուկ կանոնների կիրառման հիմքերի առկայության դեպքում գործ ունենք պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերի մրցակցության հետ, որի հաղթահարման լավագույն տարբերակը օրենսդրական ճանապարհով հարցի լուծումն է՝ կոլիզիոն կանոններ նախատեսելու միջոցով: Սակայն եթե պատիժ նշանակելու համապատասխան նորմերում որևէ կարգավորում նախատեսված չէ, ապա մրցակցությունը պետք է լուծվի ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ՝ քրեաիրավական, սահմանադրաիրավական և այլն (օրինակ՝ մեղմացնող երկու նորմերից առավելություն ունի առավել մեղմացնող նորմը, իսկ անձի վիճակը բարելավող և վատթարացնող կանոններից պետք է կիրառվի բարելավողը և այլն): Անդրադառնալով ՌԴ Գերագույն դատարանի պլենումի՝ «Դատարանի կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» 1999 թվականի հունիսի 11-ի որոշմամբ պատիժ նշանակելու կանոնները հաջորդաբար կիրառելու վերաբերյալ արտահայտված դիրքորոշմանը՝ Լ. Վ. Ինոգամովա-Հեգայն այն քննադատության է ենթարկել՝ նշված կարգի հիմնական թերությունը համարելով բացարձակ որոշակի սանկցիաներ ստանալը<sup>155</sup>:

Հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցությանն անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) *Ալեք Պողոսյանի* վերաբերյալ նախադեպային որոշման շրջանակներում: Կարծում ենք՝ բարձրագույն դատական ատյանի կողմից առաջարկվող լուծումը վիճելի է, ուստի պատահական չէ, որ նշված հարցի վերաբերյալ առկա են Վճռաբեկ դատարանի երկու դատավորների՝ որոշման հետ չհամընկնող հատուկ կարծիքները: Քննարկվող որոշմամբ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով պատիժ նշանակելու հատուկ կանոնների հարաբերակցության վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ ձևավորված հիմնական

<sup>154</sup> Տե՛ս **Гарманов В. М.** Конкуренция уголовно-правовых норм при назначении наказания, автореферат дисс. канд. юрид. наук, Тюмень, 2002, <http://law.edu.ru/book/book.asp?bookID=128820>:

<sup>155</sup> Տե՛ս **Иногамова Хегай Л. В.** Конкуренция норм уголовного права, Москва, 1999, էջ 186-214:

մոտեցումները, որդեգրեց դրանց ոչ թե հաջորդական կամ փուլային կիրառման մեխանիզմը, այլ արձանագրեց, որ նշված նորմերը մրցակցում են միմյանց հետ, հետևաբար պետք է կիրառվի միայն դրանցից մեկը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հիմնականում հանգում է հետևյալին. արագացվածի և ռեցիդիվի կանոնները միմյանց հակասող և իրարամերժ են, քանի որ նույն հարցի վերաբերյալ տարբեր լուծումներ են պարունակում. մեկը բարելավում է անձի վիճակը, իսկ մյուսը ընդհակառակը՝ վատթարացնում: Երկու հակադիր նորմերի առկայությունը պրակտիկայում շփոթ և անորոշություն է առաջացնում, քանի որ *«վիճելի է՝ կարո՞ղ են արդյոք վերոնշյալ նորմերը միաժամանակ կիրառվել, եթե այո, ապա ո՞րն ունի առավելություն և ո՞րն է ենթակա սկզբում կիրառման, եթե ոչ՝ ո՞ր նորմին պետք է նախապատվությունը տրվի»*: Առաջացող վիճակն անհամատեղելի է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 5-ով ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներին, ինչից բխում է, որ անձի նկատմամբ պատժի նշանակման կարգը և չափը իրավական որոշակիության չափանիշներին բավարարող եղանակով պետք է սահմանված լինեն հստակ, մատչելի և կանխատեսելի օրենքով:

Ռեցիդիվի և արագացվածի նորմի միջև հակասության առկայությունը և դրանց հաջորդական կիրառումը բացառելու անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ. նախ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասում առկա՝ *«սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ»* և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 375.3-ի 6-րդ մասում առկա՝ *«կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ»* դրույթները դիտարկել է որպես քրեական օրենսգրքի *հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի* շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ և արձանագրել, որ առկա ձևակերպումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում *«կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժը»* որոշվում է արդեն իսկ ռեցիդիվի կանոնների կիրառմամբ որոշված պատժաչափի սահմաններում, անթույլատրելի է: Երկրորդ փաստարկն այն է, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը գրեթե միշտ հանգեցնում է բացարձակ



որոշակի սանկցիայի ստացման, ինչը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 10-ով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, հոդված 61-ով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահանջներին և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին (տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-145/07, ՎԲ-63/07, ՎԲ-142/07, ՎԲ-55/07, ՎԲ-25/08, ԵՇԴ/0023/01/08, ԵԿԴ/0146/01/08, ԵԱԲԴ/0078/01/09, ԵԱԲԴ/0164/01/09, ԵԿԴ/0042/01/11, ԼԴ/0287/01/11, ՍԴ/0109/01/12, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումները): Այսինքն՝ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը բացառում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, և դատարանը զրկվում է կոնկրետ դեպքում կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները գնահատելու և անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը հակասությունը լուծել է ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ: Մասնավորապես, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 3-րդ և 7-րդ մասերով ամրագրված իրավադրույթները (այն է՝ միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը՝ տվյալ դեպքում արագացվածի կանոն առավել վաղ է ուժի մեջ մտել, և հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում (...) ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը՝ տվյալ դեպքում արագացվածի նորմն ավելի նախընտրելի է)՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված

դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է, և պետք է կիրառվի արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնը<sup>156</sup>:

Մեր կարծիքով պատիժ նշանակելու մեկից ավելի կանոնների առկայության դեպքում ճիշտ չէ դրանց միջև մրցակցություն արձանագրելը և դրանցից մեկին նախապատվություն տալը: Մրցակցությունը ենթադրում է, որ միևնույն իրավահարաբերությունը հավակնում են կարգավորել մեկից ավելի նորմեր, սակայն կիրառվում է այն նորմը, որն առավել մանրամասն և ամբողջական կարգավորումներ է պարունակում: Ընդ որում, մրցակցող նորմերը փոխադարձաբար կապված են միմյանց, ունեն կարգավորման միևնույն ուղղվածությունը, սակայն ծավալային առումով դրանցից մեկն առավել ընդգրկում է և մանրամասն է կարգավորում կոնկրետ իրավահարաբերությունը, ուստի դա էլ ենթակա է կիրառման: Այսպիսով, տեսության մեջ առանձնացվում են իրավական նորմերի մրցակցության հետևյալ հիմնական հատկանիշները՝ ա) մրցակցող նորմերի միջև առկա է սերտ փոխադարձաբար կապվածություն, բ) դրանք կարգավորում են միևնույն իրավահարաբերությունը, գ) բավանդակությամբ և ծավալային առումով մասնակիորեն համընկնում են, քանի որ եթե համընկնումը լիներ ամբողջական, ապա մրցակցող նորմերը միմյանցից ոչնչով չէին տարբերվի<sup>157</sup>:

Անդրադառնալով պատիժ նշանակելուն՝ պետք է արձանագրել, որ այն բարդ գործընթաց է, որի դեպքում հանցագործությունը և անձը բնութագրող յուրաքանչյուր հանգամանք մանրակրկիտ վերլուծության է ենթարկվում և հաշվի է առնվում դատարանի կողմից: Սակայն որոշ դեպքերում քրեական օրենսգիրքը նախատեսում է պատիժ նշանակելու առավել մանրամասն կանոններ, որոնք ուրվագծում են դատարանի հայեցողության սահմանները: Օրինակ՝ հանցավոր մտադրության իրականացման աստիճանից կախված՝ հատուկ կանոններ են նախատեսվում չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելիս, հանցագործության

<sup>156</sup> Տե՛ս *Ալեք Պողոսյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ին կայացված թիվ ՏԴ/0071/01/13 գործով որոշումը:

<sup>157</sup> Տե՛ս **Арзуманян А. Э.** Конкуренция норм российского права (вопросы теории и практики), автореферат дисс. канд. юрид. наук, Саратов, 2009, <http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=1354389>:

շարժառիթով, նպատակով, հետհանցավոր վարքագծով և այլ բացառիկ հանգամանքների առկայությամբ պայմանավորված՝ նախատեսվում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կարգ, հանցավորի՝ դատվածություն ունենալու հանգամանքը հիմք է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը կիրառելու համար և այլն: Ակնհայտ է, որ այդ նորմերից յուրաքանչյուրը տարբեր տեսանկյունից է կարգավորում պատիժ նշանակելու հարաբերությունները, բովանդակային առումով միմյանց չեն համընկնում և դրանցից յուրաքանչյուրի գործադրման հիմքում ընկած հանգամանքները տարբեր են՝ մի դեպքում, օրինակ, արագացված դատաքննության անցկացումը, մյուս դեպքում՝ հանցագործության նախապատրաստության փուլում ընդհատվելը և այլն: Հետևաբար պատիժ նշանակելու հատուկ կանոնները մրցակցության մեջ չեն գտնվում: Հակառակ մեկնաբանության պարագայում պետք է մրցակցություն արձանագրել նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների միջև և բացառել դրանց համատեղ կիրառությունը, քանի որ դրանք ուղղված են միևնույն՝ պատիժ նշանակելու իրավահարաբերության կարգավորմանը, ինչը տրամաբանական չէ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ այնքանով, որքանով հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության կանոնների կիրառման հիմքերի առկայության դեպքում ռեցիդիվի կանոնը չկիրառելու հնարավորության մասին օրենքը որևէ նշում չի պարունակում (ի տարբերություն, օրինակ, չավարտված հանցագործությունների դեպքում), ապա հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը չկիրառելը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 5-ով ամրագրված օրինականության սկզբունքի կոպիտ խախտում է և անհամատեղելի է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին:

Ինչ վերաբերում է քննարկվող նորմերի միջև հակասության առկայությանը, քանի որ դրանց կիրառման կարգն ու հաջորդականությունը օրենքով սահմանված չեն, ապա այդ փաստարկին ևս չի կարելի համաձայնվել: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

*«Օրենքները կարող են ընդունվել օրենսգրքերի տեսքով: Օրենսգիրքն իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրված օրենքն է:*

*Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:*

Հանցավոր արարքների, դրանց համար պատիժների և քրեաիրավական ներգործության միջոցների սահմանումը, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմնախնդիրները գտնվում են քրեական օրենսդրության կարգավորման ոլորտում, ավելին՝ պատիժ նշանակելու հարցերը կազմում են քրեական օրենսդրության հիմնական խումբ իրավահարաբերությունները: Վերոնշյալից տրամաբանորեն բխում է, որ պատիժ նշանակելու գործընթացում քրեաիրավական նորմերը գործադրման նախապատվություն ունեն՝ որոշելու համար տվյալ *հանցագործության համար օրենքով նախատեսված պատիժը*, ինչից հետո միայն իրավունքի այլ ճյուղերի, մասնավորապես՝ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված պատիժ նշանակելու կանոնի կիրառմամբ կարելի է սահմանել վերջնական պատիժ (խոսքը վերաբերում է արագացված դատաքննության անցկացնելու դեպքում պատիժ նշանակելու նորմին)<sup>158</sup>:

Պատահական չէ, որ քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված քննարկվող նորմերի ձևակերպումներում առկա է բովանդակային տարբերություն. հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժը որոշվում է քրեական օրենսգրքի *հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում*<sup>159</sup>՝ ձևավորելով կատարված հանցագործության համար օրենքով նախատեսված պատիժ՝ նվազագույն չափի պարտադիր խստացմամբ: Մինչդեռ արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելիս արդեն հիմք է ընդունվում *կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ*

<sup>158</sup> Մեր համոզմամբ իրավունքի այլ ճյուղերի կողմից պատիժ նշանակելու նորմերի նախատեսումն անթույլատրելի է, քանի որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղ ունի կարգավորման սեփական առարկան, իսկ պատժի նշանակման հարցերը գտնվում են քրեաիրավական կարգավորման ոլորտում: Այնուամենայնիվ, եթե այդպիսիք առկա են, ապա պետք է սկզբում կիրառվեն քրեական իրավունքի համապատասխան նորմերը:

պատրիժը: Վերոնշյալից ակնհայտ է հանցագործությունների ռեցիդիվի նորմի սերտ կապը հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի հետ, ինչը պայմանավորված է քրեական օրենսդրության ընդհանուր և հատուկ մասերի համակարգային ամբողջականությամբ և փոխապայմանավորվածությամբ: Մասնավորապես, «ցանկացած քրեաիրավական նորմ պետք է դիտարկել քրեական իրավունքի ամբողջական համակարգում՝ որպես դրա բաղկացուցիչ մաս: Անգամ կոնկրետ հանցակազմի հատկանիշները ճիշտ սահմանելու և ըմբռնելու համար անհրաժեշտ է լինում վերլուծել ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմը, այլև բացահայտել դրա կապը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի հետ: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում (դիսպոզիցիաներում), որպես կանոն, ոչինչ չի ասվում հանցագործության սուբյեկտի, սուբյեկտիվ կողմի, հանցափորձի, հանցագործության նախապայրաստության մասին և այլն: Դիսպոզիցիայում բացակայող այս հատկանիշները, սակայն, հստակ սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում և պարտադիր կիրառելիություն ունեն»<sup>159</sup>:

Այսպիսով, վերոշարադրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատքնության նորմերը պետք է կիրառվեն հաջորդաբար: Մասնավորապես, անհրաժեշտ է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնով սահմանել պատժի նվազագույն չափը, այսինքն՝ որոշել տվյալ հանցագործության համար նախատեսված պատիժը, այնուհետև կիրառել արագացված դատաքնության կանոնը: Վճռաբեկ դատարանի՝ քննարկման առարկա որոշման վերաբերյալ ներկայացված հատուկ կարծիքներից մեկում արդարացիորեն նշվել է՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնների միջև հակասության մասին հնարավոր կլինե՞ր խոսել այն պարագայում, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում բացակայե՞ր հստակ կանոնն առ այն, որ **եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է**

<sup>159</sup> Տե՛ս Ալեք Պողոսյանի որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Հ.Ասատրյանի հատուկ կարծիքը, Երևան, 2014 թվական:

**տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժը:** Նման օրենսդրական արգելքի նախատեսումը կոչված է բացառելու դատական քննության արագացված կարգ կիրառելու արդյունքում օրենքով նախատեսված առավել մեղմ պատժից ավելի մեղմ պատժի նշանակումը: Վերը հիշատակված օրենսդրական արգելքի առկայությունը վկայում է դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու կանոնների վերաբերյալ օրենսդրի հստակ մոտեցման առկայության մասին: Հանցագործությունների ռեցիդիվի և դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու օրենսդրական կարգավորման առումով առկա են իրավական որոշակիության չափանիշներին բավարարող հստակ, մատչելի և կանխատեսելի կանոններ»<sup>160</sup>:

Ինչ վերաբերում է պատիժ նշանակելու նորմերի հաջորդական կիրառման արդյունքում բացարձակ որոշակի սանկցիա ստանալու Վճռաբեկ դատարանի մտահոգությանը, ապա պետք է ընդունել, որ բացարձակ որոշակի սանկցիաներն իսկապես նահանջ են արդարության, պատասխանատվության ու պատժի անհատականացման սկզբունքներից, թույլ չեն տալիս նշանակել արարքին, հանցագործության հանգամանքներին և հանցավորի անձին առավելագույնս համապատասխան պատիժ: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ այդ խնդիրն առաջ է գալիս ոչ միայն պատիժ նշանակելու կանոնների հաջորդական կիրառման արդյունքում. բացարձակ որոշակի սանկցիաներ բավականին հաճախ են ստացվում նաև պատիժ նշանակելու մեկ կանոնի կիրառման դեպքում, ինչը, սակայն, չի բացառում տվյալ նորմի կիրառությունը: Վերոնշյալ խնդիրն ավելի շուտ օրենսդրական լուծում է պահանջում, ինչը հնարավոր է ապահովել քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցագործությունների սանկցիաների վերանայման, դրանց մանրամասն ուսումնասիրության և կատարելագործման միջոցով: Հետևապես այդ պատճառաբանությամբ հանցագործությունների ռեցիդիվի կանոնի չկիրառումն անթույլատրելի է:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել ռեցիդիվիային հանցավորության

<sup>160</sup> Տե՛ս դատավոր Հ.Ասատրյանի հատուկ կարծիքը:

հանրային բարձր վտանգավորությունը<sup>161</sup>: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշումը որպես գործիք է օգտագործվում բազմակի դատվածություն ունեցող, բացասական բնութագրվող հանցագործների համար դատական քննության արագացված կարգի կիրառմամբ խուսափելու խիստ պատիժներից: Այսպես՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով ամբաստանյալ Կ.Սահակյանը, ով նակինում կատարված հանցանքների համար ուներ չմարված դատվածություն, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 165-ի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 34-177-ի 2-րդ մասի 3-րդ կետով՝ **1 դրվագ**, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 177-ի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ **10 դրվագ**, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 177-ի 2-րդ մասի 3-րդ կետով՝ **չորս դրվագ**, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 34-177-ի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ **3 դրվագ**: Դատարանն արձանագրել է, որ զրկված է վերջինիս նկատմամբ ռեցիդիվի կանոնի կիրառմամբ պատիժ նշանակելու հնարավորությունից, քանի որ անցկացվել է արագացված դատաքննություն <sup>162</sup>:

Արագացված դատաքննության դեպքում հանցագործությունների ռեցիդիվի կանոնները չկիրառելը իրավակիրառ պրակտիկայում առաջ է բերել բազմաթիվ դժգոհություններ, ինչի մասին են վկայում այդ հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքները: Այսպես՝ թիվ ՏԴ2/0044/01/16 գործով ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս ռեցիդիվի կանոնը չի կիրառվել՝ դատաքննության արագացված կարգ կիրառելու պատճառաբանությամբ, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք պատժատեսակը: Ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ փաստելով ռեցիդիվային հանցավորության բարձր վտանգավորությունը և

<sup>161</sup> Տե՛ս *Ալեք Պողոսյանի* որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Ա.Պողոսյանի հատուկ կարծիքը, Երևան, 2014 թվական:

<sup>162</sup> Տե՛ս Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 3-ին թիվ *ԵՄԴ/0001/01/17* գործով դատավճիռը: Վերոնշյալ հարցի վերաբերյալ տե՛ս նաև Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 7-ին թիվ *ՏԴ1/0025/01/17* գործով, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ին թիվ *ԵՇԴ/0196/01/15* գործով, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016թ. սեպտեմբերի 8-ին թիվ *ԿԴ1/0054/01/16* գործով կայացված դատավճիռները:

ընդգծելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով նախատեսված կարգով պատիժ չնշանակելը հանգեցրել է ամբաստանյալի նկատմամբ չափազանց մեղմ տուգանք պատժատեսակի նշանակման<sup>163</sup>:

Մեկ այլ թիվ ԵԷԴ/0090/01/16 գործով (առկա է եղել առանձնապես վտանգավոր ռեցիդիվ՝ ամբաստանյալը նախկինում 10 անգամ դատապարտված է եղել) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ներկայացված վճռաբեկ բողոքում ընդգծել է, որ ձևավորված պրակտիկան վկայում է ռեցիդիվի և գործն արագացված կարգով քննելու դեպքերում պատիժ նշանակելու կանոնների անհամատեղելիության վերաբերյալ *Ալեք Պողոսյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների զարգացման անհրաժեշտությունը: Մասնավորապես չպետք է բացառել դատական քննության արագացված կարգի՝ որպես բարենպաստ հետևանք առաջացնող դատավարական ինստիտուտի կիրառությունը՝ միաժամանակ ապահովելով ռեցիդիվի դեպքում համաչափ պատժի նշանակում: Բողոքաբերն առաջարկել է պատժի ժամկետի հաշվարկման հիմք ընդունել տվյալ հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի առավելագույն չափը, այսինքն՝ նվազագույն կամ առավելագույն չափերը հաշվարկել բացառապես հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժաչափից՝ անկախ այն հանգամանքից, թե նշված կանոններից որևէ մեկի կիրառման արդյունքում պատժի ինչ «առավելագույն» չափ է ձևավորվում<sup>164</sup>:

Հաշվի առնելով ձևավորված հակասական իրավակիրառ պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը *Նորայր Զաքարյանի* վերաբերյալ գործով որոշմամբ զարգացրեց *Ալեք Պողոսյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, որով հետ քայլ կատարեց նախկինում արտահայտած՝ արագացված դատաքննության և ռեցիդիվի կանոնների միաժամանակյա առկայության դեպքում նախապատվությունը արագացված դատաքննության նորմին տալու վերաբերյալ դիրքորոշումից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծեց, որ պատիժ նշանակելու վերոնշյալ

<sup>163</sup> Տե՛ս Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ին կայացված թիվ *ՏԴ2/0044/01/16* գործով դատավճիռը:

<sup>164</sup> Տե՛ս Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ին կայացված թիվ *ԵԷԴ/0090/01/16* գործով դատավճիռը:



կանոնների միաժամանակյա կիրառության հնարավորության հարցը յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի՝ հաշվի առնելով՝ արդյոք այն առաջացնում է հակասություն, թե ոչ. «ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ «սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ» և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա՝ «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ» ձևակերպումները ենթադրում են, որ կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ հասկացությունը մեկնաբանվում է որպես քրեական օրենսգրքի **հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ**: Հիշյալ մեկնաբանման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև մրցակցություն կամ հակասություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նկատմամբ ռեցիդիվի կանոնների կիրառման արդյունքում ստացված պատժի նվազագույն սահմանը մեծ է արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման արդյունքում ստացված պատժի առավելագույն սահմանից կամ հավասար է դրան: Բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան կանոնների կիրառման արդյունքում ձևավորված պատժի նվազագույն սահմանը փոքր է առավելագույն սահմանից նման հակասության մասին խոսք չի կարող լինել, քանի որ առաջանում է հարաբերական որոշակի սանկցիա՝ ապահովելով պատժի անհատականացման սկզբունքի իրացման հնարավորությունը»<sup>165</sup>:

Այսինքն՝ որպես հակասություն է դիտարկվել երկու կանոնների կիրառման արդյունքում բացարձակ որոշակի սանկցիայի ստացումը, իսկ հարաբերական որոշակի սանկցիա ստանալու դեպքում՝ ներքին և վերին սահմաններով, դատարանը պարտավոր է կիրառել թե՛ հանցագործությունների ռեցիդիվի, թե՛ արագացված դատաքննության կանոնը: Կարծում ենք՝ Վճռաբեկ դատարանի նախկին դիրքորոշման նման զարգացումը ողջունելի է, քանի որ արագացված դատաքննության դեպքում

<sup>165</sup> Տե՛ս Նորայր Զաքարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԼՂ4/0031/01/16 գործով որոշումը:

ռեցիդիվի կանոնի կիրառման բացարձակ արգելքը վերացվել է: Այնուամենայնիվ, խնդիրը շարունակում է մնալ, քանի որ նախ՝ բացարձակ որոշակի սանկցիայի ստացումը դեռևս չի նշանակում նորմերի միջև հակասության առկայություն, երկրորդ՝ օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում այդպիսի պատճառաբանությունը չի կարող հիմք լինել հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը չկիրառելու համար:

Նկատենք նաև, որ որոշակի դեպքերում ռեցիդիվի և արագացված դատաքննության կանոնի միաժամանակյա կիրառությունը թույլատրելի համարելով՝ Վճռաբեկ դատարանն ընտրել է ոչ թե նորմերի հաջորդական կիրառման մեխանիզմը, այլ դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին կիրառել է հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նկատմամբ: Վերոնշյալը պայմանավորված է նրանով, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասում առկա՝ *«սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատժ»* և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 375.3-ի 6-րդ մասի՝ *«կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժ»* ձևակերպումները մեկնաբանում է որպես քրեական օրենսգրքի **հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատժ**: Այնինչ մեր կողմից արդեն իսկ հիմնավորվել է պատժ նշանակելու նորմերի հաջորդական կիրառման տարբերակի առավել ընդունելի լինելը, այն է՝ խնդրո առարկա դեպքում՝ ռեցիդիվի կանոնը կիրառելուց հետո միայն արագացված դատաքննության դեպքում պատժ նշանակելու նորմը կիրառելը, քանի որ նման լուծումը համակարգային բնույթ է կրում և վերաբերում է նաև պատժ նշանակելու այլ կանոնների հարաբերակցությանը: Մասնավորապես անձի վիճակը բարելավող մեկից ավելի նորմերի դեպքում (օրինակ՝ արագացվածի և չավարտված հանցագործությունների դեպքում պատժ նշանակելիս) դրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն կիրառումը հանցագործության սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափի նկատմամբ կհանգեցնի երկու՝ միմյանցից տարբեր պատժաչափ ստանալուն, իսկ եթե ընտրվի դրանցից մեկը, օրինակ՝ անձի համար առավել բարենպաստ կանոնը, ապա կստացվի, որ կիրառվեց պատժ նշանակելու առկա

կանոններից միայն մեկը, իսկ մյուս նորմը որևէ իրավական հետևանք չառաջացրեց, ինչը, կարծում ենք, անթույլատրելի է: Ուստի անհրաժեշտ է պատիժ նշանակելու կանոնները կիրառել հաջորդաբար<sup>166</sup>:

Անդրադառնալով Նախագծի կարգավորումներին՝ նշենք, որ պատիժ նշանակելու հատուկ կանոններ են նախատեսվել ոչ միայն հանցագործությունների ռեցիդիվի, հանցագործության նախապատրաստության, այլև ծանրացնող և մեղմացնող հանգամանքների, համաձայնեցման և համագործակցության վարույթների դեպքում: Կարծում ենք՝ ողջունելի է համաձայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում պատիժ նշանակելու կանոնները քրեական օրենսգրքում նախատեսելը՝ ի տարբերություն ներկայումս գործող արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կարգի, որը նախատեսված է քրեադատավարական օրենսդրությամբ: Նախագծի համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցության հետևյալ կարգավորումներն են նախատեսվել՝

1) հանցագործությունների ռեցիդիվի և չավարտված հանցագործությունների, մասնավորապես՝ նախապատրաստության հարաբերակցության հարցը կարգավորվել է դարձյալ կոլիզիոն նորմի նախատեսման միջոցով, որը ռեցիդիվի կանոնի կիրառման դեպքում բացառում է նախապատրաստության դեպքում պատիժ նշանակելու նորմի կիրառումը (Նախագծի հոդվածներ 76 և 79),

2) համաձայնեցման վարույթի, հանցագործությունների ռեցիդիվի և չավարտված հանցագործության դեպքում նախատեսվել է համապատասխան նորմերի հաջորդական կիրառման հնարավորություն: Մասնավորապես, համաձայնեցման վարույթի անցկացումը արգելք չէ ռեցիդիվի կամ նախապատրաստության կանոններով պատիժ նշանակելու համար: Ընդ որում, սկզբում կիրառվում է ռեցիդիվի կամ

---

<sup>166</sup> Օրինակ՝ հանցագործության փորձի դեպքով արագացված դատաքննություն անցկացնելու պարագայում անհրաժեշտ է սկզբում կիրառել չավարտված հանցագործության կանոնը (ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի **Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով** որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը), այնուհետև միայն կանոնի կիրառման արդյունքում ստացված առավելագույն չափի նկատմամբ գործադրել արագացված դատաքննության կանոնը (չի կարող գերազանցել **կատարված հանցագործության համար նախատեսված** առավել խիստ պատժի երկու երրորդը):

նախապատրաստության նորմը, այնուհետև՝ ստացված պատժաչափի նկատմամբ՝ համաձայնեցման վարույթի կանոնը, ինչի մասին է վկայում Նախագծի հոդված 80-ի (պատիժ նշանակելը համաձայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում) 3-րդ մասում առկա ձևակերպումը՝ *«Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կանոնը կիրառելի է նաև սույն օրենսգրքի 76 կամ 79 հոդվածներով սահմանված կարգով նշանակվող պատժի նկատմամբ»*<sup>167</sup>: Սակայն խնդրահարույց է ռեցիդիվի և համաձայնեցման վարույթի դեպքում պատժի որոշման հարաբերակցությունների սահմանումը՝ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել պատժի առավելագույն չափի 2/3-ից, իսկ համաձայնեցման վարույթի դեպքում չի կարող գերազանցել առավելագույն պատժի 2/3-ը, այսինքն՝ բոլոր դեպքերում ստացվելու է միևնույն թիվը, ինչը, կարծում ենք, ճիշտ չէ,

3) հետաքրքրություն է ներկայացնում երկու կամ ավելի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատիժ նշանակելու նորմի (հոդված 74-ի 2-րդ մաս) և հանցագործությունների ռեցիդիվի հարաբերակցության հարցը: Մասնավորապես, Նախագծում սահմանվում է, որ *«Պատիժը ծանրացնող երկու կամ ավելի հանգամանքների առկայության և պատիժը մեղմացնող որևէ հանգամանքի բացակայության դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժապեսակի առավելագույն չափի կամ ժամկետի մեկ երրորդից»*: Ըստ Նախագծի կարգավորումների՝ պատիժը ծանրացնող հանգամանք է նաև հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը, հետևաբար, երբ առկա է այն ու ևս մեկ ծանրացնող հանգամանք, իսկ մեղմացնող հանգամանքները բացակայում են, ապա պատիժը պետք է նշանակվի հիշյալ կարգով: Սակայն հարց է առաջանում. եթե դատվածությունը ձևավորում է հանցագործությունների ռեցիդիվ և դրա դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման հիմքերը առկա են, արդյո՞ք նշված

<sup>167</sup> Վերոնշյալը կոլիզիոն նորմ է, որով հստակ կարգավորվել է պատիժ նշանակելու քննարկվող կանոնների՝ համաձայնեցման վարույթի, ռեցիդիվի և նախապատրաստության հարաբերակցության կարգը, սահմանվել է դրանց կիրառման հաջորդականությունը, ինչը պրակտիկայում կբացառի նշված նորմերի կիրառման վերաբերյալ վեճերը և տարամեկնաբանությունները: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ նման կանոն նախատեսել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 375.3-ի 6-րդ մասում՝ ընդգծելով, որ արագացվածի կանոնը կիրառելի է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 65-ով և 67.1-ով սահմանված կարգով նշանակվող պատժի նկատմամբ:

կանոնները կարող են միաժամանակ գործադրվել, թե ոչ: Խնդիրը կայանում է նրանում, որ վերոհիշյալ նորմերի համատեղ կիրառության դեպքում առկա է միևնույն փաստը՝ դատվածությունը կրկնակի գնահատման ենթարկելու վտանգը: Բացի այդ, նշված կանոններից յուրաքանչյուրը սահմանում է պատժի նվազագույն չափը, ուստի համատեղ կիրառման դեպքում ստացվելու են երկու տարբեր նվազագույն պատժաչափեր: Կարծում ենք՝ նման իրավիճակում ծանրացնող հանգամանքի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնը չպետք է գործի,

4) հանցագործությունների ռեցիդիվի կանոնի գործադրումը արգելք չէ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Նախագծում սահմանվել է նշված նորմերի համատեղ կիրառման հնարավորություն: Մասնավորապես, տվյալ պարագայում օրենքով նախատեսված պատիժ է համարվում ռեցիդիվի կանոնի կիրառման արդյունքում ստացվող պատիժը: Այսպես՝ Նախագծի հոդված 79-ի 4-րդ մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները չեն կարող արգելք հանդիսանալ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Այս դեպքում օրենքով նախատեսված պատիժ է համարվում այն պատիժը, որը համապատասխանում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու սահմանված կարգի կիրառման արդյունքում ստացվող պատժին:

Գործող քրեական օրենսդրությամբ նշված հոդվածների հարաբերակցության հարցը կարգավորված չէ, ուստի հարց է առաջանում՝ կարո՞ղ է արդյոք հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակվել, եթե այո, ապա ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 64-ի կիրառման հիմքերի առկայությունն արդյոք բացառում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառումը, թե՞ ոչ:

Հարկ է նկատել, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հնարավորության հարցը հետխորհրդային որոշ պետությունների քրեական օրենսգրքերում կարգավորվել է: Օրինակ՝ *Ռուսաստանի Դաշնության* քրեական օրենսգրքով սահմանվել է, որ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում կարող է նշանակվել ավելի մեղմ պատիժ, քան նախատեսված է տվյալ հանցագործության համար (հոդված 68-ի 3-րդ մաս):

*Բելառուսի* քրեական օրենսգրքի համաձայն՝ բացառիկ հանգամանքների, ինչպես նաև համագործակցության մասին մինչդատական համաձայնությամբ պայմանավորված պարտականությունները կատարելիս ռեցիդիվի դեպքում պատիժ է նշանակվում առանց հոդվածի երկրորդ մասում նախատեսված սահմանափակումների կիրառման (հոդված 65-ի 3-րդ մաս)<sup>168</sup>: *Վրաստանի* քրեական օրենսգրքում նշվում է, որ եթե դատվածությունը հատուկ մասի որևէ հոդվածում նախատեսված է որպես որակյալ հատկանիշ, ինչպես նաև օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու հիմքերի առկայության կամ պայմանական դատապարտման պարագայում ռեցիդիվի դեպքում հոդվածով նախատեսված սահմանափակումը հաշվի չի առնվում (հոդված 58): *Ղրղզստանի*<sup>169</sup> և *Թուրքմենստանի*<sup>170</sup> քրեական օրենսգրքերով նույնպես սահմանվում է, որ բացառիկ հանգամանքների առկայության պարագայում ռեցիդիվի դեպքում նախատեսված սահմանափակումները չեն կիրառվում (համապատասխանաբար՝ հոդվածներ 58-ի 3-րդ մաս և 62-ի 3-րդ մաս): Միայն *Մոլդովայի* քրեական օրենսգրքով է հանցագործությունների ռեցիդիվի առկայությունն արգելք օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու համար (հոդված 79)<sup>171</sup>:

Լ. Վ. Ինոգամովա-Շեգայը, անդրադառնալով պատիժ նշանակելու հատուկ կանոնների և հոդված 64-ի հարաբերակցությանը, ընդգծել է, որ այն, ընդհանուր և հատուկ նորմերի համեմատությամբ, հանդիսանում է բացառիկ նորմ: Այսպես՝ ի տարբերություն հատուկի՝ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելը որևէ ընդհանուր նորմի առանձին դրսևորում չէ. այն հարաբերությունները միանգամայն այլ կերպ է կարգավորում՝ հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներից դուրս: Հեղինակի կարծիքով ընդհանուր և բացառիկ կամ հատուկ և բացառիկ նորմերի միջև մրցակցությունը պետք է լուծվի հոգուտ բացառիկի: Հետևաբար հանցագործությունների ռեցիդիվի և օրենքով նախատեսվածից մեղմ

<sup>168</sup> Տե՛ս Բելոռուսի 1999 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով Belarus\_CC\_am2016\_ru.pdf:

<sup>169</sup> Տե՛ս Ղրղզստանի 1997 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով Kyrgyzstan\_CC\_1997\_am2017\_ru:

<sup>170</sup> Տե՛ս Թուրքմենստանի 1997 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2016 թվականի փոփոխություններով [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31295286#pos=1;-173](https://online.zakon.kz/Document/?doc_id=31295286#pos=1;-173):

<sup>171</sup> Տե՛ս Մոլդովայի 2002 թվականի քրեական օրենսգիրքը՝ 2017 թվականի փոփոխություններով Moldova\_CC\_2002\_am2017\_ru.pdf:

պատիժ նշանակելու հիմքերի առկայության դեպքում պետք է կիրառվի վերջինը<sup>172</sup>:

Կարծում ենք՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնը և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու նորմը միմյանց հետ չեն մրցակցում, մեկը մյուսին չեն բացառում, հետևաբար կարող են միաժամանակ կիրառվել: Պետք է համաձայնվել Ինոգամովա-Հեգայի այն դիրքորոշմանը, որ հոդված 64-ով նախատեսված նորմն իր բնույթով բացառիկ է և այլ նորմերի նկատմամբ չի հանդիսանում ընդհանուր կամ հատուկ. դրա կիրառման հիմքը բացառիկ հանգամանքների առկայությունն է, որոնք էականորեն նվազեցնում են հանցագործության վտանգավորության աստիճանը: Հետևաբար այդ հանգամանքները կարող են արձանագրվել թե՛ հանցագործությունների ռեցիդիվի, թե՛ պատիժ նշանակելու այլ կանոնների դեպքում: Միևնույն ժամանակ բացառիկ հանգամանքների առկայությունն իր հերթին չի կարող բացառել պատիժ նշանակելու այլ կանոնների գործադրումը: Հատկանշական է, որ օրենքով նման սահմանափակում նախատեսված չէ: Ուստի կարծում ենք, դատարանը պատիժ նշանակելիս պետք է նախևառաջ կիրառի համապատասխան հատուկ կանոնը, այնուհետև օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու հիմքերի առկայության դեպքում որոշի ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 64-ի կիրառության հարցը: Այսպես՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում դատարանը պետք է պատիժ նշանակի հոդված 67.1-ի կանոնով, այնուհետև եթե գտնում է, որ առկա են բացառիկ հանգամանքներ, նշանակի օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ. տվյալ դեպքում արդեն օրենքով նախատեսված պատիժ պետք է համարել ռեցիդիվի կանոնի կիրառման արդյունքում ստացվող պատիժը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. *«Սույն հոդվածի երկրորդ, երրորդ և չորրորդ մասերով նախատեսված կանոններն արգելք չեն օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Այս դեպքում օրենքով նախատեսված պատիժ է համարվում այն պատիժը, որը համապատասխանում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու սահմանված կարգի կիրառման արդյունքում ստացվող պատիժին»:*

<sup>172</sup> Տե՛ս *Иногамова Хегай Л. В.*, նշված աշխատությունը, էջ 188-189:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հանցագործությունների ռեցիդիվի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր հետազոտության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ հետևություններին.

1. Հանցագործությունների ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տեսակ է, որը բազմակիության մյուս տեսակից՝ հանցագործությունների համակցությունից, տարբերակվում է ըստ սուբյեկտիվ չափանիշի, այն է՝ դատվածության առկայության փաստով:

2. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել 7.1-րդ գլխով՝ «Հանցագործությունների բազմակիություն» անվանմամբ և նրա հոդված 41.1-ով՝ «Հանցագործությունների բազմակիությունը և դրա տեսակները», տալ հանցագործությունների բազմակիության հետևյալ բնորոշումը.

*«1. Հանցագործությունների բազմակիությունը միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանքների կատարումն է, որոնցից առնվազն երկուսի նկատմամբ պահպանված են քրեաիրավական հետևանքները և բացակայում են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական արգելքները:*

*2. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է տևող, շարունակվող և բարդ (բաղկացական) հանցագործությունների, ինչպես նաև հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում:*

*3. Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը»:*

3. Հանցագործությունների ռեցիդիվի էությունը հանցավորի գիտակցության մեջ կայուն և խոր հանցավոր հայացքների, սովորույթների, ձգտումների, հստակ արտահայտված հակահասարակական կողմնորոշումների արմատավորումն է: Հանցագործությունների ռեցիդիվի վերոնշյալ իրավական բնութագիրը վկայում է միայն դիտավորյալ մեղքի ձևի մասին, իսկ անզգույշ հանցագործությունները հիմնականում իրավիճակային բնույթ ունեն, չեն վկայում հանցավորի վարքագծի կայուն հակասոցիալական ուղղվածության մասին: Հետևաբար օրենսդրի մոտեցումը՝



ռեցիդիվը գնահատելիս միայն դիտավորյալ հանցագործությունների դատվածությունը հաշվի առնելու վերաբերյալ, արդարացված է: Միննույն ժամանակ, դատարանը կաշկանդված չէ նախկինում անզգույշ հանցագործության համար դատվածություն ունեցող և կրկին հանցանք կատարած (հավասարապես նաև՝ դիտավորյալ հանցանքի համար դատվածություն ունեցող և կրկին անզգույշ հանցանք կատարած կամ անզգույշ հանցագործության համար դատվածություն ունեցող և կրկին անզգույշ հանցանք կատարած) անձի նկատմամբ պատիժ նշանակելիս վերջինիս ունեցած դատվածությունը դիտել որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանք:

4. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 4-րդ և 5-րդ մասերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժից ոչ լրիվ և պայմանական ազատվելու պարագայում, մասնավորապես՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում անձը համարվում է դատվածություն ունեցող: Հետևաբար կարելի է արձանագրել, որ դատվածություն չեն առաջացնում պատժից ոչ պայմանական և լրիվ ազատվելու դեպքերը, ինչպիսիք են, օրինակ, արտակարգ հանգամանքների կամ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելը:

5. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 78-ով նախատեսված՝ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելու կամ պատժից ազատելու դեպքում, եթե դատապարտյալը համապատասխան ժամկետի ընթացքում հետ է ուղարկվում պատիժը կրելու կամ կատարում է նոր հանցանք, կամ պատիժը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա վերջինս համարվում է դատվածություն ունեցող, ինչը մարվում կամ հանվում է օրենքով սահմանված կարգով: Հետևաբար նախքան դատվածությունը մարվելը կամ հանվելը նոր հանցանք կատարելու դեպքում առկա կլինի նաև հանցագործությունների ռեցիդիվ: Մինչդեռ եթե համապատասխան ժամկետը լրանալուց հետո դատարանը որոշում է անձին ազատել պատիժը կրելուց, ապա այդ պահից սկսած՝ անձը համարվում է դատվածություն չունեցող:

6. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 79-ով նախատեսված՝ ծանր հիվանդության

հետևանքով պատժից ազատելու դեպքում, նորմով նախատեսված «կարող է» արտահայտությունը վկայում է, որ առողջանալու դեպքում հանցավորին քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, հետևաբար եթե դատարանը անձին ազատի պատիժը կրելուց, ապա վերջինս կհամարվի դատվածություն չունեցող: Համապատասխանաբար դրանից հետո նոր հանցանք կատարելու դեպքում անձի արարքում չի կարող հանցագործությունների ռեցիդիվ գնահատվել:

7. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 82-ի վերլուծությունից բխում է, որ եթե անձը համաներման ակտի ընդունմամբ ազատվում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից ամբողջությամբ, ապա համարվում է դատվածություն չունեցող: Ընդ որում, նշանակություն չունի՝ անձը պատիժը կրելուց ազատվել է դատարանի դատավճռով, թե որոշմամբ: Մինչդեռ եթե անձը պատժից ազատվում է մասնակիորեն կամ պատժի չկրած մասը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա համարվում է դատվածություն ունեցող, քանի դեռ այն չի մարվել կամ հանվել օրենքով սահմանված կարգով: Հետևաբար այդ ընթացքում նոր հանցանք կատարելու պարագայում առկա կլինի հանցագործությունների ռեցիդիվ:

8. Հաշվի առնելով ոչ մեծ ծանրության հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցագործությունների ռեցիդիվի դեպքում անձի համար առաջացող բացասական հետևանքները՝ առաջարկում ենք հրաժարվել առաջին անգամ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործության դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս հաշվի առնելուց՝ անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումը բացառելու նկատառումներից ելնելով: Սակայն եթե անձը կատարել է այլ տեսակի հանցանք և ունի դատվածություն ու նորից հանցավոր արարք է կատարում, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության, կամ եթե ոչ մեծ ծանրության հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտվելուց հետո կրկին կատարում է ոչ մեծ ծանրության հանցանք, ապա հանցագործությունների ռեցիդիվն առկա է:

9. Առաջարկում ենք հրաժարվել հանցագործությունների ռեցիդիվը տեսակների դասակարգելուց, ինչը զերծ կպահի քրեական օրենսդրությունը ավելորդ

ծանրաբեռնումից, կապահովի իրավական որոշակիության չափանիշին համահունչ կարգավորում, և դատական պրակտիկայում հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ նորմի սխալ կիրառումը կհասցվի նվազագույնի: Ինչ վերաբերում է հանցագործությունների ռեցիդիվի առավել վտանգավոր դրսևորումների դեպքում խիստ պատիժ նշանակելու անհրաժեշտությանը (օրինակ՝ պայմանավորված հանցագործության բնույթով, դատվածությունների քանակով և այլն), ապա պատիժ նշանակելու գլխում անհրաժեշտ է սահմանել այնպիսի կանոն, որը թույլ կտա դատարանին համապատասխան դեպքերում ապահովել նշանակվող պատժի համաչափ խստացում:

10. Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը չի հակասում կրկնակի դատապարտման անթույլատրելիության ու օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքներին, հետապնդում է իրավաչափ նպատակ: Մասնավորապես այն պայմանավորված է ոչ թե նախկին արարքի համար «հատուցման» անհրաժեշտությամբ (նախորդ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելով և պատիժ կրելով՝ անձն արդեն լիովին «քավում» է իր մեղքը), այլ հանցավորի անձին և կրկնվող հանցավոր վարքագծի վտանգավորության աստիճանին ու բնույթին օրենսդրի կողմից տրված օբյեկտիվ գնահատականով:

11. Հանցագործությունների ռեցիդիվի վտանգավորությունը նախևառաջ պայմանավորված է հանցավորի անձով: Ընդ որում, օբյեկտիվ հատկանիշով չտարբերվող հանցագործությունների բազմակիության մյուս տեսակից ռեցիդիվը տարբերվում է այնպիսի սուբյեկտիվ չափանիշով, ինչպիսին է նախկինում ունեցած չմարված կամ չհանված դատվածությունը, ինչը բնութագրում է հանցագործի անձը՝ ռեցիդիվը դարձնելով բազմակիության առավել վտանգավոր տեսակ: Թեև ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության դրսևորում դիտելը բխում է ՀՀ քրեական օրենսդրության ընդհանուր տրամաբանությունից և առավել մոտ է դասական դպրոցի գաղափարներին, այնուամենայնիվ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հանցավորի անձին չպետք է երկրորդական նշանակություն տրվի: Կատարված արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու և պատիժ նշանակելու

գործընթացում հանցավորի անձը բնութագրող տվյալները պետք է խոր վերլուծության ենթարկվեն, ինչը թույլ կտա հասնելու պատժի հիմնական՝ հանցավորի ուղղման և նոր հանցագործությունների կանխարգելման նպատակների իրագործմանը:

12. Քրեական օրենսդրությամբ հանցագործությունների ռեցիդիվը որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսելը (հոդված 63-ի 1-ին մասի 1-ին կետ) և, միևնույն ժամանակ, դրա դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ սահմանելը (<< քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը) արդարացված է, քանի որ քննարկվող նորմերը ոչ թե հակասում, այլ, ընդհակառակը, լրացնում են միմյանց: Հակառակ մոտեցումը վիճելի կլինի օրինականության սկզբունքի տեսանկյունից, որովհետև անձի համար խիստ պատիժ նախատեսող ցանկացած կարգ պետք է որոշակի հիմքեր ունենա. << քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը պարունակում է պատժի խստացման պարտադիր կանոն, որի հիմքը << քրեական օրենսգրքի հոդված 63-ով որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսված հանցագործությունների ռեցիդիվն է:

13. << գործող քրեական օրենսգրքի հոդված 84-ի 2-րդ մասում թեև նշվում է, որ դատվածությունը հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս, այնուամենայնիվ, հոդված 63-ում թվարկված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների մեջ այն չի նախատեսվում, ինչը գործնականորեն բացառում է դատվածությունը պատիժ նշանակելիս հաշվի առնելու հնարավորությունը, քանի որ ծանրացնող հանգամանքները քրեական օրենսգրքում թվարկված են սպառիչ կերպով: Ուստի առաջարկում ենք որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսել ոչ թե հանցանքը կատարելու ռեցիդիվը, այլ հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը:

14. Ռեցիդիվի ազդեցությունը նշանակվող պատժի վրա բազմաբնույթ է: Մասնավորապես, ռեցիդիվի դեպքում սահմանվում է պատիժ նշանակելու տարբերակված կարգ՝ նվազագույն պատժաչափի պարտադիր խստացմամբ, ինչից հետո, սակայն, պատժի հետագա անհատականացման անհրաժեշտությունը չի վերանում: Այսպես՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս

դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 2-րդ մասով սահմանված ընդհանուր հանգամանքներից բացի (հանցագործության հանրային վտանգավորության բնույթ և աստիճան, հանցավորի անձ, մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ) պետք է հատուկ ուշադրություն դարձնի նախկինում կատարված հանցագործությունների քանակին, բնույթին ու վտանգավորության աստիճանին, այն հանգամանքներին, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթին ու վտանգավորության աստիճանին:

15. Տերմինաբանական շփոթից խուսափելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասով նախատեսված՝ «*հանցագործության բնույթ և ծանրություն*» հասկացության փոխարեն օգտագործել «*հանցագործության վտանգավորության բնույթ և աստիճան*» հասկացությունը, իսկ «*նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները*» ձևակերպումից «*հետևանքները*» բառը հանել, քանի որ հանցագործության հետևանքները հանցագործության վտանգավորության աստիճանի հիմնական ցուցանիշն են, դրա բաղկացուցիչ մասը, ուստի սխալ է դրանք իրարից առանձնացնելը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի առաջին մասում կարևոր է նախատեսել պատիժ նշանակելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու պահանջ: Վերոնշյալը ոչ թե կկրկնօրինակի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այլ դատարանի ուշադրությունը կկենտրոնացնի հանցավորի անձի վրա: Հանցանք կատարած յուրաքանչյուր անձի վերաբերյալ պետք է հավաքվեն ամբողջական տեղեկություններ, հաշվի առնվեն յուրաքանչյուրի անձնական առանձնահատկությունները, վերաբերմունքը պատժի նկատմամբ, ուղղիչ հիմնարկներում նրանց նկատմամբ իրականացված դաստիարակչական աշխատանքների բնույթն ու մեթոդները, նոր հանցանքի կատարման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև պատիժը կրելուց հետո նրանց կենսագործունեությունը, ընտանեկան պայմանները, աշխատանքի առկայությունը և այլն:

17. Հաշվի առնելով միջազգային փորձը և հիմք ընդունելով այն, որ ռեցիդիվի դեպքում նախատեսված հատուկ կանոնի կիրառումը էականորեն խստացնում է

նշանակավոր պատիժը, ճիշտ կլիներ պատիժ նշանակելու հատուկ կանոնը գործադրել ոչ թե ռեցիդիվի առկայության ցանկացած, այլ միայն առավել վտանգավոր դրսևորումների դեպքում, մասնավորապես՝ եթե անձը նախկինում կատարված դիտավորյալ հանցագործության համար ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ է կրել կամ կրում և նոր կատարված արարքի համար դարձյալ դատապարտվում է ազատազրկման: Իսկ եթե կատարված արարքն այնքան էլ մեծ վտանգավորություն չի ներկայացնում և կիրառման ենթական հոդվածի սանկցիայով ազատազրկում պատժատեսակը նախատեսված չէ, ապա հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնը կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է:

18. Եթե անձի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ, և վերջինս նախորդ հանցագործության համար ազատազրկման ձևով պատիժ է կրել կամ կրում, իսկ նոր կատարված հանցանքի սանկցիան պարունակում է ազատազրկում պատժատեսակը, ապա դատարանը ոչ թե կարող է, այլ պարտավոր է այն ընտրել և պատիժ նշանակել ռեցիդիվի կանոններով, այսինքն՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման կամ չկիրառման հարցը չպետք է թողնել դատարանի հայեցողությանը:

19. Առաջարկում ենք սահմանել, որ եթե ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով ազատազրկում պատժատեսակը նախատեսված չէ, ապա հանցագործությունների ռեցիդիվը նույն օրենսգրքի հոդված 63-ի 1-ին մասի 1-ին կետի կարգով պետք է հաշվի առնվի որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

20. Քրեական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակ և վտանգավոր ռեցիդիվի պարագայում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով նախատեսված կանոնի պահանջի կատարումը շատ հաճախ պատժի խստացում չի ապահովում, երբեմն, նույնիսկ, հանգեցնում է հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից էլ պակաս պատժի ստացման: Ուստի անհրաժեշտ է նախատեսել պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որը կապահովի նշված խնդրի համակողմանի լուծում: Որպես տարբերակ՝

առաջարկում ենք ներկայումս գործող առավելագույն պատժաչափից որոշակի հարաբերակցությամբ պատիժը բարձրացնելու փոխարեն նախատեսել պատժի նվազագույն սահմանի անմիջական խստացում ապահովող կարգավորում: Նման կարգավորման առավելությունն այն է, որ ռեցիդիվի առկայությունը բոլոր դեպքերում կհանգեցնի նշանակվող պատժի խստացման:

21. Ազատազրկման նվազագույն ժամկետի բարձրացման համար անհրաժեշտ է սահմանել այնպիսի չափ, որը մի կողմից՝ չի լինի անարդարացի ու չափազանց խիստ, իսկ մյուս կողմից՝ կապահովի պատժի համաչափ ավելացում: Այս առումով, նվազագույն պատժաչափի մեկ երրորդով խստացումն ամենաօպտիմալ լուծումն է: Սակայն անհրաժեշտ է նաև օրենսդրորեն սահմանել, որ եթե պատժի նվազագույն չափի 1/3-ով ավելացումը կհանգեցնի պատժի առավելագույն չափի գերազանցման, ապա նման դեպքերում պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի կոնկրետ հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը:

22. Ռեցիդիվի տեսակներից հրաժարվելու պայմաններում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորում, որը կապահովի համաչափ պատժի նշանակում բազմակի դատվածություն ունեցող, առավել ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ: Միևնույն ժամանակ քրեական օրենսգրքում հանցագործությունների կրկնակիության ինստիտուտը վերացնելուց հետո բաց է մնացել պրոֆեսիոնալ հանցագործների դեմ պայքարի հարցը, և կրկնահանցագործների ու ռեցիդիվիստների նկատմամբ պատժողական քաղաքականությունն էականորեն թուլացել է: Ուստի առաջարկում ենք պատժի նվազագույն սահմանի խստացման հետ մեկտեղ նախատեսել պատժի առավելագույն ժամկետը գերազանցելու հնարավորություն:

23. Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը գերազանցելը էականորեն խստացնելու է անձի նկատմամբ նշանակվող պատիժը՝ անթույլատրելի է նվազ վտանգավորության հանցավոր արարքներ կատարելու պարագայում պատժի առավելագույն չափը խստացնելու հնարավորություն նախատեսելը, քանի որ դրա արդյունքում անձի վիճակը

անհամաչափորեն ծանրացվելու է: Ուստի նման իրավիճակները բացառելու համար անհրաժեշտ է պատժի առավելագույն սահմանը գերազանցելու դեպքերն օրենսդրորեն հստակ կանոնակարգել. միակ տեսանելի չափանիշը, որը կարող է դրվել վերոնշյալի հիմքում, նախկին և նոր կատարված հանցանքների բնույթն ու վտանգավորության աստիճանն է: Մասնավորապես պատժի նվազագույն ժամկետը խստացնելու հետ մեկտեղ դատարանը կարող է գերազանցել նաև սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը, եթե հանցավորը դատվածություն ունի նախկինում կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար և կատարում է ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք:

24. Պատժի առավելագույն սահմանը գերազանցելու դատարանի լիազորությանը չպետք է հայեցողական լինի, քանի որ կարող է կամայականությունների և նորմի ոչ միատեսակ կիրառության հանգեցնել: Հետևաբար եթե պատիժը խստացնելու հիմքերն առկա են (այն է՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար չմարված կամ չհանված դատվածության պայմաններում նոր ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է կատարվում), ապա դատարանը ոչ թե կարող է, այլ պետք է սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը խստացնի:

25. Առաջարկում ենք սահմանել, որ հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն սահմանը խստացնելու դեպքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել 25 տարին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձնապես ծանր մի շարք հանցագործությունների պարագայում որպես ազատազրկման առավելագույն ժամկետ նախատեսված է քսան տարին, հետևաբար դրանց ռեցիդիվի դեպքում նույնպես անհրաժեշտ է պատժի խստացում ապահովել:

26. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է սահմանել, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք կատարելու պարագայում տվյալ հանցագործության համար նվազագույն պատժաչափ պետք է դիտվի այն ժամկետը, որը ստացվում է հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման նվազագույն չափը մեկ երրորդով բարձրացնելու



արդյունքում, իսկ որպես առավելագույն պատժաչափ՝ այն ժամկետը, որը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավել, քան քսանհինգ տարին:

27. Դատվածություն ունեցող անձի կողմից մեկից ավելի դիտավորյալ հանցանքներ կատարելու դեպքում պատիժ նշանակելիս առաջարկում ենք սահմանել, որ համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար պատիժը որոշվում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններով, սակայն հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի կարող գերազանցել երեսուն տարի ժամկետով ազատազրկումը:

28. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 65-ի 4.1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ. *«Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վրանգավոր և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 2-րդ մասով սահմանված կարգով պատիժ նշանակելիս»:*

29. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 66-ի 6-րդ մասի կարգով պատիժ նշանակելիս հանցագործությունների ռեցիդիվը բացակայում է, քանի որ սկզբնական հանցագործության համար անձը դեռևս չի դատապարտվել, ինչը պարզվում է միայն երկրորդ արարքի համար դատապարտվելուց հետո:

30. Պատիժ նշանակելու մեկից ավելի հատուկ կանոնների առկայության դեպքում, եթե օրենսդրորեն դրանց հարաբերակցության հստակ կարգ սահմանված չէ, ճիշտ չէ դրանց միջև մրցակցություն արձանագրելը և դրանցից մեկին նախապատվություն տալը: Այսպես՝ մրցակցությունը ենթադրում է, որ միևնույն իրավահարաբերությունը հավակնում են կարգավորել մեկից ավելի նորմեր, սակայն կիրառվում է այն նորմը, որն առավել մանրամասն և ամբողջական կարգավորումներ է պարունակում: Ընդ որում, մրցակցող նորմերը փոխադարձաբար կապված են միմյանց, ունեն կարգավորման միևնույն ուղղվածությունը, սակայն ծավալային առումով դրանցից մեկն առավել ընդգրկում է և մանրամասն է կարգավորում կոնկրետ իրավահարաբերությունը, որն էլ ենթակա է կիրառման: Ակնհայտ է, որ պատիժ

նշանակելու նորմերը տարբեր տեսանկյունից են կարգավորում պատիժ նշանակելու հարաբերությունները, բովանդակային առումով միմյանց չեն համընկնում, և դրանցից յուրաքանչյուրի գործադրման հիմքում ընկած հանգամանքները տարբեր են, ուստի դրանց միջև մրցակցությունը բացակայում է:

31. Հանցագործությունների ռեցիդիվի և արագացած դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա առկայության դեպքում առաջարկում ենք ընտրել նշված նորմերի հաջորդական կիրառման մեխանիզմը: Մասնավորապես անհրաժեշտ է հանցագործությունների ռեցիդիվի կանոնով որոշել տվյալ հանցագործության համար նախատեսված պատիժը, այնուհետև կիրառել արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնը:

32. Արագացված դատաքննության և հանցագործությունների ռեցիդիվի կանոնների կիրառման հստակությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 375.3-ի 6-րդ մասում ընդգծել, որ արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնը կիրառելի է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով սահմանված կարգով նշանակվող պատժի նկատմամբ:

33. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. *«Հանցագործությունների ռեցիդիվի կանոնների կիրառումն արգելք չէ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Այս դեպքում օրենքով նախատեսված պատիժ է համարվում այն պատիժը, որը համապատասխանում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու սահմանված կարգի կիրառման արդյունքում ստացվող պատժին»:*

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

**1. ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

**1.1. Մենագրություններ, ուսումնական դասագրքեր և այլ աշխատություններ**

1. ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս (6-րդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով), դասագիրք բուհերի համար (խմբագրությամբ՝ Գ.Ս. Ղազինյանի), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 544 էջ. [41, 70, 81, 126, 131]
1. **Մ.Վ. Գրիգորյան** Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում, «Զանգակ», Երևան, 2001, 320 էջ. [69]
2. **Агаев И. Б.** Рецидив в системе множественности преступлений, Изд-во “Юрист”, М., 2002, 108 էջ. [38, 64]
3. **Алиев Н. Б.** Повторность и рецидив преступлений по советскому уголовному праву, Изд-во Даг. гос. ун-та, Махачкала, 1978, 118 էջ. [64]
4. **Благов Е. В.** Назначение наказания (теория и практика), Изд-во Яросл. гос. ун-та, Ярославль, 2002, 173 էջ. [94]
5. **Бузынова С. П.** Множественность преступлений и ее виды (уголовно-правовое исследование), Изд-во РИО ВЮЗИ, М., 1988, 56 էջ. [108]
6. **Бузынова С. П.** Рецидив преступлений, Изд-во РИО ВЮЗИ, М., 1980, 56 էջ. [102]
7. **Ведерникова О. Н.** Теория и практика борьбы с преступностью в Великобритании, Рос. правовая акад. М-ва юстиции РФ : Рос. криминол. ассоц., М., 2001, 344 էջ. [77]
8. **Векленко С. В.** Понятие, сущность, содержание и формы вины в уголовном праве, Изд-во Омск. юрид. акад. МВД России, Омск, 2002, 192 էջ. [41]
9. **Гальперин И. М.** Советское уголовное право, Общая часть, М., Изд-во МГУ, 1974, 445 էջ. [21]
10. **Гришанин П. Ф.** Ответственность преступников-рецидивистов по советскому уголовному праву, Изд-во РИО Акад. МВД СССР М., 1974, 150 էջ. [42]
11. **Гукасян А. П.** Проблемы рецидивной и профессиональной преступности, учебно-методический комплекс, Ереван, 2014, 272 էջ. [7, 11, 79]

12. **Дагель П. С.** Неосторожность. Уголовно-правовые и криминологические проблемы, М.: Юрид. лит, 1977, 144 էջ. [41]
13. **Дядькин Д. С.** Теоретические основы назначения уголовного наказания. алгоритмический подход. СПб.. Юридический центр Пресс, Санкт-Петербург, 2006, 510 էջ. [97]
14. **Зелинский А. Ф.** Рецидив преступлений. Структура, связи, прогнозирование, Изд-во при Харьк. ун-та, Харьков, 1980, 152 էջ. [38]
15. **Иногамова Хегай Л. В.** Конкуренция норм уголовного права, Изд-во Щит-М, Москва, 1999, 288 էջ. [155, 172]
16. **Карнозова Л. М.** Медиация по уголовным делам в российской правовой системе, М.. МОО Центр «Судебно-правовая реформа», 2013, 25 էջ. [55]
17. **Кафаров Т. М.** Проблема рецидива в советском уголовном праве, Изд-во Элм, Баку, 1972, 256 էջ. [24, 38, 104]
18. **Кистяковский А. Ф.** Элементарный учебник общего уголовного права с подробным изложением начал русского уголовного законодательства. Часть общая, Изд-во Тип. И. и А. Давиденко, Киев, 1882, 972 էջ. [1]
19. **Козлов А. П., Севастьянов А. П.** Единичные и множественные преступления, СПб, Санкт-Петербург, изд.-во «Юридический центр-Пресс», 2011, 915 էջ. [40, 65]
20. **Коняхин В. П.** Теоретические основы построения Общей части российского уголовного права, СПб., Изд.-во «Юридический центр Пресс», Санкт-Петербург, 2002, 348 էջ. [3]
21. **Коробеев А.И.** Полный курс уголовного права. В 5 т. Т. 1, Преступление и наказание, СПб.. Юридический центр Пресс, 2008, 1133 էջ. [101]
22. **Красиков Ю. А.** Множественность преступлений. Учебное пособие, Изд.-во РИО ВЮЗИ, М., 1988, 96 էջ. [38, 58, 64]
23. **Кудрявцев В. Н.** Общая теория квалификации преступлений, Изд-во «Юридическая литература», М., 1972, 352 էջ. [22]
24. **Кудрявцев В. Н.** Теоретические основы квалификации преступлений, Изд-во юрид. лит-ры, М., 1963, 323 էջ. [57]

25. **Куринов Б. А.** Научные основы квалификации преступлений, Изд-во Моск. ун-та, М., 1984, 181 էջ. [38]
26. **Лесниевски-Костарева Т. А.** Дифференциация уголовной ответственности. Теория и законодательная практика, М., НОРМА, 2000, 400 էջ. [124]
27. **Лист Ф.** Задачи уголовной политики. Преступление как социально-патологическое явление. М., ИНФРА-М, 2004, 110 էջ. [13]
28. **Малков В. П.** Множественность преступлений и ее формы по советскому уголовному праву, Изд-во Казанского университета, Казань, 1982, 173 էջ. [26, 27, 66, 108]
29. **Непомнящая Т. В.** Назначение уголовного наказания. теория, практика, перспективы. СПб.. Юридический центр Пресс, 2006, 781 էջ. [100]
30. **Панько К. А.** Вопросы общей теории рецидива в советском уголовном праве, Изд-во Воронежского университета, Воронеж, 1988, 187 էջ. [59, 61]
31. **Пионтковский А. А., Меньшагин В.Д** Курс советского уголовного права, Т.2, Изд-во Госюриздат, М., 1959, 812 էջ. [59]
32. **Рарог А. И.** Субъективная сторона и квалификация преступлений, "Профобразование", М., 2001, էջ, 133 էջ. [41]
33. **Таганцев Н. С.** О повторении преступлений, СПб, Санкт-Петербург, Журн. М-ва юст., 1867, 296 էջ. [60]
34. **Таганцев Н. С.** Русское уголовное право, Санкт-Петербург, 1902, Изд-во «Автограф», Тула, Т.2, 2001, 688 էջ. [10]
35. **Титов Ю. П.** Хрестоматия по истории государства и права России. Учеб. пособие, М., «ПРОСПЕКТ» 1997, 472 էջ. [5]
36. **Ткачевский Ю. М.** Досрочное освобождение от наказания, М., Госюриздат, 1962, 136 էջ. [59]
37. **Ховард Зер** Восстановительное правосудие. новый взгляд на преступление и наказание. Пер с англ. / Под общ. ред. Л. М. Карнозовой, М.. МОО Центр «Судебно-правовая реформа», 2002, 142 էջ. [54]
38. **Черненко Т. Г.** Множественность преступлений по российскому уголовному праву,

Кемерово, Кузбассвуиздат, 2007, 203 էջ. [30]

39. **Чучаев А. И.** Комментарий к уголовному кодексу РФ, Москва, “ИНФРА\_М”, 2010, 1129 էջ. [127]

40. **Шаргородский М. Д.** Наказание по советскому уголовному праву, М., Госюриздат, 1958, 240 էջ. [59]

41. **Энрико Ферри**, Уголовная социология, Москва, “ИНФРА-М” 2016, 658 էջ. [110]

42. **Яковлев А. М.** Борьба с рецидивной преступностью, М., Наука, 1964, 223 էջ. [57]

43. **Яковлев А. М.** Совокупность преступлений по советскому уголовному праву, М., Госюриздат, 1960, 110 էջ. [108]

## **1.2. Առենախոսություններ և սեղմագրեր**

44. **Арзуманян А. Э.** Конкуренция норм российского права (вопросы теории и практики), автореферат дисс. канд. юрид. наук, Саратов, 2009, 29 էջ. [157]

45. **Бриллиантов А. В.** Дифференциация наказания: уголовно-правовые и уголовно-исполнительные проблемы: Дис. ... д-ра юрид. наук, М., 1998, 439 էջ. [103]

46. **Бытко Ю. И.** Учение о рецидиве преступлений в российском уголовном праве (История и современность), Дис. ... д-ра юрид. наук, Саратов, 1998, 303 էջ. [129]

47. **Васильева Е. Г.** Формы множественности по действующему уголовному законодательству: Дис. ...канд. юрид. наук, Ставрополь, 2005, 158 էջ. [28]

48. **Гарманов В. М.** Конкуренция уголовно-правовых норм при назначении наказания, автореферат дисс. канд. юрид. наук, Тюмень, 2002, 26 էջ. [154]

49. **Горбунова Л. В.** Обстоятельства, отягчающие наказание по уголовному законодательству России и зарубежных стран: Автореф. дис. канд. юрид наук, Самара, 2003, 24 էջ. [94]

50. **Городянская В. В.** Постпенитенциарный рецидив: Дис. ... канд. юрид. наук, Томск, 2011, 247 էջ. [67]

51. **Коротких Н. Н.** Рецидив как вид множественности преступлений в российском уголовном праве. Дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук., Владивосток, 2001, 209 էջ. [128]

52. **Поляков С. А.** Санкции в уголовном законодательстве: Автореф. дисс. на соиск.

учен. степени канд. юрид. наук. СПб., 1996, 24 էջ. [125]

53. **Серков П. П.** Смягчающие и отягчающие обстоятельства как средства обеспечения индивидуализации наказания: Автореф. дис. ...канд. юрид. наук, М., 2003, 28 էջ. [94]

54. **Тосакова Л. С.** Назначение наказания при рецидиве преступлений по действующему уголовному законодательству: дис. ... канд. юрид. наук, Казань, 1997, 222 էջ. [94]

55. Уголовный кодекс Голландии/Науч. ред. **Волженкин Б. В.**, СПб, Изд-во "Юрид. центр Пресс", 2001, 510 էջ. [78]

56. **Шевченко В. Ф.** Уголовно-правовая и криминологическая характеристика рецидивной преступности (на материалах Санкт-Петербурга): Автореф. дис. ... канд. юрид. наук, СПб., 1998, 24 էջ. [98]

57. **Юшков Ю. Н.** Множественность преступных деяний (вопросы квалификации и назначения наказания), Автореф. дисс. ... канд. наук, Свердловск, 1974, 27 էջ. [25]

### **1.3. Գիտական հանդեսների հոդվածներ և այլ տեսական աղբյուրներ**

58. **Волженкин Б. В.** Принцип справедливости и проблемы множественности преступлений по УК РФ // Законность, 1998, №12, 2-7 էջեր. [33, 82]

59. **Галиакбаров Р., Ефимов М., Фролов Е.** Множественность преступных деяний как институт советского уголовного права // Советская юстиция, 1967, №2, 5-11 էջեր. [23, 59]

60. **Голик Ю. В., Мирончик И. Я.** Неосторожный рецидив. Уголовно-правовой и криминологический аспекты // Уголовно-правовые меры борьбы с преступностью в условиях перестройки. Межвузовский сборник научных трудов, Изд-во Свердл. юрид. ин-та, Свердловск, 1990, 60–65 էջեր. [39]

61. **Зубакин В. Ю.** Институт рецидива преступлений как нарушение принципа равенства перед законом в системе уголовной ответственности // Российский следователь, 2006, N 8, 15-16 էջեր. [83]

62. **Коротких Н. Н.** Критерии деления множественности преступлений на виды // Академический юридический журнал, N 2 (56), Иркутск, 2014, 29-34 էջեր. [29]

63. **Кузнецова Н. Ф.** Профилактическая функция уголовного закона // Уголовное

право, 1998, N 1, 11-20 էջեր. [99]

64. **Малков В. П., Тосакова Л. С.** Назначение наказание при рецидиве преступлений // Российская Юстиция, N9, 1997, 35-37 էջեր. [150]

65. **Михлин А., Ромазин С.** Пути совершенствования законодательства о борьбе с рецидивом // Социалистическая законность, №3, М., 1984, 73-74 էջեր. [68]

66. **Пионтковский А. А.** Уголовное право (Пособие к лекциям), Часть Общая // Юридический вестник, Казань, 1913, 156-160 էջեր. [8]

67. **Севастьянов А.П.** Совместное применение специальных правил назначения наказания, установленных статьями 62, 63.1, 65, 66, 68 УК РФ // Пробелы в российском законодательстве, 3/2012, 150-154 էջեր. [151]

68. **Степашин В. М.** Общие начала и специальные правила назначения наказания // Вестн. Омского университета, Омск, 2005, N 1, 88-94 էջեր. [153]

69. **Утевский Б. С.** Преступность и рецидив // Современная преступность (преступление, пол, репрессия, рецидив), М., 1927, 27-45 էջեր. [50]

70. **Чучаев А. И., Буранов Г. К.** Рецидив преступления и наказание // Журнал российского права, 2000, N 2, 32-44 էջ. [95]

71. **Шкредова Э. Г.** Формирование норм о множественности преступлений в рамках некодифицированного уголовного законодательства России (X-XVIII вв.) // Журнал Вестник, ОГУ N3/МАРТ, Оренбург, 2006, 185-187 էջեր. [2, 4, 6]

## **2. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ**

### **2.1. Միջազգային փաստաթղթեր**

72. «Ազատագրկված անչափահաս անձանց պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները («Հավանայի կանոններ») (14.12.1990).

73. «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ») (29.11.1985).

74. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (20.11.1989).

75. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (04.11.1950թ.).

76. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային



դաշնագիրը (16.12.1966թ.).

77. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկ քաղաքում կնքված կոնվենցիան (22.01.1993).

78. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնև քաղաքում կնքված կոնվենցիան (07.10.2002).

## **2.2. Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր**

79. ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118.

80. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշում, ՀՀՍԴՏ 2006/3.

81. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 11-ի թիվ ՍԴՈ-882 որոշում, ՀՀՊՏ 2010.05.19/21(755) Հոդ.521.

82. ՀՀ քրեական օրենսգիրք (18.04.2003), ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407.

83. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (01.07.1998), ՀՀՊՏ 1998.09.21/22(55).

84. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (03.04.2002թ.), ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ. 344.

85. ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգիրք (07.03.1961, ուժը կորցրել է 01.08.2003).

## **2.3. Օտարերկրյա իրավական ակտեր**

86. Ավստրիայի քրեական օրենսգիրք (1974) // Austria\_CPC\_1975\_am2016\_de.

87. Բելառուսի քրեական օրենսգիրք (1999) // Belarus\_CC\_am2016\_ru.pdf.

88. Բոսնիա և Հերցեգովինայի քրեական օրենսգիրք (2003) // <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>.

89. Բուլղարիայի քրեական օրենսգիրք (1968) // <http://lex.bg/laws/ldoc/1589654529>.

90. Գերմանիայի քրեական օրենսգիրք (1971) // <https://www.gesetze-im-internet.de/stgb/StGB.pdf>.

91. Թուրքմենստանի քրեական օրենսգիրք (1997) // [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31295286#pos=1;-173](https://online.zakon.kz/Document/?doc_id=31295286#pos=1;-173).

92. Իսպանիայի քրեական օրենսգիրք (1995) // Spain\_CC\_am2013\_en.
93. Լատվիայի քրեական օրենսգիրք (1998) // <http://likumi.lv/doc.php?id=88966>.
94. Լեհաստանի քրեական օրենսգիրք (1997) // Poland\_CC\_1997\_am2016\_pl.
95. Լիտվայի քրեական օրենսգիրք (2000) // <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.111555/OTzspIIVXy>.
96. Ղրղզստանի քրեական օրենսգիրք (1997) // Kyrgyzstan\_CC\_1997\_am2017\_ru.
97. Մոլդովայի քրեական օրենսգիրքը (2002) // Moldova\_CC\_2002\_am2017\_ru.pdf.
98. Ռումինիայի քրեական օրենսգիրք (2009) // <http://legeaz.net/noul-cod-penal/>.
99. Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք (1996) // [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/).
100. Սլովակիայի քրեական օրենսգիրք (2005) // <http://www.zakonypreludi.sk/zz/2005-300>.
101. Սլովենիայի քրեական օրենսգիրք (2008) 2017 // <http://www.pisrs.si/Pis.web/pregledPredpisa?id=ZAKO5050>.
102. Վրաստանի քրեական օրենսգիրք (1999) // Georgia\_CC\_1999\_am2016\_ru.
103. Ֆրանսիայի քրեական օրենսգիրք (1992) // <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>.
104. ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշում // <http://base.garant.ru/1352925/#friends>.
105. ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ Ն. Վ. Վիտորուկի հատուկ կարծիք // <http://base.garant.ru/1352925/#friends>.
106. ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ Ա. Լ. Կանոնովի հատուկ կարծիք // <http://base.garant.ru/1352925/#friends>.
107. ՌԽՖՍՀ 1922 թվականի քրեական օրենսգիրք (ուժը կորցրել է 01.01.1927 թվականից) // <http://www.library.ru/help/docs/n10349/yk1922.txt>.
108. ՌԽՖՍՀ 1960 թվականի քրեական օրենսգիրքը // <http://base.garant.ru/10107062/>.

## **2.4 . Այլ փաստաթղթեր**

109. Бюллетень Верховного Суда РСФСР, 1977, № 6.
110. Уголовное уложение, Санкт-Петербург (22.03.1903).
111. Русская группа международного союза криминалистов. Общее собрание группы в Москве 21-23 апреля 1910, СПб., 1911.
112. ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի՝ 1976 թվականի հունիսի 25-ի պարզաբանում, № 4.
113. ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, Երևան, 2015 թվական <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81318>.
114. ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ, Երևան, 2017 թվական.
115. ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N58 (29.11.2016 թվականի խմբագրությամբ) «ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» որոշում [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_190932/36245df60f7688e59149f564045c228dfa9e8587/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_190932/36245df60f7688e59149f564045c228dfa9e8587/).
116. ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ 2007 թվականի հունվարի 11-ի N2 «ՌԴ դատարանների կողմից պատիժ նշանակելու պրակտիկայի մասին» որոշում <https://rg.ru/2007/01/24/nakazaniya-dok.html>.
117. ՌԴ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի 2009 թվականի առաջին կիսամյակի պրակտիկայի ամփոփում [http://www.supcourt.ru/vscourt\\_detale.php?id=6016](http://www.supcourt.ru/vscourt_detale.php?id=6016).
118. Հանցավորության վիճակն ԱՊՀ անդամ-պետությունների տարածքում 2004-2010 թվականներին, Վիճակագրական ժողովածու, ՌԴ ՆԳՆ, 2011թ., էջ 15-16.

## **2.5. Դատական պրակտիկայի նյութեր**

119. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ The sunday times v. the united kingdom գործով 26.04.1979 թվականի վճիռ.
120. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ CANTONI v. FRANCE գործով 15.11.1996 թվականի վճիռ.
121. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ E.K. v. TURKEY գործով 07.02.2002 թվականի վճիռ.

122. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ՍԴ/0109/01/12 որոշում.
123. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կայացված թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշում.
124. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կայացված թիվ ԿԴ1/0059/15/13 որոշում.
125. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշում.
126. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կայացված թիվ ԿԴ1/0059/15/13 որոշում.
127. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացրած թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշում.
128. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ին կայացված թիվ ԵԱԲԴ/0161/01/13 որոշում.
129. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 26-ին կայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին թիվ ԵԿԴ/0080/01/16 որոշում.
130. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ին կայացված թիվ ՍԴ/0204/01/13 որոշում.
131. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կայացված թիվ ԵԷԴ/0119/01/13 որոշում.
132. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ԿԴ3/0006/01/12 որոշում.
133. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԼԴ4/0031/01/16 որոշում.
134. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 26-ին կայացված թիվ ՎԲ-149/07 որոշում.
135. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ին կայացված թիվ ԼԴ/0039/01/15 որոշում.
136. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ին կայացված թիվ

ՏԴ/0071/01/13 որոշում.

137. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ/0071/01/13 գործով որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Հ.Ասատրյանի հատուկ կարծիք.

138. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ/0071/01/13 գործով որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Ա.Պողոսյանի հատուկ կարծիք.

139. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 9-ին կայացված թիվ ԿԴ3/0006/01/12 որոշում.

140. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԱՎԴ2/0010/01/15 որոշում.

141. Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ին կայացված թիվ ԱՎԴ2/0025/01/15 դատավճիռ.

142. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ին կայացված թիվ ԱՎԴ2/0010/01/15 դատավճիռ:

143. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ին կայացված թիվ ԵԱԴԴ/0073/01/14 դատավճիռ.

144. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ին կայացված թիվ ԵԷԴ/0090/01/16 դատավճիռ.

145. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 8-ին կայացված թիվ ԵԿԴ/0080/01/16 դատավճիռ.

146. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ին կայացված թիվ ԵՄԴ/0129/01/15 դատավճռ.

147. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 3-ին կայացված թիվ

ԵՄԴ/0001/01/17 դատավճիռ.

148. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ին կայացված թիվ ԵՇԴ/0196/01/15 դատավճիռ.

149. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի ապրիլի 3-ին կայացված թիվ ԿԴ3/0006/01/12 դատավճիռ.

150. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ին կայացված թիվ ԿԴ1/0130/01/14 դատավճիռ.

151. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016թ. սեպտեմբերի 8-ին կայացված թիվ ԿԴ1/0054/01/16 դատավճիռ.

152. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ին կայացված թիվ ՏԴ2/0044/01/16 դատավճիռ.

153. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 7-ին կայացված թիվ ՏԴ1/0025/01/17 դատավճիռ.

154. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 4-ին կայացված թիվ ՏԴ1/0079/01/16 դատավճիռ.